

ԲԳԿԲ ԽԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ժ. 21

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿ
ԴԵՔՏԱՐԵՎԻ ՁԵՌՔԻ ԳՆԴԱՅՐԻ
ԳՆԴԱՅՐՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1934


29 JAN 2018

ԲԳԿԲ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿ
ԴԵԳՏՅԱՐԵՎԻ ՁԵՌՔԻ ԳՆԴԱՅՐԻ
ԳՆԴԱՅՐՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ
Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ

4-րդ ՎԵՐԱԾՇՆԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ
ԹԱՐԳՄԱՆԵՑ Լ ՄԿՐՏՁՅԱՆ

Համաձայնեցված է 1932 թվի հրաձգությունների կուրսի հետ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1934

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳՆԴԱՑՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՏԿՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

1. Դեղտյարեվի սիստեմի ձեռքի գնդացիքը նշանակված է Գորմալ (5-6 ձի) և կարն (2-3 ձի) բռնկումներով հրաձգության համար, սակայն, բացառիկ դեպքերում թույլ է տալիս կրակելու հաս-հատ ձիերով և ամբողջ պահեստաբանով:

2. Շնորհիվ փոքր քաշի (մոտ 7 կգ) և փոքր չափի, Դեղտյարեվի ձեռքի գնդացիքը հեշտությամբ կարող է ամեն տեղ լինել դասակի հրաձգային ջոկերի հետ, սպասարկելով նրանց իր կրակով միջին (800 մ) և մեծավոր (400 մ) հեռավորությունների վրա:

3. Դեղտյարեվի սիստեմի ձեռքի գնդացիքը հեշտությամբ թույլ է տալիս կրակ վարելու տեղական բարձր առարկաների վրայից (տանիք, ծառ ետլին), նմանապես և հակառակորդի ցածրացող (600 մ ավելի ցած) սավառնակների դեմ:

4. Գնդացրի մարտական արագաձգությունը 100-150 ձի է մեկ ընդհանրում: Հրաձգության տեմպը մոտ 600 ձի է մեկ ընդհանրում:

5. Դեղտյարեվի սիստեմի գնդացրի տրամաչափը (կալիբրը) փողանցքի կազմությունը և փամփշտի տիպարը նույնն է, ինչ և 1891 թվի տիպարի հրացանները:

6. Գնդացրի նշանոցային հասողությունը (նշանոցի բաժանումները մետրերով) 1500 մ է:

7. Գնդացրի քաշը 7,1 կգ է, նեցուկի քաշը 0,7 կգ է, պահեստաբանինը՝ առանց փամփշտի՝ 1,4 կգ է, պահեստաբանի քաշը լրիվ թվով փամփռաներով (տ. § 35)՝ 2,5 կգ է:

Մարտում կամ չեթում գնդացիքը պահանջում է չերկու համարի սպասարկում, չհաշված փամփռակիրներին:

Ընդհանուր առմամբ Դեղտյարեվի սիստեմի ձեռքի գնդացիքն իրենից ներկայացնում է այդ տիպի զենքի ամենից կատարելագործված տիպարներից մեկը, իր ձգաբանական հատկություններով, պարզ կազմությամբ և գործածության հարմարությամբ վոչ միայն չի զիջում, այլև զերազանցում է այդ տիպի զենքի արտասահմանյան տիպարներին:

Պատ. խմբագիր՝ Մ. Դավթյան
Թարգմանիչ՝ Հ. Մկրտչյան

Տեխ. խմբագիր՝ Գ. Չևյան
Սրբագրիչ՝ Հ. Մանավադյան

Դիպլիտ № 8466 (բ), հրատ. № 2898, պատվեր № 527, տիրաժ 2000.

Հանձնված է արտադրություն 27 փետրվարի 1934 թ.

Ստորագրված է տպելու 11 հունիսի 1934 թ.

Պետհրատի տպարան, Յևրեվան



11-249229

ԳՆԴԱՅՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Դեգսյաբեվի սխտեմի ձեռքի գնդացիներն իր կազմութեամբ պատկանում են անշարժ փող ունեցող ավտոմատիկ զինքի տիպարներին: Ավտոմատիկ իրականացվում է նրանով, վոր փողի վրայ յեղած հատուկ անցքի միջով վառողի գազերի մի մասը լետ է գնում և ներգործում է շարժական փակաղակի և շրջանակի հետ միացած շարժական մխոցի վրա:

10. Գնդացիները լցվում են պահեստարանի ոգնութեամբ:

11. Գնդացիներն փողը, ձգի ժամանակ վորը գնդակին ուղղութեան է տալիս, ինչպես և հրացանինը, ակոսավոր փողացիք ունին:

12. Փողի պաղհցումը կատարվում է ողի միջոցով, վորպիսին ուժեղանում է շնորհիվ փողի կողմից մակերեկվույթի:

13. Փողը միացած է փողատուփի հետ և նրա յերկարութեան մեծ մասը գետնիցված է պահանքի մեջ. պատյանի յերկայնակի կտրուկներին միջով ուղը լավագուցն ձեռով փոփոխվում է փողի շուրջը:

14. Փողատուփի վրա ամրացված է նեանցքը, վորը բաժանված է հարչուրական մետրերի, 1-ից մինչև 15, չուրաքանչյուր 50 մետրից հետո. հասիկն ամրացված է պահանքի վրա:

15. Փողատուփին յետևի կողմից միացված է կորը՝ վայրիջուց Երջանակով: Փողատուփի ներսում յետ ու առաջ է շարժվում փակաղակային Երջանակը՝ փակաղակի և գազամխոցի ձողի հետ:

16. Հրաձգութեան համար գնդացիները հաստատվում են նեցուկի վրա:

17. Գնդացիների մեխանիզմների աշխատանքն ընդհանուր առմամբ տեղի յե ունենում հետևյալ կերպ.

Ձգի մոմենտին փամփշտանոցի կողմից փողն ամուր փակված է փակաղակով: Յերբ փողանցքով շարժվող գնդակն անցնում է գազածակի վրայից, գնդակի յետևից յեկող վառողի գազերի մի մասն աչգ ծակով թափանցում է գազախցիկը և յետ է հրում գազամխոցը: Մխոցը յետ է գնում և իր ձողով դեպի յետին դրութեանն է տանում փակաղակային Երջանակը փակաղակի հետ միասին: Գազամխոցի ձողի վրա հայցրած յեսաղարձ գազանակը սեղմվում է: Փակաղակը դեպի յետ գնալիս փամփշտանոցից ճանկում է կրակած պարկուճը, վորն իր գնդակով դիպչում է անդրաղարձիկին և ցած է շարժում գնդացիների միջից:

Հենց վոր վերջանում է գազերի ներգործութեանը, յեսաղարձ.

պապանակը լայնանում է և իր ուժով հարկադրում է, վոր գազամխոցը, փակաղակային Երջանակն ու փակաղակը շարժվեն դեպի առաջ: Առաջ շարժվելիս փակաղակը պահեստարանի ընդունիչից ճանկում է հերթական փամփշտը, մղում է դեպի փողի փամփշտանոցը և այնուհետև փակում է փողը:

Ձարկանը դեռևս շարունակելով փակաղակային Երջանակի հետ առաջ շարժվել յետադարձ զսպանակի ուժով, իր ասեղով ջարդում է փամփշտի պատիճը, վորից և առաջանում է հետևյալ ձիգը, իսկ ձգից հետո մասերը յետ են գնում և գնդացիները նորից լցվում է նոր ձգի համար: Անընդմեջ հրաձգութեանը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն դադարել գնդացիների վայրիջուց ձգանքի վրա սեղմելուց կամ քանի դեռևս, պահեստարանը չի դատարկվել: Վայրիջուց ձգանքի վրա սեղմումը դադարեցնելու մոմենտին գնդացիները մնում են լցված: Փակաղակը մնում է ծայրահեղ յետևի դրութեան վրա:

ԳՆԴԱՅՐԻ ՄԱՍԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

18. Փող (նկ. 1): Տրամաչափը 7,62 մմ (3 գծ.) է: Փողանցքը նույն ձևն ունի, ինչ և 1891 թ. տիպարի հրացանինը:

Փողի միջին մասը կողմավոր մակերեկվույթ ունի, վորը ծառայում է փողը լավագուցն ձեռով հովացնելու համար հրաձգութեան ժամանակ: Կողավոր մակերեկվույթի առջևում, փողի վրա գտնվում է գազախցիկը, վոր զետեղված է փողի գազածակի դիմացը:


Փողաբերների մասում փորակներ է պատրաստված բոցամարիչը փողի վրա պտուտակիլու համար: Առանց բոցամարիչի կրակելու դեպքում փողաբերների փորակները փչանալուց ապահովելու համար ծառայում է մի հատուկ մուֆտա, վորը պտուտակվում է փողաբերանի վրա: Նույն աչգ փողաբերանի մասում կտրուկներ են պատրաստված բանալիի համար, վորով փողն անջատում են գրգռացրի քանդելու ժամանակ:

Կողավոր մակերեկվույթի յետևում կան ընդհատան օղանկի յելուկներ, վորոնց միջոցով փողը միանում է փողատուփի հետ և փոս՝ փողի ավտոմատիկ փակիչի համար, վորն ամրացնում է փողը և նրան չի թողնում ոլորվելու: Փողի յետևի կտրվածքի վրա յերկու փոս կա, մեկը նետիչի, իսկ մյուսը փակաղակի մղիչի համար:

19. Գազախցիկը պտուտակված է ամրացված է փողի վրա և ծառայում է վառողի գազերից մի մասը փողից ներս քաշելու համար: Գազախցիկի մեջ մացված է կանոնավորիչը, իսկ առջևի

մասում շինված եքստը, վոր միացած լինելով պատյանի հետ, պահում է փողը:

Կանոնավորիչը (նկ. 1) բացի յերկայնակի անցքից ունի յերեք ծակ՝ 3, 4 և 5 մմ տրամագծով, վորոնք գնդացրով կրակելու ժամանակ հաստվում են փողի գազածակի դիմացը: Կանոնավորիչի ողաձև յելունի վրա գազածակերը նշանակված են համապատասխան թվերով: Կանոնավորիչը պահանջված հաստման վրա դնելու համար նրա վրայի համապատասխան թիվը համատե-



Նկ. 1 Փողը. 1—հրահատուկ ողակաձև յելուններ, 2—մուֆտա, 3—կողավոր մակերևույթ, 4—կանոնավորիչ, 5—կանոնավորիչի մանեկը, 6—փակիչի թասակը 7—փողի ավտոմատիկ փակիչը, 8—փակիչի զսպանակը, 9—բոցամարիչը, 10—կարուններ:


ղում են գազախցիկի աջ կողմի խաղի հետ: Նորմալ ձևով գնդացրից հրաձգությունը կատարում են գազերը ցած թողնելով 3 մմ տրամագիծ ունեցող գազածակի միջով:

Այն դեպքում, շարժական մասերը բավականաչափ չնռանգով չեն չեն գնում, կարելի չե կամոնավորիչը հաստել ցանկացած գազածակի վրա և զրանով կանոնավորել գազերի ցած թողումը փողի միջից:

Կանոնավորիչը յետ պտուտակելուց ապահովելու համար նրա վրա կտրուճներ են արված, վորոնց մեջ մտնում է գազախցիկի յելունը: Կանոնավորիչի առջևի ծայրը փորակված է մանեկի համար և ծակեր ունի մանեկի օպլիսի համար:


20. Պատյանը (նկ. 2) բաղկացած է միմյանց հետ միացած յերկու խողովակից: Վերին խողովակի մեջ զետեղվում է փողը, իսկ ներքևի փողը տրամագիծ ունեցող խողովակի մեջ զետեղվում է գազամթոցն ու յետադարձ զսպանակը: Պատյանի առջևի մասում ամրացված է հասիկը, յետևի մասում վերևից ամրացված է հենարան՝ պահեստաբանի համար, իսկ կողքից ամրացված է փողը: Պատյանի առջևում ներքևից կտրուցներ կան գազախցիկի զետեղման համար: Պատյանի լայն խողովակի յերկայնությամբ յերկայնակի կտրուցներ են շինված, վորպեսզի փողի շուրջը լեղած

ողը լավագույն ձևով փոխանակվի թարմ ոդով: Պատյանի յետևի մասը վերջանում է փակվածով, վորով պատյանը պտուտակվում է փողատուփի վրա և նրա հետ խուլ կերպով ամրացվում է պտուտակով:



Նկ. 2. Փողատուփը և պատյանը

21. Հասիկը (նկ. 3) նշանացույցի հետ միասին ծառայում է գնդացրի նշանառության համար: Հարվածներից նա պաշտպանված է ապահովիչով: Փորձնական հրաձգության ժամանակ հատիկն ըստ բարձրության շարժելու համար հատիկն ունի պտուտակավոր ծայր: Հատիկն աջ ու ձախ շարժելու համար աջ կողմից մի պսուսակ կա, վորի պտուկելու ժամանակ ապահովիչը շարժվում է աջ կամ ձախ, իսկ նրա հետ միասին շարժվում է նաև հատիկը:



Նկ. 3 Հատիկ

22. Փողատուփը (ընդհանուր տեսքը՝ նկ. 2), ծառայում է գնդացրի մասերը միացնելու համար: Փողատուփի առջևի մասում փակող կա, վորի վրա պտուտակված է պատյանը: Փողատուփի յետևի մասին միացած է կորը՝ վայրիջուց օրջանակի հետ միասին: Փողատուփի յետևի մասում ներքևից կան ուղղաձիգ փորսանք, վորոնց մեջ մտնում են վայրիջուց շրջանակի յետևի պատի կողերը, իսկ ցածից կետեր ունի, վորոնց մեջ մտնում են վայրիջուց շրջանակի առջևի ծայրերը: Փողատուփի հետ միացած կոթն ամրացնելու համար փողատուփերի պատերի վրա յետևում յեղիւ ծակ կա կոթի պտուտակի համար: Կոթի միացնող պտուտակը յետ պտուտակվելուց ապահովելու

համար փողատուփի աջ կողմում, ծակի առջևում բուն և շինված միացնող պտուտակի բռնակի ներսի կողմում գտնվող պսուկի համար: Փողատուփի առջևի մասում կողքերից յերկու ծակ կա ավտոմատիկ փակիչի մասնելու համար, վորը փողն ու փողատուփը միմյանց հետ միացնելուց հետո ամրացնում և փողը և չի թողնում նրան ոլորվելու: Փողատուփի առջևի մասի ներսում կան ընդհատուն ողաձև յելուններ, վորոնց շնորհիվ փողը միանում և փողատուփին: Արտաքին կողմից, վերևից փողատուփին ամրացված են նեանտույցի հիմքը և պահեստարանի մղակը: Մղակի առջևում պատուհան և շինված պահեստարանի ընդունիչի համար: Պատուհանը փակվում և վահանիկով, վորը շարժվում և փողատուփի վրա՝ նրա համար պատրաստած փորատներով: Ներքևից փողատուփի առջևի մասը յերկու վեռանալիկ ունի, վորոնք ընդգրկում են պատյանը: Վերածուլիկների մեջ առջևի կողմից յերկու փոս կա, վորոնց մեջ են մտնում պատյանի յելունները, պատյանը փողատուփի հետ անշարժ միացնելու համար:

Փողատուփի ներսում զետեղված են փակաղակը, փակաղակային շրջանակը և անդրադարձիկը:

Փակաղակային շրջանակի շարժվելու համար կան յեկայնակի փառսնեք, վորոնք գտնվում են փողատուփի ներսում՝ ներքևից, վորոնց միջով սահում և փակաղակային շրջանակին էր կողերով:

Փակաղակով փողն ամուր փակելու համար, փողի ներսում, յերկու կողմից շինված են մաքսակա յեքսակները, վորոնց վրա հենվում են փակաղակի մարտական յելունները փակաղակով փողը փակելու ժամանակ: Փողատուփը տակից բաց և, վորպեսզի անդրադարձիկն ազատ կերպով պարկուճները դուրս նետի հրաձգելու ժամանակ:

23. Նեանոցը (նկ. 4) բաղկացած և նշանոցի կոճղակից, նշանոցային շրջանակից՝ անրիկով և նշանոցի զսպանակից:

Նեանոցի կոճղակը իբրև հիմք և ծառայում նշանոցի համար: Նա յերկու յելուններին միջոցով անշարժ միացած և փողատուփի հետ: Նրա ներսում զետեղված և պահեստարանի մղակը:


Նեանոցի Երջանակը գամիկով միացած և նշանոցի կոճղակին: Շրջանակի վերևի կողմում փորագրված են նշանոցի բաժանումները մեթորով՝ 1-ից մինչև 15*): Բացի դրանից ալստեղ

*) Մինչև 1930 թ. պատրաստած գնդացիներին նշանոցների բաժանումները քայլերով և արված, 2-ից մինչև 20: Այդ նույն գնդացիներին նշանոցներն ունեն շարժական ուղղան:

Ուղղանը պտուտակի ոգնությունը կարելի չե աջ ու ձախ շարժիլ, նստած

միջանկյալ կարճ բաժանումներ (խաղեր) կան նշանոցը մինչև 50 մ ճշտությամբ հաստելու համար: Նշանոցի շրջանակի կողքերից առավել են շինված նշանոցի անրիկը նշանոցի հարկավոր բաժանման վրա պահելու համար:

Նեանոցի անրիկը հազցված և նշանոցի շրջանակի վրա. անրիկն ունի յերկու մղակ՝ զսպանակներով, անրիկը հրաձգության համար հարկավոր դրույթյան մեջ պահելու համար:



Նկ. 4. Նշանոց. 1—Անրիկ, 2—պահեստարանի մղակի յետի յելունը նշանոցի ապահովչով, 3—նշանոցի տուփը, 4—պահեստարանի մղակը:

Նշանոցը հրաձգության համար հաստելու համար պետք և անրիկի առջևի յեզրը համատեղել նշանոցի շրջանակի ալս բաժանման հետ, վորը համապատասխանում և հրաձգության հեռավորությունը:

Նշանոցի զսպանակը ծառայում և նշանոցի շրջանակը նշանոցի կոճղակի վրա պահելու համար: Չսպանակի առջևի մասում կա մի կրակի, վորով զսպանակը մտցվում և նշանոցի կոճղակի վրա յեղած փոսի մեջ:

24. Պահեստարանի մղակը (ընդհանուր տեսքը՝ նկ. 4) ծառայում և պահեստարանը գնդացիի վրա պահելու համար: Նա ամրացված և նշանոցի առջևում: Պահեստարանի մղակն ունի գլուխ՝ մղակը դեպի յետ քաշելու համար, նշանոցի ապահովիչ՝ և առջևից կեռի, վորն ընկնում և պահեստարանի ընդունիչի յելունի վրա և դրանով պահեստարանը պահում և գնդացիի վրա:

Գերլիպցիային և կողքի քամուն: Ուղղանի յետի մասում խաղեր են գծված ուղղանը հաստելու համար հրաձգության ժամանակ: Ուղղանի տեղադրվածը մեկ խաղով գնդակը մի կողմ և խոտորում հրաձգության հեռավորության 0,002 (յերկու հազարերորդականի) շափով:

Նշանոցի կոճակի ներսում դետեղված և զսպանակը, վորը պահեստարանի մղլակին հարկադրում և առաջ մղվել պահեստարանը պահելու համար:

25. Վահանիկը (նկ. 5) ծառայում և փողատուփի փամփուշտանոցի պատուհանը փակելու և նրա մեջ կեղտ ընկնելուց ապահովելու համար: Յետ ու առաջ շարժելու համար վահանիկի վրա չերկու փոս կա:

Փողի ավտոմատիկ փակիչը (նկ. 6) ծառայում և նրա համար, վոր փողն ուղղվելու հնարավորություն չունենա և չանջատվի փողատուփից: Նրա մեկ ծայրը պտուտակավոր և փակիչի թասակն իր հետ միացնելու համար, մյուս ծայրը յեղուն ունի, վորը զսպանակի ներգործությամբ մտնում և փողի համապատասխան կտրուկի մեջ: Փակիչի միջին մասը սառված և, վորպեսզի ազատ կերպով փողը միանա փողատուփի հետ գնդացրի սարքելու ժամանակ:



Նկ. 5. Վահանիկ:

Նկ. 6. Փողի փակիչը

Նկ. 7. Կորի միացնող պտուտակը


Կորի միացնող պտուտակը (նկ. 7) ծառայում և կոթը փողատուփի հետ միացնելու համար: Նրա մեկ ծայրը պտուտակավոր և, մյուս ծայրը բռնակ ունի, իսկ բռնակի ներքին կողմում պտուկ կա: Պտուտակի միջին մասը սառված և, վորպեսզի փակողակի յետ գնալու ժամանակ զարկանի չեռևի մասը չդիպչի ալդ մասին:

26. Փակաղակը (նկ. 8) ծառայում և փամփուշտը դեղի փամփուշտանոց մղելու, ձգի ժամանակ փողը փակելու, ձիգ կատարելու և կրակած պարկուճը դուրս հանելու համար: Փակաղակը բաղկացած և կմախքից, չերկու մարտական հենարանից, զարկանից և նետիչից՝ զսպանակով:


Փակաղակի կմախքը կմախքի առջևի կտրվածքն ունի քառ պտակով փամփուշտի գնդակի համար և ծակով՝ զարկանի ասեղի չերկի համար: Կմախքն առջևի մասում տակից կտրուն ունի, վորտեղ գետեղված և նետիչն իր զսպանակով. աչուհետև տակից մի յեղուն կա, վորի շնորհիվ փակաղակը կարողանում և դեպի չեռ

շարժվել, փակաղակի շրջանակի շարժման դեպքում: Կմախքը վերևից ունի կատար՝ մղիչով, վորը փակաղակի առաջ շարժվելու ժամանակ ճանկում և պահեստարանի ընդունիչից հերթական փամփուշտը և մղում և փամփուշտանոց. կատարի վրա վերևից շինված և անդրադարձիկի փորսքը: Կմախքի չերկու կող

փակաղակի կմախքը





զարկան




չաի մարտական հենարան

աջ մարտական հենարան



Նետիչ

Նետիչի զսպանակ



Նկ. 8. Փակաղակի մասերը

մից կան փորվածքներ՝ մարտական հենարանների համար և ծակեր՝ զարկանի հաստ մասի չերկի համար. զարկանի հաստ մասը ծառայում և մարտական հենարաններն աջ ու ձախ տալու համար, չերկ փակաղակը փակում և փողանցը: Կմախքի ներսում փողանց կա, վորտեղ գետեղվում և զարկանը:

Զարկանը ծառայում և փամփուշտի պատիճը շարժելու և մարտական հենարաններն աջ ու ձախ տալու համար: Զարկանն իր չեռևի մասում ունի գդակ և կողքի կտրուկներ, վորոնց միջոցով միանում և փակաղակի շրջանակի մուխակի հետ. զարկանն իր

առջևի մասում հաս մաս ունի, վորը ծառայում է փակաղակի մարտական հենարաններն աջ ու ձախ տալու համար: Զարկանի միջին մասը տաշվածք ունի, վորը հնարավորութիւն է տալիս: զարկանը յետ քաշելու ժամանակ մարտական հենարաններն իրար մոտեցնելու:

Ասեղն սուսնձին է, զարկանի հետ խուլ կերպով միացած է գամիկով:

Մարտական հենարանները ծառայում են փակաղակով փողանցքը փակելու համար: Մարտական հենարանները միացած են փակաղակի կմախքին: Մարտական հենարանները ներսի կողմից ունեն յելուցներ, վորոնց վերին մասը ծառայում է հենարաններն աջ ու ձախ տալու համար՝ զարկանի հաստ մասի ներգործութեան տակ: յելուցների ներքևի մասը ծառայում է հենարաններին իրար մոտեցնելու համար՝ փակաղակի շրջանակի հատակի վրա յեղած փոսի ներգործութեան տակ:

Նեխիչը ծառայում է փողի փամփշտանոցից կրակած պարկուճները հանելու համար: Նետիչն ունի կեռիք, վորով ճանկում է փամփշտանոցում գտնված պարկուճի գզակը: Նետիչի զսպանակը ծառայում է նրա համար, վոր փամփշտանոցից պարկուճը հանելու ժամանակ կեռիքը պարկուճի գզակից պոկելու հնարավորութիւնն չունենա և վորպեսզի նետիչն իր տեղում մնա:

27. Անդրադարձիկը

(նկ. 9) ծառայում է կրակած պարկուճները գնդացրից անդրադարձնելու համար: Նույն դեպքում է փողապատի ներսում՝ նշանոցի տակ:

անդրադարձիկ




անդրադարձիկի զսպանակ

Նկ. 9. Անդրադարձիկը և նրա զսպանակը

28. Փակաղակային օրջանակը (նկ. 10) ծառայում է փակաղակի շարժվելու համար: Փակաղակային շրջանակն իր առջևի մասում միացած է գազամխոցի ձողի հետ: Յետևի մասում շրջանակին միանում է գարկանը, վորի համար ծառայում է փակաղակային շրջանակի վրայի մուրակն իր կտրուկով: Աջ կողմից փակաղակային շրջանակն ունի բռնակ: Շրջանակի ամբողջ յերկայնութեամբ կողքերից գտնվում են կողերը, վորոնցով շրջանակը շարժվում է փողատուփի փորատներով: Փակաղակային շրջանակի հատակի վրա կան հետևյալ մասերը. պատուհան, վորի միջով դուրս են նետվում կրակված պարկուճները, և յերկու փո-

վածի: Առաջին փորվածքը թեթևութեան համար է, իսկ յերկրորդը՝ փակաղակի մարտական հենարաններն իրար մոտեցնելու համար է, յորը փակաղակն անջատվում է փողատուփից: փակաղակային շրջանակը տակից ունի մարտական վոսֆ:



Նկ. 10. Փակաղակային շրջանակը՝ գազամխոցի հետ:

29. Գազամխոցը (նկ. 10) ծառայում է հրաձգելու ժամանակ վառողի գազերի ճնշումը գնդացրի շարժական մասերին փոխանցելու համար: Գազամխոցի առջևի մասում լայնաբերան խողովակ կա վորի մեջ է մտնում կանոնավորիչի փողակը: Միջին մասում կտրուկներ կան բանալիի համար (մխոցը յետ պտուտակելու համար): Մխոցի յետևի մասը պտուտակավոր է ձողի հետ միանալու համար. բացի դրանից մխոցի յետևի մասում նդոս կա, վորտեղ մտնում է յետադարձ զսպանակի ծայրը. այդ փորվածքը ծառայում է նրա համար, վոր մխոցը ձողի վրայից յետ չպտուտակվի:


30. Գազամխոցի ձողը ծառայում է մխոցը փակաղակային շրջանակի հետ միացնելու համար: Մխոցի առջևի ծայրում յերկայնակի փորակ կա, վորի մեջ մտնում է յետադարձ զսպանակի ծայրը:

Գնդացրը սարքելու ժամանակ ձողի վրա հազցնում են մուֆտան և յետադարձ զսպանակը:

31. Մուֆտան (նկ. 10) ծառայում է իբրև անշարժ հենարան յետադարձ զսպանակի համար, յորը վերջինս սեղմվում է գնդացրի շարժական մասերի յետ գնալու ժամանակ: Մուֆտան ունի պոչ և յելուցներ՝ փողատուփի հետ միանալու համար:

32. Յետադարձ զսպանակը, ինքն ևս մարտական զսպանակը (նկ. 10) ծառայում է յետահարվածից հետո գնդացրի շարժական մասերն առաջ տանելու համար. միաժամանակ նա մարտական զսպանակի դեր է կատարում: Զսպանակի առջևի ծայրը կողմած է և մտնում է գազամխոցի ձողի յերկայնակի փորքի մեջ, արգելք հանդիսանալով, վոր զսպանակն ոլորվի, կամ թե գազամխոցը յետ պտուտակվի:




33. Կոթը վայրիջուց Երզնանով. (նկ. 11) կոթը ծառայում է գնդացրով գործելու համար, իսկ վայրիջուց շրջանակը՝ վայրիջուց մեխանիզմի ղեկավարման համար: Կոթին ամրացված է փոկողը: Կոթի ներսում գտնվում է լուղամանը, վորի կապարիչին ամրացված է խողանակը: Կոթի տակից փողանցք է կա, վորը ծառայում է վերամբարձի մուծակի համար: Կոթի ճախ վրա պտուտակված է վայրիջուց Երզնակը: Վայրիջուց շրջանակի առջևի մասում կան



Նկ. 11

կլորացրած ծայրեր, վորոնցով շրջանակը մտնում է փողատուփի կեռերի մեջ: Յետևի մասում կա ծակ՝ կոթի միացնող պտուտակի համար և կողեր՝ փողատուփի հետ միանալու համար: Վայրիջուց շրջանակը տակից ունի ձգանի կամրջակ:

ցգանի լծակ



Նկ. 12. Վայրիջուց մեխանիզմի մասերը

գնդացրի հետ միացնելու


34. Վայրիջուց մեխանիզմը (նկ. 12) բաղկացած է ձգանի լծակից՝ իր զսպանակով, ձգանից և ապահովիչից՝ իր զսպանակով:

35. Պահեստարանը (նկ. 13) ծառայում է փամփուռների ղեկավարման համար: Նա բաղկացած է ներքևի արթափին և վերին սկավառակներից: Պահեստարանի ներսում տեղավորվում է 49 մարտական փամփուռ:

36. Ներքևի սկավառակը դրսի կողմից ունի ընդունիչ՝ հերթական փամփուռի ղեկավարման համար: Սկավառակի շրջանակն ունի քիթեղնիկ, վորն իր կողմից պահում է վերևի սկավառակը, և յերկնիղ՝ պահեստարանը համար գնդացրը լցնելու ժամանակ:

Ներքևի սկավառակի ներսում կա.

ա) ականոց՝ վերին սկավառակի հետ միանալու համար և կանոցն ունի ճղատ՝ լարովի զսպանակի հետ միանալու համար, և յերկու անցք, վորոնցից լայն անցքը ծառայում է վերին սկավառակի վրանի մտնելու համար, իսկ նեղ պտուտակավոր անցքը՝ սկավառակների պտուտակների համար:



Նկ. 13 ա. Պահեստարան:

բ) ողակապ՝ լարովի զսպանակի ղեկավարման համար.
գ) սառսակ՝ փամփուռները պահեստարանից դեպի ընդունիչն ուղղելու համար:

37) Վերին սկավառակի ներսում կա

ա) յերկու Եարբ առանցք, վորոնց միջև ղեկավարվում են փամփուռները.

բ) վերադրված (նակլադկա), վոր ծառայում է սկավառակի պատրաստելու ժամանակ ստացված սկավառակի անցքերը փակելու համար.

գ) ականոց՝ ծակով ներքևի սկավառակի հետ միանալու համար.


դ) մուրակ՝ լարովի զսպանակի հետ միանալու համար.

ե) լարովի զսպանակի փամփուռի ձև ունեցող սվիչը՝ վորը պտուտակով ամրացված է սկավառակին. սվիչը պահեստարանի բոլոր փամփուռները ծախսվելու դեպքում հենվում է տաշտակին և թուղ չի տալիս, վոր լարովի զսպանակը շարունակի քանդվել:

38. Լարովի զսպանակը ծառայում է վերևի սկավառակը

պտտեցնելու համար Լարովի զսպանակի մեկ ծայրը միացած է ներքևի սկավառակի անշարժ ականոցի հետ, իսկ մերք (պետլի) ունեցող մյուս ծայրերը միացած է վերին սկավառակի մութակի հետ:

39. Ընդունիչը ծառայում է հերթական փամփուշտի ղեկողման համար գնդացրից կրակելու ժամանակ, ներսից ունի թեքատներ՝ փամփուշտների շարժումը ղեկել փողի փամփշտանոցն ուղղելու համար, իսկ առջևում է լետեում ունի:



Նկ. 13 բ. Պահեստարան

ա) կհրուցներ՝ վորոնց վրայով անցնում է փակաղակի կմախքի կատարը:

բ) լետևի մասում ավելի խոր կհրուց, վորտեղ մտնում է անդրադարձիկը:

գ) առջի մասում յեղուն կտրվածքով, վորի վրայով սահում է գնդակը, լերք՝ փամփուշտը շարժվում է ղեկել փամփշտանոց, և վերջապես

դ) ընդունիչի լետևի մասը վերջանում է յեղունով, վորին դեմ է ընկնում պահեստարանը գնդացրի վրա պահող մղակը:

40. Նեցուկն իբրև հենարան է ծառայում գնդացրի առջևի մասի համար հրաձգելու ժամանակ (Նկ. 14): Նեցուկն ունի անրիկ:

Անրիկի վերին մասը յես ծալովի յե և ներքևի մասի հետ ամրանում է պտուտակով: Անրիկի ներքևի մասում փորագրված է կա, վորի վրայով սահում է նեցուկի հիմքը, վորպեսզի հարմար լինի գնդացրից նշան բռնելը: Նեցուկի հիմքը յերկու գույգ ունի ունի, վորոնց վրա պտուտակներով ամրացված են նեցուկների վոսնեք:


Վոտների վրա սահունափակիչներ կան, վորոնք թույլ չեն տալիս, վոր վոտները չափազանց խոր և անհավասարաչափ մտնեն հողի մեջ: Ծալված վիճակում վոտները կապված են մտում զսպանակային ողակով, վորը հազցված է նեցուկի ձախ վոտի վրա:

ԳՆԴԱՅՐԻ ՄԱՍԵՐԻ ՓՈԽԱԶԳԵՑՈՒՅՈՒՆԸ

ՄԱՍԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՆԶԵՎ ԼՅՆԵԼԸ


41. Յետադարձ զսպանակի ազդեցության տակ փակաղակային շրջանակը դադամխոցի և փակաղակի հետ միասին դառնվում են ծայրահեղ առջևի դրուխյան մեջ (Նկ. 15): Ընդ սմին:

ա) դադամխոցի լայնաբերան խողովակի մեջ է մտել կանոնավորիչի փողակը:



Նկ. 15. Գնդացրի մասերի դրուխյունը մինչև լցնելը

բ) փակաղակը պինդ փակում է փողը, փակաղակի մարտական հենարանները, վորոնց վրա ներդրվում է զարկանի հաստ




Նկ. 14. Նեցուկ



մասը, մղվել են աջ ու ձախ և մտել են փողատուփի մարտական յետքաշները յետևը միացնելով փակադակը փողատուփի հետ (նկ. 16). զարկանն իջեցված է.

գ) անդրադարձիկը փակադակի ներգործութեան տակ ընդունել է ծայրահեղ վերին դրուժյունը. նրա զսպանակը սեղմված է.

դ) վայրիջուց լծակն իր զսպանակի ներգործութեան տակ մի փոքր բարձրացել է դեպի վեր. վայրիջուց ձգանի պոչը գնացել է առաջ և յետևից հենվում է ապահովիչի վրա. ապահովիչն իր



Նկ. 16. Փակադակի մարտական հենարանները փակադակը միացնում են փողատուփի հետ:

զսպանակի ազդեցութեան տակ դուրս է ցցվել ձգանի կամրջակի յետևում.

բ) վանանիկը փակում է պահեստարանի ընդունիչի համար շինած փողատուփի պատուհանը:

ՄԱՍԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԼՅՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

42. Լցնելու համար հարկավոր է:

1) Յեռ քաշել փակադակը մինչև վերջը՝ բռնակից բռնած. Ընդ սմին.

ա) գաղաթիցի յետ գնալու ժամանակ նրա լայնաբերան խողովակը դուրս կգա կանոնավորիչի փակադակից և կսեղմի յետադարձ զսպանակը, վորի ծայրը հենվում է անշարժ մուֆ-տայի վրա.

բ) փակադակային շրջանակը յետ կտանի իր հետ միացած զարկանը. զարկանի հաստ մասը, շարժելով դեպի յետ, կազատի փակադակի մարտական հենարանները.

գ) փակադակի մարտական հենարանները՝ շնորհիվ փակադակային շրջանակի փորվածքի թեքութունների նրանց վրա յեղած ներգործութեանը, դուրս կգան փողատուփի յետքաշներից, անջատելով փակադակը փողատուփի հետ միասին.

դ) շնորհիվ փակադակային շրջանակի վրա յեղած հատակի փոսի առջևի յեղրի ներգործութեանը փակադակի կմախքի ներ-

քեր յերունի վրա, փակադակը կսկսի նույնպես շարժվել դեպի յետ.

ե) յետ դնացող փակադակային շրջանակի շարժման հետևանքով վայրիջուց (ձգանի) լծակն կընկղմվի և յերբ շրջանակը կհասնի իր ծայրահեղ յետևի դրուժյանը, իր զսպանակի ներգործութեան տակ նորից կբարձրանա և նրա առամը կհնչի փակադակային շրջանակի մարտական վտաքի առաջը.

զ) փակադակային շրջանակը, նրա հետ միասին նաև մյուս շարժական մասերը կանդ կառնեն իրենց ծայրահեղ յետին դրուժյան վրա (նկ. 17).



Նկ. 17 Փակադակը ծայրահեղ յետին դրուժյան մեջ:

2) Վահանիկն առաջ գալ: Ընդ սմին կբացվի պահեստարանի ընդունիչի համար շինված փողատուփի պատուհանը:

3) Միացնել պահեստարանը: Ընդ սմին, ընդունիչի պատուհանում գտնվող փամփուշտը կըկանգնի փակադակի մղիչի առջևում՝ փողանցքի ուղղութեամբ:

ՄԱՍԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԻՔ ԿԱՏԱՐԵԼԻՄ

43. Ձիգ կատարելու համար անհրաժեշտ է բռնել կոքի մոթից, յիվ հուպ տալով ապահովիչը, քաշել ձգանը:

Ընդ սմին.

ա) ապահովիչն ազատում է վայրիջուց ձգանը. ձգանը պարավելով իր առանցքի շուրջը, աղմուկ է փայրիջուց լծակի վրա և նրա առամը հանում է փակադակային շրջանակի մարտական վտաքի առջևից.

բ) հետադարձ զսպանակի ներգործութեան տակ փակադակային շրջանակը զարկանի հետ միասին նետվում է առաջ.

գ) զարկանի յետևի հաստ մասը, հենվելով փակադակի մարտական հենարանների յերուններին, կհարկադրի իր հետ միասին առաջ շարժվելու նաև ամբողջ փակադակը.

դ) փակադակի առաջ շարժվելու ժամանակ նրա մղիչը ճանկում է պահեստարանի ընդունիչից հերթական փամփուշտը և տանում է փամփուշտանոցը.

ե) փակադակին այնքան ժամանակ կշարունակի առաջ շարժվել, քանի փակադակի կմախքը, դեռ չի հենվել փողին, քանի մղիչն ու փակադակի նետիչը դեռ չեն մտել փողի հետևի կարը-վածքի վրա՝ նրանց համար պատրաստած համապատասխան կրտսերունների մեջ:

զ) Դեռ ևս առաջ շարժվող փակադակային շրջանակի ներգործութեան տակ զարկանը նույնպես շարունակում է առաջ շարժվել և այնպիսի խոր մտնելով փակադակի կմախքի անցքի մեջ, իր հաստ մասով միմյանցից հեռացնում է փակադակի մարտական հենարանները:

ը) փակադակի մարտական հենարանները միմյանցից հեռանալով, իրենց ծայրերով հենվում են փողատուփի մարտական յետքաշներին. փակադակը կտչում է փողատուփին և ամուր փակում է փողը:

թ) փակադակային շրջանակը շարունակում է առաջ շարժվել այնքան ժամանակ, քանի դեռ նրա մութակը չի հենվել փակադակի կմախքի յետևի կտրվածքին. այդ նույն մոմենտին զարկանի ասեղը մտնում է փակադակի կմախքի թասի մեջ և շարունակում է փամփուշտի պատիճը և առաջանում է ձիգ:

Չգի ժամանակ գնդակի յետևից գնացող վառողի գազերի մի մասը փողի գաղաձակի միջով կը խուժի դեպի գազախցիկը և յետ կտա դադամխոցը. խնկ նրա հետ նաև՝ փակադակային շրջանակը:

Ընդ ամին.

ա) փակադակային շրջանակի դեպի յետ շարժվելու սկզբնական մոմենտին փակադակը դեռևս միառժամանակ (մինչև գնդակի դուրս թռչելը փողանցքից) շարունակում է մնալ իր տեղում, փակելով փողանցքը և դրանով թույլ չի տալիս, վոր գազերը պոռթկան դեպի փողատուփը:

բ) զարկանը փակադակային շրջանակի հետ միաժամանակ շարունակում է շարժվել դեպի յետ, և հենց վոր նրա հաստ մասը փոքր ինչ յետ է քաշվում, փակադակի մարտական հենարանները հնարավորութուն են ստանում դուրս գալու փողատուփի մարտական յետքաշներից:

գ) փակադակի մարտական հենարանները յետ գնացող փակադակային շրջանակի հատակի վրա չեղած թեքամանրի ներգործութեան տակ դուրս են գալիս փողատուփի յետքաշներից, և փակադակը հնարավորութուն է ստանում շարժվելու դեպի յետ:

դ) նետիչի կտրված պարկուճի զգալից և քաշում է դեպի յետ մին-

չև անդրադարձիկը, վորտեղից անգրադարձիկը նրան դուրս է նետում գնդացրից:

Մնացածի նկատմամբ գնդացրի մասերի աշխատանքը միևնույնն է, ինչ և փակադակային շրջանակի բռնակից բռնած յետ առլու ժամանակ: Բայց վորովհետև հրաձիգը ձգանը քաշել է դեպի յետ, ուստի փակադակային շրջանակը կանգ չի առնի իր չետևի դրութեան վրա, այլ յետ գնալով մինչև վերջը, հետադարձ զսպանակի ներգործութեան տակ անմիջապես կը խուժի դեպի առաջ. փակադակը մի նոր փամփուշտ կձանկի պահեստարանի ընդունիչի միջից և կտանի փամփուշտանոցը, իսկ զարկանը, շարդելով պատիճը, կառաջացնի նոր ձիգ: Անընդհատ հրաձգությունը կշարունակվի այնքան ժամանակ, քանի պահեստարանը դեռևս չի դատարկվել կամ քանի հրաձիգը դեռևս ձգանը բաց չի թողել. վերջին դեպքում փակադակային շրջանակը կանգ կառնի յետևի դրութեան վրա՝ մարտական վտարի վրա, և գնդացրը լցված կլինի:


ԳՆԴԱՅՐԻ ՔԱՆԴԵԼՆ ՈՒ ՍԱՐՔԵԼԸ

ԳՆԴԱՅՐԻ ՔԱՆԴԵԼԸ

Գնդացրը քանդվում է մաքրելու, դնելու, նրա մասերը փոխարինելու, շտկելու և ուսումնասիրելու համար:

44. Գնդացրը քանդվում է հետևյալ կարգով:

Անցռսել կորը (նկ. 18). գնդացրը պահած՝ յետ պտուտակել կոթի միացնող պտուտակը, նրա բռնակը պտտեցնելով դեպի իրեն. հանելով միացնող պտուտակը և տակից պահելով փողատուփը, կոթը քաշել դեպի ցած և անջատել փողատուփից:



Նկ. 18. Անջատել կոթը

Անշատել փակադակային օրջանակը՝ գազամխոցի յեվ փակադակի հետ միասին բռնելով փակադակային շրջանակի բռնակից, փոքր ինչ յետ քաշել փակադակային շրջանակը, ձախ ձեռքի բուժ մատով տեղից շարժել մուֆտան, մինչև վոր նրա լեռունները դուրս գան փողատուփի համապատասխան փորվածքներից¹⁾, շուտ տալ մուֆտայի պոչը դեպի ցած, ձախ ձեռքով պահելով փողատուփը նշանոցի լետևի կողմից, աջ ձեռքով՝ բռնելով կոթը, յետ քաշել փակադակային շրջանակը. ընդ սմին, հենց վոր փակադակը փոքր ինչ յերևա փողատուփի միջից (նկ. 19), աջ ձեռքով բռնել փակադակից և շրջանակից և վերջնականապես շրջանակը դուրս հանել փողատուփից, շրջանակի հետ մեկտեղ կանջատվեն գաղամխոցն իր ձողով, յետագարձ զսպանակը և փակադակը:



Նկ. 19. Անջատել փակադակային շրջանակը:

Անշատել փակադակը շրջանակից, փակադակը բարձրացնելով դեպի վեր:

Քանդել փակադակը. հանել զաբկանը և անջատել մարսական հեռաբանները: Նեխիչն անջատում են միայն նրա կոտրվելու դեպքում նորով փոխարինելու համար: Անջատելու կարգը հետևյալն է. մի փոքր բարձրացնելով նետիչի զսպանակի առաջևի ծալը և զսպանակը փոքր ինչ շարժելով տեղից, հանել զսպանակը դեպի առջևի կողմը. հանել նետիչը: Նետիչը մտցնելու համար պետք է

1) Յեթե նշված յեղանակով չհաջողվի տեղից շարժել մուֆտան, ապա մուֆտայի և փակադակային շրջանակի առջևի կտրվածքի միջև պետք է դնել կոթի պտուտակը կամ մի այլ հարմար առարկա և այնուհետև, առաջ տալով շրջանակի բռնակը, տեղից շարժել մուֆտան:

նետիչի զսպանակը մտցնել նրա համար փակադակի վրա պատրաստած հատապատասխան փորատների մեջ և ապա նետիչն իր տեղը (զսպանակի տակ) դնել:

Փակադակային շրջանակը դնել ուղղաձիգ դրուժյամբ և յետագարձ զսպանակը փոքր ինչ սեղմելով դեպի ցած, յեռ պտուտակի գազամխոցը (նկ. 20), հանել հետագարձ զսպանակը և մուֆտան:

Աջատել փողը. դնդացրը դնել ուղղաձիգ դրուժյամբ, աջ կողմը դեպի իրեն. սղմել փողի ավտոմատիկ փակիչի թասակի վրա և պահելով փողաբերանի կտրուկները մեջ դրված բանալիով, փողը մինչև վերջը դարձնել դեպի իր կողմը և մի փոքր շարժելով, փողը հանել դեպի վեր (նկ. 21):

Մնացած մասերը քանդվում են միմիայն զինանցում:

Ծանոթություն. փողը փոխելիս (որինակ հրաձգության ժամանակ) մինչև փողի անջատելը չպետք է մոտանալ նախապես փակադակը մինչև վերջը յեռ սալ և հենց դրանով փողի համապատասխան փորվածքներից դուրս հանել նետիչը և փակադակի մղիչը: Մնացածում փողի փոխելը կատարվում է այն կարգով, վորը նշված է դնդացրի քանդելու կանոնների մեջ:



Նկ. 20. Յետ պտուտակել զգազամխոցը:



Նկ. 21. Անջատել փողը:



Նկ. 22. Մտցնել փողը:

45. Սարքելը կատարվում է հետևյալ կարգով:

Մտցնել փաղը. ձախ ձեռքով ուղղաձիգ դրուելյամբ բռնելով փողատուփը պատյանի հետ և ընկղմելով ավտոմատիկ փակիչը, զգուշությամբ փողը մտցնել պատյանի մեջ, ուղղելով փողն այնպես, վոր գաղախցիկը մտնի պատյանի համապատասխան կտրուների մեջ (նկ. 22), և բանալիով փողը շրջել և մտցնել իր տեղը: Ազատ թողնել ավտոմատիկ փակիչը:

Հուզցնել մուժտան գաղամխոցի ձողի վրա, փակադակային շրջանակը դնելով ուղղաձիգ դրուելյամբ, նրա վերին մասը դարձնելով դեպի իր կողմը: Ընդ սմին մուժտայի պոչը քաշել դեպի ձախ, իսկ կորնթարթ մասը, դեպի դուրս. հազցնել յեսադարձ զսպանակը ձողի վրա՝ խուլ ծայրը դեպի ցած. զսպանակի վերին կեռ ծայրը մտցնել ձողի չերկայնակի փորոքի մեջ, զսպանակը մի քիչ սղմելով դեպի ցած, պոռուտակել գաղամխոցը մինչև վերջը, միաժամանակ հետևել, վոր յետագարձ զսպանակի ծայրը մտնի մխոցի ճղատի մեջ:

Սարքել փակադակը. մտցնել մարտական հենարանները յելուճներով դեպի ցած՝ փակադակի կմախքի կողքերին նրանց համար պատրաստած համապատասխան փորվածքների մեջ, մտցնել զարկանը փակադակի անցքի մեջ՝ նրա լետևի մասի յելուճը պահելով դեպի վեր. զարկանը մղել դեպի առաջ, բայց այնպես, վոր փակադակի մարտական հենարանները մնան իրենց տեղում, պինդ կպած լինելով փակադակի կմախքի պատերին:

Մխացնել փակադակը Երջանակին. զարկանի լետևի ծայրը մտցնել շրջանակի մուժակի կտրուների մեջ, իսկ փակադակի ներքևի յելուճը և մարտական հենարանների յելուճներն ուղղել դեպի շրջանակի հատակի վրայի համապատասխան փորվածքները:

Փակադակային Երջանակը մխացնել փողատուփին (նկ. 23): Մուժտան դնել, պոչով դեպի ցած, աջ ձեռքով բռնել փակադակից և շրջանակից և գաղամխոցն ուղղել դեպի նրա շարժմանն ուղղություն տվող փողակը, իսկ կողերն ուղղել դեպի փողատուփի համապատասխան փորատները. փակադակային շրջանակն առաջ տալ մինչև վերջը: Մուժտան միացնել փողատուփի հետ. դրա համար սղմել մուժտայի պոչի վրա և մուժտան առաջ տալ մինչև վերջը. մուժտայի պոչից բռնած մուժտան դարձնել դեպի ձախ և վեր:

Մխացնել կորը. դրա համար ձախ ձեռքով բռնել գնդացիբը, աջ ձեռքով վայրիջուց շրջանակի առջևի ծայրերը մտցնել փողատուփի վրայի նրանց համար շինած համապատասխան կեռերի

և շ. բարձրացնել կոթը դեպի վեր և միացնել փողատուփի հետ. փողատուփի աջ կողմից պոռուտակել կոթի միացնող պոռուտակը, մինչև վոր նրա պոռուկն ընկնի փողատուփի վրայի համապատասխան ընի մեջ:



Նկ. 23. Փակադակային շրջանակն առաջ տալ մինչև վերջը:

Գնդացիբը սարքել վերջացնելուց հետո հարկավոր է ստուգել սարքելու հետևյալը (տես § 48):

ՊԱՀԵՍՏԱՐԱՆԻ ՔԱՆԴԵԼԸ

46. Դժվարության պատճառով պահեստարանի քանդելն ու սարքելը կատարվում է բացառիկ դեպքերում, այն յեվս միմիայն զինարհեստանոցում:

Քանդելու համար հարկավոր է.

- ա) յետ պոռուտակել սկավառակները միացնող պոռուտակը.
- բ) սկավառակները պահած յետ պոռուտակել տվիչի պոռուտակը և հանել տվիչը.
- գ) դարձնելով վերևի սկավառակը՝ թուլացնել լարովի զըսպանակը.
- դ) վերևի և ներքևի սկավառակներն անջատել իրարից. ընդ սմին չի հարկավոր առանձնապես մեծ ուժ գործ դնել, այլ պետք է զգուշությամբ անջատել սկավառակները, հակառակ դեպքում կարող են փչանալ լարովի զսպանակի մուժակը և վերևի սկավառակը պահող թիթեղնիկը.
- ե) հանել լարովի զսպանակը:

ՊԱՀԵՍՏԱՐԱՆԻ ՍԱՐՔԵԼԸ

47. Սարքելու համար հարկավոր է.

- ա) Ներքևի սկավառակի ողակապի և ականոցի միջև մտցնել լարովի զսպանակը՝ կեռիքը մտցնելով ականոցի ճղատի մեջ.
- բ) միացնել սկավառակները. վերևի սկավառակն անցկացնել

վերևի սկզբառակը պահող թիթեղնիկի կողմածքի տակ. դարձնելով վերևի սկզբառակը, լարովի զսպանակի մուժակն ուղղել դեպի նրա մեջքը և զգուշութեամբ միացնել սկզբառակները. վերևի սկզբառակի դարձումով ստուգել սկզբառակների միացման ճշտութիւնը:

գ) մտցնել ամօրը. դրա համար ձախ ձեռքով պահել պահեստարանը նրա վերևի սկզբառակին աջ դրութիւնն տալով, պահեստարանի շրջանակը հենել կրծքին. փամփուշտի զնդակը մտցնելով ամօրի պտուտակի համար պատրաստած ծակի մեջ, վերևի սկզբառակը դարձնել վերևից դեպի իրեն կողմը մինչև վերջը (մոտ $3\frac{1}{4}$ պտուտի չափ). այնուհետև յետ դարձնել սկզբառակը (մոտ $1\frac{1}{4}$ — $1\frac{1}{2}$ պտուտի չափ), մինչև վեր ամօրի պտուտակի ծակը համընկնել ընդունելի պատուհանի վրա. թուշը չտալով, վեր վերևի սկզբառակը պտուտ գա, ամօրը մտցնել ընդունելի պատուհանի մեջ, ամօրի բերանն ուղղելով սկզբառակի կենտրոնին, իսկ ամօրի պտուտակի ծակը համատեղելով սկզբառակի համապատասխան ծակի հետ. ամօրն ու սկզբառակը պահելով այդ դրութիւն մեջ տակից պտուտակել ամօրի պտուտակը.

դ) պտուտակել չերկու սկզբառակը միացնող պտուտակը:

ԳՆԴԱՅՐԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԲԱՉԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

48. Գնդացրի զննութիւնը նպատակ ունի հավատ ներշնչելու, վոր գնդացրի բոլոր մասերը սարքին, բավականաչափ մաքուր են և զնդացիրը նիւս և սարկված, աշխնքն, գնդացրը վոչ մի թերութիւն չունի, վորի պատճառով հրաձգութիւնը խափանվի: Զննութիւնը կատարվում է գնդացրի քանդելու և մաքրելու ժամանակ, նույնպես և հրաձգութիւնից առաջ:

Գնդացրը հրաձգութիւն պատրաստելիս անհրաժեշտ է.

ա) Ստուգել գնդացրի բոլոր մասերի ամբողջութիւնը, մաքրութիւնը և սարքին լինելը. գնդացրի մասերից, մանավանդ փողից հեռացնել ամօրը քսուքը (յուղը):

բ) հատուկ ուշադրութեամբ զննել դադամխոցի, կանոնավորելի մաքուր և սարքին լինելը. գազամխոցի ձողի ուղիղ լինելը.

գ) ստուգել կանոնավորելի հաստումը.

դ) զննել նշանոցը, ընդ սմին նշանոցի անրիկը պետք է ամուր մնա նշանոցի շրջանակի վրա տված դրութիւն մեջ, իսկ

նշանոցի շրջանակը պետք է ծոված չլինի և իր զսպանակով պետք է ամուր կպած մնա նշանոցի կոճղակին սեղմված դրութիւն մեջ.

ե) ստուգել գնդացրի սարքելու ճշտութիւնը, յետադարձ զսպանակի և վայրիջուց մեխանիզմի գործողութիւնն ճշտութիւնը, վորի համար պետք է.

— յետ սալ Եւրոպական մասերը մինչև վերջը, ընդ սմին, շարժական մասերը պետք է յետ գնան սահուն կերպով, առանց ցատկումների և մի փոքր ճիգ թափելով, իսկ փակադակային շրջանակը պետք է կանդ առնի ծայրահեղ յետևի դրութիւն վրա.

— սեղմել ձգանը, հուպ սալով ապահովելի վրա, ընդ սմին, շարժական մասերը պետք է յետանդով յետ գնան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Գնդացրի սարքելու ճշտութիւնը և յետադարձ զսպանակի սարքին շինելն ստուգելիս հանձնարարվում է գնդացրը զննել ուղղաձիգ, վորովհետև այդ դրութիւնը յետադարձ զսպանակն առավելագույն աշխատանք է կատարում, բոլոր շարժական մասերը բարձրացնել դեպի վեր: Յեթե այս ամենից ծանր պայմաններում գնդացրը ճիշտ աշխատի, ապա դա կարող է չերաշխիք լինել, վոր գնդացրը ճիշտ է սարքված և յետադարձ զսպանակն էլ սարքին է:

զ) Ստուգելով գնդացրի մասերի գործողութիւնն ճշտութիւնը, հարկավոր է մտցնել պահեստարանը և ստուգել, թե արդյոք նրան հուսալի կերպով է ամրացնում պահեստարանի մղղակը.

ը) զննել փամփուշտները, արդյոք դրանք ճաքած, տրորված, կեղտոտ և ժանգոտ չեն:

թ) զննել պահեստարանները և համոզվել, վոր նրանք սարքին են, վոր լարովի զսպանակն ու ամօրը գործում են.

ժ) լցնել պահեստարանները (տես § 50).

ի) յուղանմանը չուղ լցնել և ստուգել, թե արդյոք կան անհրաժեշտ պահունի մասերը և պատկանելիքը:

ԿԱՆՈՆԱՎՈՐԻՉԻ ԳԱԶԱԾԱԿԵՐԻ ՀԱՍՏՈՒՄԸ

49. Հրաձգութիւն համար նորմալ համարվում է կանոնավորելի 3 մմ տրամագիծ ունեցող ծակը, վորով և կատարվում են բոլոր հրաձգութիւնները. միմիայն յերբ մասերի վոչ լրիվ յետ գնալու հետ կապված խափանումներ են առաջ գալիս, պետք է կանոնավորելը դարձնել և զննել հետևյալ ամօրի մեծ տրամագիծ ունեցող գազածակի վրա.

Դրա համար հարկավոր է.

ա) անջատել փողը.

բ) հանել կանոնավորիչը. դրա համար անհրաժեշտ է հանել կանոնավորիչի մանեկի շալիխտը. փողը դնել ուղղաձիգ. բանալիով բռնել փողաբերանի կտրուկները. պահելով փողը, մյուս բանալիով չես պտուտակել կանոնավորիչի մանեկը. հանել կանոնավորիչը, հրելով դեպի ցած:

գ) հանիչով մաքրել կանոնավորիչի հաստման յենթակա դադածակը (մաքրելու հարմարության համար թուլատրվում է բանալիի տափակ մասով խփել փորիչին).

դ) մացնել կանոնավորիչն իր տեղը, կանոնավորիչի հրաձգության համար նշանակված թիվ ունեցող դադածակը համատեղելով աչք հիմնախազի հետ, վորը գծված է դադախցիկի վրա, իսկ կանոնավորիչի վրայի կտրուկը համատեղել դադախցիկի չլուսնի հետ.

ե) պտուտակել կանոնավորիչի մանեկը և ամրացնել այն շալիխտով:

ՊԱՀԵՍՏԱՐԱՆԻ ԼՅՆԵԼԸ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐՈՎ

50. Այլ ձեռքի մատով ընկղմել ավիչը. ձախ ձեռքի բուժմատով վերևի սկավառակի կողմից բռնել ավիչի պտուտակը և նրա ողնությամբ աստիճանաբար դարձնել գերևի սկավառակը. սկավառակի պտտվելուն զուգընթաց մեկ-մեկ փամփուռոտ դնել ընդունիչի պատուհանի մեջ, զնդակով դեպի սկավառակի կենտրոնը (ընդամենը 49 փամփուռոտ): Լցնելու հարմարության համար պահեստարանի սկավառակը պետք է այնքան դարձնել, վոր ընդունիչի պատուհանի մեջ արդեն մտցված փամփուռոտի լեզը կամ նույնիսկ ավելի լավ է նրա կեսը շարունակ յերևա:

ՊԱՀԵՍՏԱՐԱՆԸ ԴԱՏԱՐԿԵԼԸ

51. Դնել պահեստարանը ուղղաձիգ ընդունիչով դեպի վեր և աստիճանաբար մեկը մյուսի յեակից ընդունիչից դուրս հրել փամփուռոտները դեպի ցած, աջ ձեռքում բռնած փամփուռոտի գրնդակով սղմելով փամփուռոտների զնդակի վրա: Դատարկելու դրության համար հանձնարարվում է այդ միջոցին բռնած պահել ավիչի պտուտակը:

ԳՆԴԱՅԻՐԸ ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ԽՆԱՄԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

52. Գնդացրի անմիջական խնամումը թե մշտական (կամ ժամանակավոր) տեղում և թե յերթում ու մարտում գտնված ժամանակ կազմում է նշանառոցի պարտականութունը, վորի համար նա յե անմիջական պատասխանատուն:

53. Շենքի մեջ գնդացրը պետք է պահել հատուկ բուրգերի բներում նույն պայմաններում, ինչ և հրացանները: Գնդացրը պահ դրած ժամանակ զարկանը պետք է իջած լինի, և փողատուփի պատուհանն էլ ծածկված լինի վահանիկով: զնդացրի բուրը մետաղյա մասերը պետք է յուղված լինեն:

54. Յերթում գնդացրը պետք է շապկի մեջ լինի.

55. Վարժական պարապմունքների ժամանակ դաշտում, նույնպես և հրաձգարանում գնդացրը պետք է պահպանել փոշոտվելուց, ավազից կամ հողից, ըստ վորում չերբեք փողանցքը չպետք է վորևե բանով կախել, վորովհետև համարչա միշտ դատաճառ է դառնում փողի լայնանալուն կամ նույնիսկ փողի պատուհիլուն ձգի ժամանակ. բոլոր դեպքերում հարկավոր է գնդացրը պահպանել հարվածներից և ցնցումներից:

56. Պահպելիս, սարքելիս, լցնելիս, հրաձգելու ժամանակ խափանումները վերացնելիս և այլն, անհրաժեշտ է զգուշ լինել. յեթե այս կամ այն մասն ազատ կերպով չի ընկնում իր տեղը կամ չի հաջողվում խափանումը վերացնել, յերբեք չպետք է մեծ ճիգ թափել, այլ պետք է համբերությամբ պարզել և վերացնել դժվարության պատճառը:

Հրաձգության ժամանակ թուլ չտալ, վոր փողը սաստիկ շրկանա, դրա համար պետք է ընդհատումներ անել հրաձգության մեջ կամ անհրաժեշտության դեպքում պետք է փողը փոխել:

57. Գնդացրը պետք է մաքրել. յերկար ժամանակով պահ դրած դեպքում առնվազն ամիսը մեկ անգամ և ամեն մի հրաձգությունից հետո, գնդացրով դաշտ դուրս գալուց հետո և շենքում կեղտոտվելու դեպքում: Սակայն պետք է հիշել, վոր չափազանց հաճախակի մաքրումն ավելի մեծ վնաս քան ոգուտ է տալիս, վորովհետև պատճառ է դառնում գնդացրի մասերի մաշվելուն:


Առանձնապես պետք է զգուշ լինել փողը արորելուց:

58. Յեթե ինչ-ինչ պատճառներով գնդացրը հրաձգությունից հետո անմիջական չի կարելի մաքրել, ապա անպայմանորեն պետք է փողանցքը յուղել յուղ քսած լաթերով կամ խճուճով:

Այս ձևի յուղելը դուրբացնում է հտադալում մաքրելու գործը և փողը պահպանում է ժանդոտվելուց:

Հրաձգությունից հետո մաքրելուց 1—2 օր անց փողը նորից

պետք է մաքրել, խուսափելու համար ուղլուղիտլի (վառուղի գազերի քիմիական ռեակցիայի) վնասակար հետևանքները:




Նկ. 24. Մալովի շամփուրը մաքրելով

Պ Ա Տ Կ Ա Ն Ե Լ Ի Ք

59. Ամեն մի գնդացրի քանդելու, սարքելու և մաքրելու համար կա հետևյալ պատկանելիքը.

ա) ծալովի շամփուր մաքրելով այն տիպարից, վորն ընդունված է Մաքսիմի գնդացրի փողը մաքրելու համար (նկ. 24).

բ) խողանակ՝ ծուռ կոթով, փամփշտանոցը չուղելու համար (նկ. 25).




Նկ. 25. Պատկանելիք

գ) բանալի—պտուտակիչը ծառայում է կանոնավորիչը հետ պտուտակելու, փողը դարձնելու և հանելու, փորձնահրաձգության ժամանակ հատիկը պտուտակելու և հետ պտուտակելու համար և պտուտակները պնդացնելու և թուլացնելու համար.


դ) հանիչը ծառայում է կանոնավորիչի գազածակերը և փողի գազածակը մաքրելու համար, վորոնք կեղտոտվում են վառողային գազերով.

ե) պարկուճի հանիչը ծառայում է փամփշտանոցից արաքած պարկուճները հանելու համար (նկ. 26—29):


Ամբողջ պատկանելիքը զետեղված է հատուկ արկղի մեջ:



Նկ. 26. Պարկուճի հանիչ



Նկ. 27. Պարկուճի հանիչ վրան արաքած պարկուճ



Նկ. 28. Պարկուճի հանիչը, բանդած

ԽԱՓԱՆՈՒՄՆԵՐԸ ՇՐԱՋԳՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

60. Գնդացրով կրակելու ժամանակ խափանումները գլխավորապես առաջանում են գնդացրը հրաձգության համար վոչ բախարար ուշադրությամբ պատրաստելուց, նմանապես և հրաձգության ժամանակ գնդացրի կեղտոտվելուց (փոշի, ալյուր, և այլն), գնդացրի մասերի կոտրվելուց և անսարք փամփուռաներից:

ԱՄԵՆԻՑ ԲՆՈՐՈՇ ԽԱՓԱՆՈՒՄՆԵՐԸ

1. ՓԱՄՓՈՒՇՏԻ ԴԵՄ ԸՆԿՆԵԼԸ ՊԱՀԵՍՏԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԻՉԻ ԱՌՁԵՎԻ ՊԱՏԻ ԹԵՔԱՏԻՆ.

Պատճառները.

- ա) Պահեստարանի լարովի զսպանակի թուլությունը.
- բ) պահեստարանի անսարքությունը (զսպանակի անբավարար լարումը, միացնող պտուտակը մինչև վերջը չի պտուտակված, ընդունելը թուլացել է):

Վերացնելը: Հատուկենտ խափանումների դեպքում պետք է՝

- ա) չետ քաշել փակադակային շրջանակի բռնակը մինչև վերջը.
- բ) հանել պահեստարանը.
- գ) ուղղել փամփուռը պահեստարանի ընդունելիչի մեջ կամ հանել անսարք փամփուռը.
- դ) լցնել գնդացրը և հրաձգությունը շարունակել հենց այդ նույն պահեստարանով:

Խափանումների կրկնվելու դեպքում՝

- ա) չետ քաշել փակադակային շրջանակի բռնակը մինչև վերջը, հանել պահեստարանը և փոխարինել նորով.
- բ) սարքի գցել պահեստարանը:

Կանխումն.
ա) խստիվ պահպանել պահեստարանի սարքելու կանոնները, մանավանդ նրա զսպանակը լարելու նկատմամբ.

- բ) զննել պահեստարանը լցնելուց առաջ՝ անսարք պահեստարաններ չդորձադրել:

2. ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ԶՄԱՏՈՒՑՎԵԼԸ ԴԵՊԻ ՊԱՀԵՍՏԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԻՉԸ

Պատճառները.

- ա) փամփուռի տրորված լինելը.

- բ) փամփուռի թեքվելը պահեստարանում:
- Վերացնելը: Յետ քաշել փակադակային շրջանակի բռնակը մինչև վերջը, հանել պահեստարանը և փոխարինել նորով: Անսարք պահեստարանում վերացնել խափանման պատճառը.
Կանխումն.

- ա) խստիվ պահպանել պահեստարանի սարքելու կանոնները, մանավանդ նրա զսպանակը լարելու նկատմամբ.

- բ) զննել փամփուռներն ու պահեստարանները լցնելուց առաջ՝ անսարքները չդորձադրել:

3. ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՎՈՉ ՅԵՌԱՆԴՈՒՆ ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼԸ

Ջարկանի ասեղը չի շարդում փամփուռի պատիճը, առաջանում է փստոց:

Պատճառները.

- ա) գնդացրի կեղտոտվելը և թանձրացած քսուքը.
 - բ) չետադարձ զսպանակի անսարքությունը:
- Վերացնելը: Յետ քաշել փակադակային շրջանակի բռնակը մինչև վերջը և շարունակել հրաձգությունը:

Խափանումը կրկնվելու դեպքում՝ չետ քաշել բռնակը մինչև վերջը, հանել պահեստարանը և նայած խափանման պատճառին՝

- ա) քանդել, մաքրել և հեղուկ քսուքով (ձմեռ ժամանակ սկիպիդարի հեռ խառնած) չուղել շփվող մասերը.
- բ) փոխել չետադարձ զսպանակը:

Կանխումն.

- ա) գնդացրը հրաձգության պատրաստելիս, նմանապես և ողտվելով հրաձգության ընդհատումներից, հսկել գնդացրի մաքրության վրա.
- բ) թանձրացած քսուքը հեղուկացնել նավթով.
- գ) հրաձգությունից առաջ համոզվել, վոր չետադարձ զսպանակը սարքին է:

4. ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՉՀԱՍՆԵԼԸ ԾԱՅՐԱՆԵՂ ԱՌՁԵՎԻ ԴՐՈՒԹՅԱՆԸ

Շարժական մասերի ծայրահեղ առջևի գրությանը չհասնելու դեպքում ձիգ չի առաջանա, վորովհետև զարկանն հարկավոր չաչափով առաջ չի գնա:

Պատճառները.

- ա) դադամիտի գլխի լրիվ պտուտակված չլինելը կամ դադամիտի ծովածությունը.

Ժամանակավոր ձեռնարկ—3

բ) կանոնավորելի փողակի ծավաճութունը կամ կեղտոտված ծովափը (այրուք)։

գ) փամփուռտի տրորվածութունը։

դ) փամփուռտանոցի կեղտոտվածութունը։

Վերացնելը. չեա քաշել բռնակը մինչև վերջը, հանել պահեստարանը և նայած խափանման պատճառին՝

ա) պտուտակել մինչև վերջը գազամխոցի գլուխը։

բ) մաքրել և յուղել գազամխոցի լայնաբերան խողովակը։

գ) մաքրել կանոնավորելի փողակը։

դ) դեն գցել տրորված փամփուռտը։

ե) մաքրել փամփուռտանոցը։

Կանոնավորելի և գազամխոցի փողակների սարքի գցելը կատարվում է զինարհեստանոցում։

Կանխումն.

ա) ուշադրությամբ գնդացիքը սարքել նրան հրաձգության համար պատրաստելու ժամանակ. ըստ վորում խնամքով գննել և համոզվել, վոր գազամխոցն ու կանոնավորելը սարքին են։

բ) պահեստարանը լցնելիս տրորված փամփուռտները դեն գցել։

գ) հրաձգության ժամանակ, ոգտվելով ընդհատումներից, մաքրել և յուղել կանոնավորելը, գազամխոցի գլուխը և փամփուռտանոցը։

5. ՓՍՏՈՑՆԵՐ

Պատճառները. բացի փստոց առաջացնող վերևում հիշված պատճառներից (շարժական մասերի վոչ չեռանդուն առաջ շարժվելը), փստոցը կարող է առաջ գալ.

ա) զարկանի ասեղի կոտրվելուց։

բ) փամփուռտի պատիճի անսարք լինելուց։

Վերացնելը. չեա քաշել բռնակը մինչև վերջը և շարունակել հրաձգութունը։

Կրկնվելու դեպքում գնդացիքը դատարկել և փոխել զարկանի ասեղը։

Կանխումն.

ա) Գնդացիքը հրաձգության համար պատրաստելիս համոզվել, վոր զարկանի ասեղը սարքին է։

բ) Պահեստարանը լցնելիս գննել փամփուռտները. խոտորնակի պատիճ չենցող կամ կանաչով պատված փամփուռտները դեն գցել։

6. ՇԱՐՃԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ԿԻՍԱՏ ՅԵՏ ՔԱՇՎԵԼԸ ՉԻԳԻՑ ՀԵՏՈ

Փամփուռտանոցից դուրս քաշված կրակված պարկուճը չի հասնի անդադարձիկին և դուրս չի նետվի գնդացիքից. պարկուճը կամ կվռվի փակադակային շրջանակի պատուհանի մեջ կամ նորից կմտնի փամփուռտանոցը։

Պատճառները.

ա) գնդացիքի կեղտոտված լինելը։

բ) կանոնավորելի գազածակի աղտոտվելը (այրուք, փոշի և այլն)։

գ) գազերի փախուստը գազամխոցի գլխի լայնաբերան խողովակի և կանոնավորելի փողակի միջև յեղած բացակից, վորն առաջանում է այդ մասերի լայնանալուց։

դ) փամփուռտի անսարք լինելը (լիցքի պակասութունը)։

Վերացնելը. չեա տանել բռնակը մինչև վերջը և շարունակել հրաձգութունը։

Փափանման կրկնվելու դեպքում չեա տանել բռնակը մինչև վերջը, հանել պահեստարանը, գնդացիքը քանդել և մաքրել. չեթե բավականաչափ ժամանակ չկա գնդացիքը մաքրելու, ապա կանոնավորելը հաստել ավելի մեծ տրամագիծ ունեցող ծակի վրա, նախապես մաքրելով այդ ծակը։

Կանխումն.

ա) Ոգտվելով հրաձգության ընդհատումներից, գննել և մաքրել գնդացիքը (յեթե հարկ կա)։

բ) գնդացիքը հրաձգության պատրաստելիս ստուգել գազամխոցի և կանոնավորելի սարքին լինելը։

7. ԿՐԱԿՎԱՄ ՊԱՐԿՈՒՃԻ ՉՄԵՐԱԿԱՆԱԿԻ ԿՈՏՐՎԱԾ ԼԻՆԵԼԸ

Պատճառը. անդադարձիկի կամ նրա զսպանակի կոտրված լինելը։

Վերացնելը. չեա քաշել բռնակը մինչև վերջը, հանել պահեստարանը, հեռացնել պարկուճը, փոխել անդադարձիկը կամ նրա զսպանակը (զինարհեստանոցում)։

Կանխումն. Գնդացիքը հրաձգության պատրաստելիս գննել և համոզվել, վոր անդադարձիկին ու նրա զսպանակը սարքին են։

8. ՄԱՍԵՐԻ ՅԵՏ ԳՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՐԿՈՒՃԸ ՄՆՈՒՄ Ե ՓՄՄՓՇՏԱՆՈՑՈՒՄ. ՓԱԿԱՂԱԿԻ ԱՌԱՋ ՄՂԱՄ ՓՄՄՓՈՒՇՏԸ

ԳԵՄ Ե ԸՆԿՆՈՒՄ ՊԱՐԿՈՒՃԻՆ

Պատճառները.

ա) նետիչի կեռիքի կամ նրա զսպանակի անսարքութունը։

բ) նետիչի կեռիքի պոկվելը պարկուճի գդակից, փողի խիստ շիկանալու և փամփշտանոցի աղտոտվելու դեպքում:

Վերացնելը. լետ քաշել բռնակը մինչև վերջը, հանել պահեստարանը: Պարկուճը հեռացնել պտուտակիչի բերանով. յեթե այդ չի հաջողվում, պարկուճը դուրս գցել շամփրով:

Խափանումը վերացնելուց հետո, նայած պատճառին՝

ա) փոխարինել նետիչը (զին արհեստանոցում)

բ) Թույլ տալ, վոր փողը պաղի և մաքրել փամփշտանոցը կամ փոխարինել փո

կանխումն.

ա) գնդացիքը հրաձգության պատրաստելիս զննել և համոզվել, վոր նետիչի կեռիքն ու նրա զսպանակը սարքին են.

բ) հրաձգության ժամանակ փողը ժամանակին փոխել, առանց թույլ տալու, վոր փողը սաստիկ տաքանա, և ժամանակ առ ժամանակ փամփշտանոցը մաքրել:

9. ՊԱՐԿՈՒՃԻ ԽՈՏՈՐՆԱԿԻ ՊԱՅԹՈՒՄԸ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿ

Պատճառները.

ա) փողի յետևի կտրվածքի և փակաղակի թասի հատակի միջև յեկած բացակը չափազանց մեծ է.

բ) մարտական հետադարձների հենման հարթութունների մետաղի նստվածքը:

Վերացնելը. լետ քաշել փակաղակը մինչև վերջը:

Մեծ մասամբ պարկուճի պոկված մասը փամփշտանոցից դուրս կնետվի հերթական փամփշտով: Յեթե այդպես չլինի, ապա անհրաժեշտ է յետ քաշել բռնակը մինչև վերջը հանել պահեստարանը և պարկուճի փամփշտանոցում ձնացած մասը դուրս հանել պարկուճի հանիչով (նկ. 26):

Խափանումը վերացնելուց հետո շարունակել հրաձգությունն Յեթե խափանումը նորից կրկնվելու լինի, ապա՝

ա) փակաղակը փոխարինել պահուճի փակաղակով.

բ) հարմարեցնել պահուճի մարտական հենարանները, ստուգելով ավելի փոքր կալիբրաչափով (զինարհեստանոցում):

Կանխումն. Պարբերաբար կալիբրաչափի ոգնությամբ ստուգել, թե փակաղակը վորքան ճիշտ կերպով է հարմարվում փողի յետևի կտրվածքին (ստուգումը կատարվում է զինարհեստանոցում):

Զգանը բաց թողնելուց հետո հրաձգությունը չի դադարում: Պատճառները.

ա) վայրիջուց լծակի ատամի կամ լծակի զոպանակի անսարքութունը.

բ) փակաղակալին շրջանակի մարտական վոտքի անսարքութունը.

գ) վայրիջուց մեխանիզմի մասերի մեջ հավաքված թանձրացած քսուքը (մանավանդ ձմեռ ժամանակ).

դ) բացառիկ դեպքերում՝ շարժական մասերի կիսատ լիտ գընալը:

Վերացնելը. կանգնեցնել փամփուշտների մատուցումը պահեստարանից, ձեռքով պահելով ավիչի պտուտակը, և հանել պահեստարանը, իսկ աչնուհետև, նայած ահամա հրաձգության պատճառին՝

ա) հեղուկացնել վայրիջուց մեխանիզմի մասերում հավաքված քսուքը.

բ) վերացնել ահամա ավտոմատիկ հրաձգությունն առաջացնող մասերի անսարքութունը (զինարհեստանոցում), կամ անսարք մասը փոխարինել նորով.

գ) կանոնավորիչը հաստել ավելի մեծ արամագիծ ունեցող գազածակի վրա, նախապես մաքրելով գազածակը:

Կանխումն.

ա) գնդացիքը յրաձգության պատրաստելիս զննել և համոզվել, վոր վայրիջուց լծակի ատամն ու փակաղակալին շրջանակի մարտական վոտքը սարքին են.

բ) նավթով հեռացնել վայրիջուց մեխանիզմի մասերի մեջ հավաքված թանձրացած քսուքը:

ԽԱՓԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՅՆԵԼԸ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

61. Հրաձգության ժամանակ պատահած աժեն մի խափանումն աժենից առաջ փորձել պարզ վերալցման միջոցով վերացնել, յետ քաշելով փակաղակալին շրջանակի բռնակը մինչև վերջը: Յեթե խափանումը վերալցման միջոցով չի վերանում կամ վերանալուց հետո կրկնվում է, ապա պետք է նորից յետ քաշել բռնակը, հանել պահեստարանը, և վորոշելով խափանման պատճառը, վերացնել այն:

62. Վորքան ել գնդացիքը լավ պատրաստված լինի հրաձգու-
թյան համար և վորքան ել նա սարքին աշխատի, այնուամե-
նայնիս, յերկարատե հրաձգության ժամանակ անխուսափելի չե
շփվող մասերի աղտոտվելը և նրանց մաշվելը, ուստի անհրաժեշտ
ե, ոգտվելով հրաձգության ընդմիջումներէց, կատարել հետևյալը:

- ա) մաքրել կանոնավորիչը և դասամբոցի գլուխը.
- բ) մաքրել փամփոշտանոցը.
- գ) նորից չուղել և հեղուկացնել (սկիպիդարով կամ նավթով)
շփվող մասերին քսված յուղը.
- դ) ստուգել մասերի սարքին լինելը, առանց գնդացիքը քան-
դելու.

ե) լարված հրաձգության ժամանակ, ամեն անգամ 300—400
փամփուշտ արձակելուց հետո փողը փոխել, առանց թուզլ տալու
վոր փողը սաստիկ տաքանա:

ՁԵՌՔԻ ԳՆԴԱՅՐՈՎ ՀՐԱՋԳԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ

63. Ձեռքի գնդացիքն իրենից ներկայացնում ե խմբակային
կրակի դեմք: Նրա դերն ե հակառակորդի հարված հասցնել վոչ
թե հատ-հատ գնդակներով, այլ ավտոմատիկ կրակի հերթերով,
մարտական պարագայում փոխարինելով 10—12 միատեղ գործող
հրացանաձիգների, ընդվորում, ձեռքի գնդացի կրակն աչքի չե
ընկնում խիստ միտրինակությամբ և զեկավարման կենտրոնաց-
մամբ:

64. Ձեռքի գնդացի կրակի հզորութունը, համեմատաբար
թեթև լինելը, հաստոցավոր գնդացի համեմատությամբ ավելի
արագորեն կրակի պատրաստվելը, ամենուրեք անցնելը, վորտեղ
հրաձիգն ե անցնում, վաչրին արագորեն հարմարվելը և նվազ
խոցելի լինելը, այս ամենը ձեռ գնդացիքը դարձնում են մար-
տի հիմնական զե՝ մոտակա հեռակայությունների
վրա:

65. Ձեռք գնդացի կազմության բնույթը, հրաձգության
ժամանակ զգալի քանակությամբ փամփուշտի պահանջը, մար-
տում նրան վորոշ չափով ապահովելու անհրաժեշտությունը պա-
հանջում են նրա սպասարկման համար նշանակել մն քանի մաս-
նագետներ, վորոնք կազմում են գնդացրային համրանքը:

ԳՆԴԱՅՐՈՐԴՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

66. Մարտում ձեռքի գնդացիքն սպասարկող խմբակը բաղ-
կացած ե նշանառու յից, նրա ոգնականից (տեղակալից) և մի
քանի փամփոշտակիչներից, վորպեսզի ձեռքի գնդացիքը մարտում
դործի անընդհատ, այդ բոլոր անձինք պետք ե կարողանան փո-
խարինել միմյանց:

67. Բոլոր գնդացրորդներն ընդհանրապես մարտում պար-
տավոր են:

ա) շատ լավ գիտենալ իրենց գնդացիքը, նրա կազմութիւնը, մեխանիզմները աշխատանքը և մարտական հատկութիւնները, պարտավոր են սարքին պահել գնդացիքը, արագորեն վորոշել առաջացած խափանումները պատճառները և վերացնել այդպիսիները:

բ) հասկանալ, թե ինչպես են թռչում գնդացիքի արձակած գնդակները, թե գնդակների թռիչքի մեջ ինչպիսի անկանոնութիւններ են լինում և ինչ պատճառներից, ինչպես խուսափել դրանցից և ինչպես հակազդել դրանց:

գ) ձեռքի գնդացիքի կրակի հեռավորութեան սահմաններում ուշադրութեամբ և անընդհատ հետեւել մարտադաշտին, կարողանալ արագորեն գտնել մարտադաշտում հայտնվող նշանները, բավականաչափ ճշտութեամբ վորոշել մինչև այդ նշաններն լեղած հեռավորութիւնները և գիտակցորեն վորոշել, թե չե՞րբ, վոր նշանների դեմ և ինչպիսի կարակ պետք է վարել:

դ) կարողանալ արագորեն և ճարտարորեն պատրաստվել հրաձգութեան. փնտռել գտնել հատուկ հարմար տեղ, հարմարվել այդ տեղին (թաքստոց և քողարկում), ժամանակին փոխել պահեստաբանները, փոզերը, չմոռանալ վորոշել և ճիշտ հաստել նշանոցն և ուղղանը և ընտրել նշանառութեան կետը:

ե) կարողանալ կրակել կարճ և նորմալ հերթերով, իսկ հատուկ հարկ լեղած դեպքում նաև անընդհատ կրակով, նմանապես և հառ-հառ ձիգերով, կրակել միշտ դիպուկ, ուշադրութեամբ և զուսպ. խնամքով նշան բռնել և սահուն սղմել ձգանի վրա, հետեւելով նշանոցին, հատիկին և նշանին և ըստ հնարավորին նկատել, թե արձակած գնդակները վորտեղ են ընկնում կամ ուր են դիպչում:

զ) խնայող լինել փամփուռները ծախսելիս, շարունակ իմանալ փամփուռների հաշիվը և հոգ տանել փամփուռի առկա պաշարը շարունակ լրացնելու մասին:

68. Մասնավորապես.

ՆՇԱՆԱՌՈՒՄՆ ԿԱՐՏԱՎՈՐ Ե ԳՆԳԱԳԻՔԸ մշտապես սարքին և կրակելու համար պատրաստ պահել և կրակ վարել ջոկի հրամանատարի ցուցումներով. նա պետք է նույնպես պատրաստ լինի ինքնուրույն կերպով կրակ վարելու, ուստի պարտավոր է հսկել մարտադաշտի վրա, վորոշել հեռավորութիւնները մինչև նշանները, դիտել հրաձգութեան հետեւանքները և ճշտել կրակը. հրաձգութեան բոլոր ընդհատումների ժամանակ վորոշել գնդակոծի հնարավոր սեկտորը և հարկ լեղած չափով փոփոխել այդ սեկտորը, իր կողմի մարդկանց չհարվածելու համար:

ՆՇԱՆԱՌՈՒՄԻ ՈԳՆԱԿԱՆՐ ԲՈՂՐ ԴԵԿՔԵՐՈՒՄ ԱՉԿԵՐՈՒՄ Ե ՆՇԱՆԱՌՈՒՄԻՆ. նա պետք է շարունակ պատրաստ լինի փոխարինելու նշանառուին, պետք է հոգ տանի, վոր շարունակ գնդացիքի մոտ պատրաստի լինի անհրաժեշտ պատկանելիքը, պահունի փողերը և մասերը, փամփուռի և չուղի պաշարը. ստուգում է պահեստաբանների ճիշտ լցված լինելը և պահեստաբանները մատուցում է նշանառուին. հրաձգութեան ժամանակ նշանառուին ոգնում է դիտել կրակի հետեւանքները, փոխարինել փողը և վերացնել պատահած խափանումները:

ՓԱՄԻՐՏԱԿԻՐՈՒՄԵՐ ԿԵՏՔ Ե ԿԱՐԿ յեղած դեպքում գնդացիքը սնեն փամփուռներով և բոլոր անհրաժեշտ նյութերով. նրանց կրած փամփուռի պաշարը հետդհետե ծախսվելու դեպքում նրանք կազմակերպում են փամփուռը բերելու գործը. բացի դրանից, մարտում նրանք կատարում են հրացաններով զինված հրաձիգների պարտականութիւնները:

69. Մարտում ձեռքի գնդացիքի վրա դրվում են չափազանց կարևոր խնդիրներ, վորոնք հաճախ ծագում են անակնկալ կերպով և միշտ էլ արագ լուծում են պահանջում. ուստի բոլոր գնդացիքորդներն էլ, բացի հատուկ գիտելիքներից և ունակութիւններից, պետք բավականաչափ զարգացած մարտական և հրաձգային աչքաչափ ունենան, լինեն ինքնուրույն, վճռական և քաջարի՝ վտանգի բոլորներին:

70. Բոլոր գնդացիքորդները պետք է հավատ տածեն դեպի իրենց զենքի ուժը, դիտենալով, վոր թշնամու ընդհուպ մոտենալը սարքին գործող գնդացիքին, կապված է ծանր կորուստների հետ թշնամու համար: Պատասխանաբար բոլորներին, յերբ պետք է իր գործերը փրկել բացահայտ վտանգից, գնդացիքորդները պետք է արիութեամբ ունենան զոհաբերելու իրենց:

ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

71. Տեղի ընտրութեան ժամանակ գնդացիքորդները, բացի «Հրահանգ հրաձգային գործի» II-րդ մասի 102 և 204 հոդվածներում ասածներից, պետք է նկատի ունենան հետևյալը՝

ա) հնարավորութեան չափ ավելի լայն գնդակոծ, վորը սահմանափակված չլինի վոչ վայրով, վոչ միատեղ գործող հրաձիգների դասավորութեամբ:

բ) հակառակորդին թեից, կամ գոնե շեղակի հարվածելու հնարավորութիւն, վորպեսզի ավելի մեծացնել իր կրակի գործունեութիւնը և ոգնութիւն ցույց տալ իր հարկաններին:

գ) գնդացիքը թագցնելու հնարավորութիւնն, վոչ միայն հա-
կառակորդի գետնի վրայից, այլ և ողից բացած կրակից (քողար-
կում)։ առանձնապէս պետք է խուսափել տեղավորվելու այն կե-
տերում, վորոնք կրակող գնդացիքը մատնում են չերկնքի կամ
շրջապատող վայրի ֆոնի վրա։

Պետք է ոգտագործել բոլոր մատչելի սապօրային և քողարկ-
ման միջոցները պարագայի համեմատ։

72. Ձեռքի գնդացիքը մարտում շարունակ պետք է սերտ
կապ ունենա իր ստորաբաժանման հետ և դրավի այն դիրքերը,
վորոնք նրան լիակատար հնարավորութիւն կապահովեն ցան-
կացած ըոպելին կրակային աշակցութիւնն ցուց տալու իր և հա-
րևան ստորաբաժանմանը։ Նկատի ունենալով ձեռքի գնդացիքով
իր զորքերի գլխավերևով կրակելու վտանգավորութիւնը, գնդա-
ցիքն, ըստ հնարավորութեան, պետք է պահել իր զորամասի առ-
ջևում կամ թևերի վրա. իր մասերի արանքներով կրակելու ան-
հրաժեշտութեան դեպքում դեկավարով «Հրահանգ հրաձգային
գործի» II-րդ մասի 254 և 255 հոդվածներին ցուցումներով, կա-
րելին չափ ավելի մոտ տեղավորվելով առջևում գտնված ջո-
կերին։

ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ

73. Ձեռքի գնդացիքով կրակելու հիմնական դրութիւնը պառ-
կած, նեցուկից կրակելն է։ Հարմար հենարան ունենալու դեպ-
քում հնարավոր է կրակել նույնպէս ծնկից, նստած և կանգնած։

74. Պառկած նեցուկից կրակելու համար ցանկալի յե այն-
պիսի տեղ ընտրել, վոր հնարավոր լինի գնդացիքը հարթ ձևով
հաստել, վորպէսզի նշանառուն ևս կարողանա հարմար տեղա-
վորվել։

75. Մոտենալով գնդացի հաստման համար նշված տեղին,
նշանառուն պետք է գնդացիքը պատրաստ պահի հաստելու հա-
մար, այսինքն, պետք է նեցուկի վտաններն ազատի և կախ գցի.
նշանառուն աջ ձեռքով բռնում է կոթի ճտից, իսկ ձախով՝ պատ-
յանի լետևի մասի տակից. չերկար վազելագրի ժամանակ գըն-
դացիքը կարող է կախն ձախ ուսից։

76. Նշանառուն պետք է բավականաչափ հմտութիւն և աչ-
քաչափ ունենա գնդացիքը վազով այնպէս գետնի վրա դնելու,
վոր նեցուկի վտանները բավականաչափ խոր մտնեն հողի մեջ

(մինչև սահմանափակիչների հենարանները), իսկ գնդացիքն
ուղղված լինի դեպի նպատակը և լցված պատրաստ լինի կրա-
կելու համար։ Իրա համար նշանառուն գնդացիքը նեցուկներով
և կոթի անկյունում ցած է դնում գետնի վրա, ձախ ձեռնափի
փափուկ մասով վերևից սղմում է նեցուկի անուրի (խամուժի)
վրա, նեցուկի վտանները խրելով գետնի մեջ մինչև հենարանները,
ձախ ձեռքի բութ մասով մինչև վերջը շարժում է առաջ սակաւի
վերևի պատուհանի վահանիկը և պառկում է գնդացիքի լետևում,
պատրաստվելով հրաձգելու։

Գնդացիքի լետևում նշանառուի մարմնի դրութիւնը պետք է
մի վորոշ անկյան տակ լինի գնդացիքի և նշանի ուղղութեան նը-
կատմամբ (կես աջ դարձված)։ վտաններն ազատ (առանց ձգված
լինելու) մեկնված են և փոքր ինչ միմյանցից հեռու դրութեան
մեջ են. վտանների թաթերը դարձված են դրոի կողմը. ձախ ձեռ-
քի արմուկները ցցված է առաջ, ձեռքի թաթը գտնվում է կոթի
յելունի (անկյունի) տակ. աջ ձեռքն ազատ է գնդացիքը լցնելու
համար։

77. Յեթի հրաձգութեան համար պատրաստվելուց անմիջա-
պէս հետո նշանառուն գնդացիքը չի լցնում, ապա նա, գնդացիքի
լետևում գրավելով իր տեղը, փորձնական նշանառութեան միջո-
ցով, նշան բռնելով զանազան կետերի՝ ըստ բարձրութեան և ձա-
կատի, ստուգում է գնդացիքով կրակելու հարմարութիւնը և նե-
ցուկի դրվածքի ճշտութիւնը։

Գնդացիքով գործելու հարմարութեան համար անհրաժեշտ է,
վոր նշանառութեան ժամանակ նշանառուի մարմինը հավասարա-
չափ և ազատ հենված լինի չերկու արմուկների վրա, վորպէսզի
նշանառութեան ժամանակ վզի լարվածութիւնն չզգացվի վիզը
ձգելու կամ գլուխը դեպի յետ տանելու պատճառով։ Գնդացիքը
պետք է ազատ շարժվի դեպի շորս կողմը, առանց նեցուկները
շուռ տալու կամ գետնից հանելու։ Հարկ յեղած դեպքում նշա-
նառուն իր ողնականին հրամայում է փոփոխել նեցուկի դիրքը
կամ հենարան պատրաստել արմուկների համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Գնդացիքի կալուսութիւնը հրա-
ձգութեան ժամանակ մեծ չափով կախումն ունի նեցուկի
ճիշտ հրատեղուց և հողի մեջ ապահով ամրացնելուց։ Գնդա-
ցիքը նեցուկի վրա պետք է պառկած մնա առանց թեքվելու. նոր
ուղղութեամբ կրակը մի նոր նպատակի վրա տեղափոխելու
տնհրաժեշտութեան դեպքում, յեթի աջալիսի տեղափոխումը
նկատելի չափով թեքում է գնդացիքի դրութիւնը նեցուկի

վրա, հարկավոր ե նեցուկի տեղը փոխել և դնել հրաձգու-
թյան նոր ուղղութեան վրա, (կատարվում ե նշանառուչի
ցուցումով նրա ոգնականի կողմից): Նեցուկները պետք ե
բավականաչափ (մինչև սահմանափակիչները հենարանները)
խոր մտնեն և ամուր մնան գետնի մեջ: Գնդացրի հաստման
համար ամենալավ գետնը հանդիսանում և պինդ, ճիմով
ծածկված գետինը: Գնդացրը կոշտ գետնի վրա (սառած
կամ քարքարոտ) հաստելու անհրաժեշտութեան դեպքում՝
պետք ե գնդացրի հաստելուց առաջ քլուսգով գետնի մեջ
փոսեր փորել նեցուկների համար. Գնդացրը փխրուն և
թուլ գետնի մեջ (ձյուն, ավաղ) հաստելու ժամանակ ող-
տակար ե նեցուկի տակ տախտակի հենարան դնել նեցուկի
վտտների համար պատրաստած անցքերով. դրա համար պետք
ե վերցնել 3—4 սմ. հաստութեան, 45—50 սմ. լերկարու-
թյան և 12—15 սմ լայնութեան տախտակ, վորը պետք ե
գետնի մեջ ամրացնել փոքրիկ ցցերով, կամ պետք ե վերց-
նել հատակով վեր դրված փամփշտի դատարկ արկղ, ընկըղ-
մելով գետնի մեջ:

78. Հրաձգութեան պատրաստվելը ծնկից, նստած և կանգ-
նած դրութեամբ հնարավոր ե համապատասխան հենարան լինելու
դեպքում. ընդ սմին, կարելի յե հրաձգել ինչպես նեցուկի վրա-
յից, այնպես ել առանց նեցուկի: Հենարանը պետք ե կոշտ լինի
(քար, ծառ), վորովհետև կոշտ հենարանը գնդացրին կայունու-
թյուն չի տալիս և կարող ե նրա արտաքին մասերը մնասել. չա-
փաղանց փափուկ և փխրուն հենարանը (ավաղ) նույնպես ան-
հարմար ե, վորովհետև նրա վրա գնդացրին արագ ցածրանում ե:

Գնդացրի համար լավագույն հենարանը պինդ, ճիմով ծած-
կված գետնն ե: Կոշտ հենարան (ծառի կոճղ, ցանկապատ, պա-
տուհանի ներքնատախտակ) ոգտադրծելու անհրաժեշտութեան
դեպքում այդպիսին նախապես պետք ե ծածկել մի վորևե բանով
(ճիմով, ավաղ կամ թեփ լցրած պարկով, դրատի կոլորով և այլն):

79. Առանց նեցուկի հենարանից հրաձգութեան պատրաստ-
վելիս և հրաձգելիս գնդացրը նեցուկի վրա պետք ե այնպես
պառկած լինի, վոր հենարանը չխանգարի մխանդմների աշխա-
տելուն. դրա համար գնդացրը պատյանի լետեի մասով և ուղ-
ղություն տվող խողովակով պետք ե այնպես դնել հենարանի
վրա, վոր ամբողջ սակառը մնա հենարանի յետևում. սակառի
ներքեի պատուհանը պետք ե ազատ և գետնից բավականաչափ
բարձր լինի. հենարանը չպետք ե խանգարի մխոցի և բռնակի

շարժումներին. նեցուկը կամ ազատ կախված ե հենարանի առ-
ջևում, յեթե հենարանը բարձր ե, կամ թե նեցուկը բոլորովին
անշատում են գնդացրից, յեթե հենարանը ցածր ե:

80. Նշանառուն հենարանին հարմարվում ե իր հայեցողու-
թյամբ, ինչպես ավելի հարմար ե հրաձգութեան համար. յեթե
հենարանը միաժամանակ ներկայացնում ե իբրև ծածկարան, ա-
պա պետք ե կարելիին չափ ծածկարանին ավելի մոտ տեղա-
վորվել:

81. Գնդացրային համարների մյուս համարները հրաձգու-
թյունից առաջ տեղավորվում են.

Նեանառուի ոգնակակներ՝ աջ կողմից, փոքր ինչ գնդացրից
յետև, ըստ հնարավորութեան ծածկված, սակայն միշտ պատրաստ
արագ մոտենալու գնդացրին և նշանառուչին ոգնելու (գնդացրի
տեղափոխություն, փողի փոխարինում, խափանումների վերա-
ցում) կամ նրան փոխարինելու համար.

Փամփոսակիրներ՝ գնդացրից վոչ հեռու, աջ կամ ձախ կող-
մից և յետև, սակայն առանց կապը կորցնելու գնդացրի հետ և
միշտ կազմ ու պատրաստ, իրենց հրացանների կրակով և սի-
նով ոժանդակելու գնդացրին:

ՊԱՀԵՍՏԱՐԱՆԻ ՄԻԱՅՆԵԼԸ ՅԵՎ ԳՆԴԱՅՐԻ ԼՅՆԵԼԸ

Պահեստարանը միացնելու և գնդացրը լցնելու համար՝

Նեանառուի ոգնակակներ նշանառուին մատուցում ե պահեստա-
րանը, պահեստարանի կեռիքի յերկճիղը, դարձնելով դեպի ա-
ռաջ, իսկ ընդունիչը՝ դեպի ցած և յետ.

Նեանառուն աջ ձեռքով մխոցի բռնակը քաշում ե դեպի յետ
և ոգնականից ընդունելով պահեստարանը, դնում ե այն գնդա-
ցրի վրա, պահեստարանի կեռիքի յերկճիղն ուղղում ե պատյանի
լետեի մասի վրա յեղած հենարանի փորատների մեջ և վերևից
թեթե սղմելով՝ պահեստարանի յետևի մասը սղմում ե ցած,
մինչև վոր պահեստարանի յերունը ճանկվում ե մղակով:

Պահեստարանը պետք ե ցած սղմել առանց պահեստարանի
վրա ավելորդ ուժ գործադրելու և առանց խփելու նրա վրա. յե-
թե թեթե սղմելով պահեստարանը ցած չի իջնում մինչև մղակը,
ապա նշանառուն պետք ե անշատի պահեստարանը և ստուգի,
թե արդյոք մինչև վերջը քաշված ե դեպի առաջ սակառի վերևի
պատուհանի վահանիկը և ճիշտ դրութեան մեջ ե հերթական
փամփոշուք պահեստարանի ընդունիչի մեջ:

Թեյել պահեստարանը գնդացրի վրա դրած ժամանակ հերթա-

կան փամփուօսք դեղիվս գտնվում և պահեստառանում, այնուամենայնիվ գեղացիք լցված և յեվ գտնվում և ավսումսիկ կրակի ապահովիչ վսփի վրա:

Լցնելով գնդացիքը, նշանառուն աջ թևը տեղափոխում դրնում և կոթի ճտի վրա, իսկ ձախ ձեռքը՝ կոթի տակ:

ՆՇԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

83. Ձեռքի գնդացրի համար իբրև նշաններ ծառայում են գլխավորապես հակառակորդի կրակային կետերը, նրա կրակային դիմադրության շերտի փոքր տեղամասերը և ընդհանրապես այն նշանները, վորոնք ամենից կարևորներն են և հրաձիգներին խոչնդոտ են հանդիսանում կատարելու նրանց վրա դրված մարտական խնդիրը կամ վորոնք սպառնում են հրաձիգներին, նույնպես և հարևան հրաձգային ջոկերին, յեթե այդ հարկավոր և ըստ մարտի պարագայի: Ոգտվելով իր դուրադարձութունից, արագաձգութունից և ղիպկութունից, ձեռքի գնդացիքը կարող և հարվածել նաև հրացանաձիգներին համար սովորական համարվող նշանները:

Ձեռքի գնդացրի կրակը ամենից գործոն կրակ և հանդիսանում այն դեպքերում, յերբ այդ կրակը բացվում և անակնկալ, փոքր հեռավորութուններից և ուղղված և ձգված նշանի յերպնությամբ կամ շեղակի ուղղությամբ:

Նշանների ընտրության ժամանակ առաջին հերթին միշտ պետք և հարվածվի կարեվորագույն նշանը, այսինքն, այն նշանը, վորը տվյալ բոպային ամենից ավելի մեծ վտանգ և սպառնում, վորն ամենից ավելի մեծ դիմադրութուն և ցույց տալիս կամ ընդհանրապես ամենից ավելի մեծ շափով խանգարում և մարտական խնդրի կատարմանը:

Այդպիսի նշաններից պետք և ընտրել ամենաձեռնուն, ալսինքն, ամենից մոտ գտնվող և ամենից ավելի հեշտ խոցելի նշանը:

ԿՐԱԿԻ ՏԵՍԱԿԻ ՅԵՎ ԿՐԱԿ ԲԱՆԱԼՈՒ ՄՈՄԵՆՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

84. Ձեռքի գնդացիքը կարող և կրակել.

ա) նորմալ հերթերով՝ 5—6 ձիգ, պարբերական ընդհատումներով:

բ) կարճ հերթերով՝ 2—3 ձիգ.

գ) անընդհատ կրակով, տևողութունը նայած պարագային և

դ) հատ-հատ ձիգերով:

85. Գնդացրային կրակի սովորական յեղանակը հանդիսանու և նորմալ հերթերով ընդհատումներով կրակը. այդ ընդհատումն. ոն անհրաժեշտ են նշանառությունն ստուգելու և վերականգնելու համար, պահեստառանը և փողը փոխելու համար: Այդպիսի պայմաններում ձեռքի գնդացրի ամենից արագ և արդյունավետ կրակը կարելի չե ընդունել 90—100 ձիգը մեկ բոպելում:

86. Ձեռքի գնդացրից կարճ հերթերով հրաձգութունը մարտում կիրառվում և փամփուջտ տնտեսելու նպատակով, յերբ նշանը կարող և հարվածվել փոքր թվով ձիգերով, նաև փորձնական հրաձգության ժամանակ, յեթե վայրը նպաստում և դիտողությանը:

87. Անընդհատ կրակ՝ պահեստառանը պահեստառանի յետևվից, մինչև 150 ձիգ մեկ բոպելում, ձեռքի գնդացիքը կարող և տալ շատ կարճ ժամանակվա (2—3 բոպելից վոչ ավելի) ընթացքում: Առանց ընդհատումներից հրաձգության ժամանակ նշանառութունն արագ խախտվում և, նշանառուն դժվարությամբ և կարողանում հետևել նշանառության գծին և գնդացիքը պահել ձիշտ նշան բռնած դրության մեջ: Բացի դրանից, յերկարատև անընդհատ հրաձգութունն արագ շիկացնում և ձեռքի գնդացրի փողը, վորի հետևանքով հատիկի շուրջն յեղած ողն սկսում և ուժեղ կերպով շարժվել, վորպիսի հանգամանքը նույնպես դժվարեցնում և նշանառութունը: Փողի շիկանալով, փողի լայնանալու հետևանքով գնդակների հետագծերն աստիճանաբար սկսում են ցածրանալ: Իսկ շատ խիստ շիկանալու դեպքում գնդակները կարող են դուրս գալ ակոսներից և անկանոն թռչել, ուստի յերկարատև անընդհատ կրակն ընդհանրապես չի բուլլասրվում:

Գնդացրից լիակատար լարված հրաձգութուն տեղին և պահանջել միմիայն հատուկ կրիտիկական բոպելներին, յերբ այլ միջոց չկա վրա տվող թշնամու մոտալուտ գրոհը յետ մղելու կամ թշնամու ջախջախումն ավարտելու համար:

88. Ձեռքի գնդացրից հատ-հատ ձիգերով հրաձգութունը մարտում կիրառվում և իբրև բացառութուն, թագցնելու համար գնդացիքը և նրա գտնված տեղը և մոտավոր տարածություններից ամենամանր նշանները գնդակոծելու համար, յերբ այդպիսի նշաններ հարվածելու համար պահանջվում և՛ կատարել մանրակրկիտ նշանառութուն և ձիշտ ձիգ:

89. Կրակ բանալու ամենաձեռնատու մոմենտներն են.

ա) յերբ նշանը կտրելի չե հարվածել անսպասելի կերպով, թշնամուն հանկարծակի բերելով:

բ) յերբ նշանը կուտակվում է, թեք կրակի տակ է դնում, կամ ամբողջ հասակով վեր է բարձրանում.

գ) յերբ նշանն ավելի պարզ է լերևում (որինակ, ավելի լավ է լուսավորված):

ՆՇԱՆՈՅԻ ՅԵՎ ՈՒՂՂԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՍՏՈՒՄԸ

90. Նշանոցի բարձրութունն ընտրելիս դեկավարվել մինչև նշանն լեղած հեռավորությամբ, ուշադրության առնելով յեղանակը:

Յեթե հեռավորութունը չի մատնանշված, ապա նշանառուն պետք է ինքն աչքաչափով հեռավորութունը վորոշի:

91. Նշանոցը մի վորոշ բաժանման (խազի) վրա հաստեղու համար հարկավոր է գնդացրի կոթի անկյունը հենել գեանին և ձախ ձեռքով պահելով կոթի սակից, աջ ձեռքի բուժով և ցուցամատով հուպ տալ անրիկի մղլակները, անրիկն առաջ տալ նշանոցի կոճղակի վրայով, մինչև վոր անրիկի առջևի յեղը համընկնի նշանոցի քանոնի հարկավոր խազի վրա, վորից հետո ազատ թողնել մղլակները:

92. Նշանոցային քանոնի վրա բաժանումներն արված են յուրաքանչյուր հարյուր մետրից հետո, ըստ վորում, քանոնի աջ կողմում խազված են կենտ թվերը, իսկ ձախ կողմում՝ զույգ թվերը:

Կարճ խազերը ցույց են տալիս միջանկյան հեռավորութունները յուրաքանչյուր 50 մետրից հետո:

93. Ուղղանը հաստեղու համար հարկավոր է գնդացրի կոթի անկյունը հենել գեանին, դնել նշանոցային քանոնն ուղղաձիգ դրությամբ, և աջ ձեռքի մասներով բռնելով պատվող պտուտակի գլխից, պտտեցնել այն. ուղղանն աջ շարժելու համար պտուտակը պետք է տալ դեպի աջ, իսկ ձախ շարժելու համար պտուտակը պետք է տալ դեպի ձախ, մինչև վոր նշանոցային քանոնի կտտարի վրայի խազն համընկնի ուղղանի հարկավոր խազի վրա, վորից հետո նորից նշանոցային քանոնը պետք է դնել կոճղակի վրա:

Ծանոթություն: Յեթե հնարավոր չի լինում պտտվող պտուտակը մատներով պտտեցնել, ապա պետք է գործիչ պտուտակիչով, նրա լիտը (բերանը) մտցնելով պտուտակի գլխի կտրուկի մեջ:

97. Ուղղանի 1 բաժանումով տեղափոխումն այս կամ այն կողմը փողանցքի առանցքը (հետևաբար նաև գնդակը) նշանա-

ռության գծից թեքում է միևնույն կողմը մոտավորապես հրաձգության հեռավորության 0,002-ի չափով (յերկու հազարերորդական մասը), այսինքն՝ 500 մ. վրա հրաձգելիս մոտ 1 մետր, 1000 մ. վրա հրաձգելիս՝ մոտ 2 մետր և այլն. յերկու խազը փողանցքի առանցքը (նաև գնդակը) թեքում են յերկու անգամ ավելի չափով, 3 խազը՝ յերեք անգամ ավելի չափով և այլն: Այսպիսով, վորպեսզի 500 մ. վրա հրաձգելիս գնդակը 6 մ. այս կամ այն կողմը թեքվի, պետք է ուղղանը 6 խազով, իսկ 100 մ. վրա հրաձգելիս՝ 3 խազով տեղափոխել միևնույն կողմը:

95. Ուղղանի այդ տեղափոխութունն անհրաժեշտ է լինում հականերգործելու գնդակի թեքման վրա, վորն առաջ է գալիս դերիվացիայից (շեղումից) և կողքից փչող քամուց, գնդացրի մարտի (սփելու) փոփոխվելուց, նույնպես և հրաձգության լայնակի ուղղությամբ շարժվող նշանների նկատմամբ հարկավոր կանխումն ստանալու համար: Ուղղվելով ուղղանի տեղափոխումներով փողանցքի առանցքը նշանառության գծից այս կամ այն կողմը թեքելու հնարավորութունից, նշանառուն հնարավորութուն ունի հրաձգության ժամանակ գնդակները թեքելու այս կամ այն կողմը, առանց տեղափոխելու նշանառության կետը, այսինքն՝ միշտ նշան բռնելով հենց նշանին (տես §§ 123, 124, 126 և 127):

Ն Շ Ա Ն Ա Ռ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

96. Գնդացրը նշանին ուղղելու համար հարկավոր է.

ա) առանց արմունկները գեանից կտրելու, աջ ձեռքով կոթը ձիշտ բռնել այնպես, վոր միջամատով վեր բարձրացվի ավտոմատիկ ապահովիչի յելունը, իսկ ցուցամատն անցկացնել ձգանի կամրջակի մեջ, պահելով ձգանի առջևում. ձախ ձեռքով ցածից կոթը վեր բարձրացնել և կիպ դեմ տալ աջ ուսին. ընդամենն անհրաժեշտ է, վոր ձախ ձեռքի արմունկն ամուր հենարան ունենա, իսկ աջ ձեռքն ազատ լինի կոթն ուսին դեմ տված դրության մեջ պահելուց և արմունկով հենված լինի գեանին.

բ) աջ աչքով նայելով նշանոցի դիտոցի միջոցով դեպի հատիկի դադաթը, ուսի և կոթի շարժումով գնդացրին ուղղել այնպես, վոր տեսողության ձառագայթը (նշանառության գլիճը) անցնի նշանոցի դիտոցի մեջտեղում դեպի ված և նրա կողերին հավասար հատիկի դադաթի վրայով և հենվի նշանառության կեանի:

Ծանոթություն. 1. Ձախ աչքի դարդացած տեսողութուն ժամանակավոր ձեռնարկ—4

ուսնեցող հրաձիգներին համար թույլատրվում է կտրել ձախ ուսին դեմ տալ:

Չ. Կոթն ուսին դեմ տալու և հրաձգութեան ժամանակ գրնդացրին կաշունութիւնն տալու համար հարկաւոր և ոգտագործել փոկը: Իրա համար սովորական գնդացրային փոկը պետք է մի փոքր լերկարացնել և լետեի ծայրում մերք պատրաստել, փոք նշանառուն հագցնի իր աջ վոտքին:

Փոկից ոգտվելիս՝

ա) փոկի լերկարութիւնը պետք է հարմարեցված լինի լուրաքանչլուր նշանառուի համար այն հաշվով, վոր վոտքն աղատ մեկնելիս փոկը լրիվ ձգվի և ապահովի հետալի նշանառութիւնը, կտրել պետք է առանց ձեռքերի ոգնութեան կիսկ կտրած մետ ուսին:

բ) ձգված փոկը չպետք է գնդացրը մի կողմ թեքի փոկը պետք է ձգել գնդացրի պատյանի տակից և ճիշտ նրա ուղղութեամբ, զրա համար փոկի առջևի ծայրն ամրացնում են վոչ թե գնդացրի սովորական վերևի (պատյանի ձախ կողմում գանվող) փոկողից, այլ այն լրացուցիչ փոկողից, փորն ամրացված է ցածից գնդացրի պատյանի վրա՝ պահեստարանի առջևում հագցրած հավելչալ ողից. հնարավոր է նույնպես փոկը պատյանի տակից ամրացնել նեցուկին:

Նշանառութեան ժամանակ նշանառուն իր աջ վոտքի դրութեամբ կանոնավորում է փոկի ձգվածութիւնը. ընդ սմին, գնդացրի լետում պատկած նշանառուն կարող է նշանի նկատմամբ ավելի ուղիղ դիրք ունենալ (առանց կիսադարձի):

97. Նշանառութեան կետի ընտրութիւնը կատարվում է այն հիմունքներով, վոր շարադրված է «Հրահանգ հրաձգային գործի» լերկորդ մասի 47—52 հոդվածներում:

Ընդհանուր կանոնն է. մանր նշաններին կրակելիս միշտ պետք է հատիկը ցածից մոտեցնել գնդակովոց նշանի կամ բնագծի ներքևի լերկացող լեզրի տակին:

ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՐԵԼԸ

98. Ձեռքի գնդացրից կրակ բանալու համար հարկավոր է ցուցամատով սահուն սղմել վայրիջուց ձգանը և այլևս ձգանը բաց չթողնել, քանի դեռ հարկավոր է կրակել:

99. Հերթով հրաձգելիս սխտեմարար ընդհատումներ անելու համար հարկավոր է կարճ ժամանակով բաց թողնել ձգանը, ա-

ռանց փոխելու գնդացրի դրութիւնը և նշանառութիւնը: Գրնդացրորդը մշտական պրակտիկայով պետք է իր մեջ ճարտարութիւն և հմտութիւն մշակի՝ հերթերով (նորմալ և կարճ) այդպիսի հրաձգութիւն կատարելու համար, նույնպես և հերթերն արձակելու ժամանակ նշանառութեան գիծը պահպանելու և ընդհատումների ժամանակ արագորեն նշանառութիւնն ուղղելու համար:

Ընդհատումների տևողութիւնն արվում է, լեխելով նշանառութեան և հրաձգութեան ճշտելու պայմաններից, սակայն պետք է հաշվի առնել նաև կրակի լարվածութեան աստիճանը, լեխելով պարագայի պայմաններից:

100. Ձեռքի գնդացրից հրաձգութիւնն, իբրև կանոն, պետք է վարել մի կետի վրա, առանց արհեստական սրման, նկատի ունենալով, վոր գնդացրորդի համար դժվար է ճիշտ կրակ վարել անընդհատ և սահուն, ցրումով ըստ ճակատի կայն նշանների գնդակոծումն ըստ ճակատի կատարվում է սխտեմարար նշանառութեան կետը տեղափոխելով նշանի լերկայնութեամբ, նրա մեկ թեկից մինչև մյուս թեկն այն հաշվով, վոր դիպումներն հավասարապես բաշխվեն ամբողջ ճակատի վրա կամ նշանի տարբեր տեղամասերի և կետերի վրա, լեխելով նրանց հարվածվելու կարևորութիւնից: Այդ տեղափոխումների մեծութիւնը պետք է համապատասխան լինի ըստ լայնութեան միջուկային շերտի նորմալ մեծութեանը. մերձավոր տարածութիւնների վրա կրակելիս նշանառութեան կետի տեղափոխումները պետք է ավելի փոքր լինեն, իսկ հեռու տարածութիւնների վրա կրակելիս պետք է ավելի մեծ լինեն (տես §§ 109 և 111):

Ճակատով կրակի ասյովսի բաշխման ժամանակ նշանառութեան փոփոխումը կատարվում է ուսը կամ մարմինն աստիճանաբար մի կողմ տալով, առանց նշանառութիւնը կամ գնդացրի դրութիւնը փոփոխելու:

101. Կրակը մեկ նշանից մյուսի վրա տեղափոխելու ժամանակ նշանառութիւնը փոփոխվում է հետևյալ կերպ.

ա) հեռավորութեամբ (բարձրութեամբ) փոքր չափով փոփոխելու դեպքում՝ արմունկներն իրարից հեռացնելով կամ միմյանց մոտեցնելով:

բ) ճակատով (լայնութեամբ) փոքր չափով փոփոխելու դեպքում՝ ուսը կամ մարմինն աջ կամ ձախ տալով:

գ) հեռավորութեամբ և միաժամանակ ճակատով փոքր տեղափոխումներ կատարելու համար՝ ուսը կամ մարմինը մի կողմ տալով և արմունկները միմյանց մոտեցնելով կամ իրարից հեռացնելով:

Բոլոր դեպքերում աչքը չպետք է հեռացնել նշանից և կոթնե-
ել չպետք է իջեցնել ուսից:

102. Յեթե կրակը տեղափոխելու համար հարկ է լինում նե-
ցուկների տեղը փոխել, ապա նշանառուն ուսից իջեցնում և կոթը
և գնդացիքը ձեռքից բաց չթողնելով, նոր դրուելուն և ընդու-
նում նշանի ուղղութեամբ. այդ նույն ժամանակ նշանառուի ող-
նականը փոխում և նեցուկների տեղը, նեցուկներին տալով գըն-
դացիին խոտորնակ (լայնակի) ուղղութեան:

103. Նեցուկից կրակելիս գնդացիքն ավելի կայուն դարձնե-
լու համար նեցուկի փոտները միշտ պետք է խոտորնակի ուղղու-
թեամբ ամրացված լինեն գնդացիքի ուղղութեան նկատմամբ և
փոքր ինչ պետք է թեքված լինեն դեպի յետ. դրա համար նշա-
նառուն կրակելիս պետք է գնդացիքը քաշի դեպի իրեն, կոթնե-
ամուր սղմելով ուսին:

104. Ավտոմատիկ հրաձգութեանից հատ-հատ ձիգերով հրա-
ձգութեան անցնելու համար պետք է դադարել ձգանի վրա սղմե-
լուց, և յետ քաշելով պահեստարանի մղակը, հանել պահեստա-
րանը: Դրանից հետո պետք է հատ-հատ լցնել առանձին ձիգ
կատարելու համար, պարզապես ձեռքով սակառի վերին պատու-
հանով փամփուշտը մտցնելով փամփշտանոցը, նախապես յետ
քաշելով բռնակը:

105. Հատ-հատ ձիգերով հրաձգութեանից ավտոմատիկ հրա-
ձգութեան անցնելու համար պետք է յետ քաշել բռնակը և պա-
հեստարանը միացնել գնդացիին:

106. Նշանառուի ողնականը հրաձգութեան ժամանակ դիտում
և հրաձգութեան հետևանքները և իր դիտողութեանները մալին
գեկուցում և նշանառուին:

ԿՐԱԿԻ ԴԱՐՔԵՆԵՐԸ

107. Կրակը ժամանակավորապես դադարեցնելու համար բա-
վական է ալլիս վալրիջուց ձգանը չսղմել, ձեռքը հեռացնել կոթի
ճտից և կոթի անկյունը դնել դեպի:

108. Հրաձգութեանը նորից պատրաստվելու համար հարկա-
վոր է աջ ձեռքով բռնել կոթի ճտից, միջամատով սղմելով ապա-
հովիչի յելունը և ցուցամատն անցկացնելով վալրիջուց կամբջա-
կի մեջ. ձախ ձեռքով կոթը գետնից բարձրացնել և դեմ տալ
ուսին (վերամբարձից ոգավելու դեպքում ուսը մոտեցնել կոթին,
իսկ ձախ ձեռքով բռնել վերամբարձի մուֆտայից):

109. Ձեռքի գնդացիքը դատարկելու համար նետառուն գըն-

դացիքի կոթը գետնին դնելով և նշանացի անրիկը և ուղղանը դնե-
լով մշտական հաստման վրա, աջ ձեռքով յետ է քաշում պա-
հեստարանի մղակը, իսկ ձախ ձեռքով հանում է պահեստարանը
և տալիս է սգնականին, և ապա, աջ ձեռքով բռնելով կոթի ճտից,
միջամատով սղմում է ապահովիչի յելունը, իսկ ցուցամատով
սղմում է վալրիջուց ձգանը, վորպետզի շարժական մասերը տանի
առջևի դրութեանը և թուլացնի յետադարձ—մարտական զսպա-
նակը:

ԿՐԱԿ ՎԱՐԵԼՈՒ ՏԵՆՆԻԿԱՆ ՄԱՐՑՈՒՄ

110. Ձեռքի գնդացիքից կրակ վարելու տեխնիկան, ալլինքն՝
նրա մարտական զործադրութեան տեխնիկան մարտական պա-
րազայի զանազան պայմաններում զանազան նշաններ գնդակո-
ծելու ժամանակ, բնորոշվում է նրա մարտական և ձգաբանական
(բալիստիկական) հատկութեաններով:

Ձեռքի գնդացիքի ձգաբանական հատկութեանները քիչ բա-
նով են տարբերվում հրացանի ձգաբանական հատկութեաննե-
րից: Ձեռքի գնդացիքի արձակած ամեն մի առանձին գնդակի
թռիչքը յնթարկվում է միևնույն որենքների և կախումն ունի
նույն պատճառներից, ինչ և հրացանից կրակելու դեպքում:

Սակայն ձեռքի գնդացիքից հերթերով կրակելու դեպքում, նրա
նշանառութեան անփոփոխ և միակերպ չի մնում յուրաքանչյուր
արձակած գնդակի համար, այլ ամեն մի գնդակ արձակելուց հե-
տո նշանառութեանն առավել կամ նվազ չափով խախտվում է և
փոփոխվում է սղմանական ձգի համեմատութեամբ, ուստի ձեռքի
գնդացիքից կրակելու ժամանակ ձիգերի ցրումը սովորաբար փոքր
ինչ ավելի մեծ կլինի, քան հրացանից կրակելու ժամանակ:

Նկատի առնելով գնդացիքի կրակի հզորութեանը, ալլալի-
սի ավելացած ցրումը վոչ միայն չի նսեմացնում ձեռքի գնդացի-
քի մարտական նշանակութեանը, այլև շատ դեպքերում նույ-
նիսկ ավելի ձեռնաու կլինի, որինակ, մինչև նշանը յեղած հեռա-
վորութեանը վոչ ճիշտ վորոշելու, խմբակային նշան գնդակոծե-
լու, ճակատով և խորութեամբ ցրված նշան գնդակոծելու ժամա-
նակ և այլն:

111. Նորմալ հերթերով (լավ նշանառու) հրաձգելու ժամա-
նակ ձեռքի գնդացիքի ձիգերի ցրման միջուկը (միջին, կտր թվե-
րով) հեռակալ չափերն ունի (մետրերով).

Հեռավորութեանը	200	400	600	800	1000
Միջուկն ըստ բարձրութեան և					
լայնութեան	0,5	1	1,5	2	2,5
Ըստ հեռավորութեան	225	200	150	125	100

Կարճ հերթերով կրակելիս ձեռքի գնդացրի կրակն ավելի կուտակ և կենտրոնացված է լինում, և, հետևաբար, ցրման միջուկի չափերը համապատասխանորեն նվազում են:

Հատ-հատ ձիգերով կրակելիս ձեռքի գնդացրի կրակը, շնորհիվ գնդացրի կայունության, քիչ բանով է զիջում հրացանային կրակին:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

112. Ձեռքի գնդացրը մերձավոր մարտի զենք է: Մերձավոր տարածությունների վրա ձիգերի ցրումը խորությամբ լիառատ ծածկում է նշանոցի հաստման մեջ կատարված հավանական սխալները: Ուստի, ձեռքի գնդացրից, ընդհանրապես, փորձնական հրաձգություն չպետք է կատարել, այլ հարկավոր է նշանոցի իսկական հաստումը գտնել անմիջականորեն հարվածող հրաձգության ժամանակ, խնամքով դիտելով գնդակների անկումը և առաջին կամ հատուկ կոնտրոլ հերթերի հետևանքները և այդ դիտողությունների հիման վրա ճշտել նշանոցի և ուղղանի հաստումը: Ընդ սմին, յեթե դիտողությունը կտա պարզ չհաստատներ կամ անդրանցումներ, ապա համապատասխանորեն նշանոցը պետք է ավելացնել կամ պակսեցնել 100 մ. (կամ 200 քաշով, յեթե նշանոցը քաշվերով է):

ՀԱՐԿԱՅՈՂ ՀՐԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

113. Յերբ վստահություն կա, վոր նշանը ճանկված է ձիգերի խուրձի միջուկով, անցնում են հարվածող հրաձգության, դիտելով կրակի արդյունքները, ճշտելով նշանոցը, ուղղանը և նշանառություն կետերը:

Հարվածող հրաձգությունը կատարվում է նշանի ամբողջ ճակատի վրա, իսկ յեթե նշանը խորություն ունի (ավելի, քան ըստ հեռավորության ցրման միջուկային շերտի մեծությունը), ապա նաև խորությունը: Կրակի լարվածությունն ու տեղությունը կախումն ունին նշանի կարևորությունից և խոցելիության աստիճանից և այլ պայմաններից:

ՄԻԱՅՆԱԿ ՅԵՎ ԽՄԲԱԿԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԲՆԱԳՅԵՐԻ ՅԵՎ ԲՈՂԱՐԿՆԵՐԻ ԳՆԴԱԿՈՍՈՒՄԸ

114. Միայնակ նշանը, վոր կարող է հարվածվել փոքր թվով ձիգերով, ավելի ձեռնառ չե գնդակոծել կարճ հերթերով, իսկ յեր-

բևեռն ևլ նույնիսկ հատ-հատ ձիգերով, վորպեսզի չմասնվի գրնդացրի դասավորման տեղը:

115. Խմբակային նշանը, յերբ հարկ չկա նշան բռնելու նրա յուրաքանչյուր առանձին կերպարանին, հարկավոր է գնդակոծել նորմալ հերթերով, իսկ բացառիկ դեպքերում նաև անընդհատ կրակով, նայած նշանի կարևորությունը, նրա վստահավորությունը, հեռավորությունը, նայած թե նրան ինչ արագություն անհրաժեշտ է հարվածել:

116. Նեղ նշանը, վորն իր լայնությունը, բարձրությամբ և խորությամբ ավելի մեծ չի, քան ձիգերի բնական ցրման միջուկի համապատասխան չափերը (ոճաչար, միաշար կամ զուգաշար սյուն), գնդակոծվում է նեղանուրբյան մեկ կիսով:

117. Լայն նշանը, վորի ճակատի յերկարությունն ավելի մեծ է, քան ըստ լայնության ցրման միջուկի չափերը (շղթա, յերամաշար, թևի կողմը դարձած զորասյուն) գնդակոծվում ամբողջ լայնությամբ, նեղանուրբյան կեսն ասիմետրիաբար յեվ հավասարաչափ սեղափսխելով նշանի մեկ թևից դեպի մյուս թևը: Ընդ սմին, հենց նշանառության կետերի տեղափոխումը պետք է համակիրպել ձիգերի ըստ լայնության ցրման միջուկի չափերին ավյալ հեռավորության վրա (տես § 109):

Մերձավոր հեռակայությունից հակառակորդի գրեճը յեռ մղելիս, նույնպես և իր ջոկի գրեճն անմիջականորեն նախապատրաստելիս թուլատրելի չե լայն նշանի վրա կրակ վարել արհեստական ցրում կատարելով նշանի ճակատի յերկարությամբ:

Այս դեպքում կրակը վարում են կամ յերկար հերթերով (8—12 ձիգ), արհեստական կերպով ավելացնելով ձիգերի խորձի ցրումն ըստ լայնության, ուսն ու կոթը թույլ ու սահուն կերպով շարժելով այս կամ այնպես, վոր մեկ հերթի տակ ընկնեն նշանի մի քանի կերպարանները, կամ նույնիսկ կրակը վարում են անընդհատ կերպով նշանի ամբողջ լայնության վրա:

118. Խոր կամ ավելի մեծ տարածության վրա ցրված նշանը, քան ըստ հեռավորության ցրման միջուկն է, գնդակոծվում է նեղանոցի յեղու կամ յեթե հասուններով, նայած նշանի խորությունը և ըստ հեռավորության ցրման միջուկի չափերին:

119. Յեթե նշանը ֆառելված է տեսանելի բնագծով (խրամա, ցանկապատ, թփուտի յեզր և այլն), ապա այդ բնագիծը կամ քողարկը ծառայում է իբրև նշան, իսկ նրանց ստորտը ծառայում է իբրև գիծ՝ նշանառության համար:

ԱՆԱԿԵԿԱԼ ՀԱՅՏՆՎՈՂ, ԱՐԱԳ ԹԱԳՆՎՈՂ ՅԵՎ ՇԱՐԺՎՈՂ
ՆՇԱՆՆԵՐԻ ԳՆԴԱԿՈՇՈՒՄԸ

120. Մարտական պարագայում, մանավանդ հակառակորդից այնպիսի հեռավորութիւններէ վրա, յերբ ձեռքի գնդացրի կրակը կարող եւ ամենից գործոնը լինել, հազվագլուտ դեպքերում նշաններն իրենցից կենդկայացնեն անշարժ, պարզ չերևացող կերպարաններ կամ խճբակներ: Մեծ մասամբ դրանք կլինեն մարտադաշտի զանազան տեղերում անսպասելիորեն և կարճ ժամանակով հայտնվող նշաններ, վորոնք արագ կթաղնվին վայրի ծալքերում. դրանք կլինեն ավելի կամ նվազ արագութեամբ անդափոխվող նշաններ:

Մարտում ձեռքի գնդացրից այդպիսի նշանների գնդակոծումը հնարավոր եւ լոկ այն պայմաններում, չերբ՝

- ա) գնդացրին հանձնված շերտում մարտադաշտի վրա ամենաուշադէր և անընդհատ դիրտողութիւն և սահմանված.
- բ) արագորեն ճանաչում և գնահատում են անակնկալ հայտնվող նշանները.
- գ) արագորեն վորոշում են մինչև այդ նշանները չեղած հեռավորութիւնները.
- դ) արագորեն ընտրում և հաստում են նշանոցը, ուղղանը և նշանառութիւն կետը և

ե) արագորեն և ճարպիկորեն (ավտոմատիկ կերպով) կատարում են կրակ բռնալու համար անհրաժեշտ բոլոր նվազները.

Այդպիսի կրակ վարելու ունակութիւններ կարելի չե պատվաստել միմիայն համառ սխտեմատիկ պրակտիկայով:

121. Շարժվող նշանների վրա հրաձգութիւնը, բացի դրանից, պահանջում ե նշանոցը կամ ըստ բարձրութիւն նշանառութիւն կետը համապատասխան ձևով փոխել, չերբ նշանը շարժվում ե հրաձգութիւն ուղղութեամբ (հարձակվում կամ նահանջում ե) և փողանցքի առանցքը համապատասխան ձևով թեքել նշանառութիւն գծից, ուղղանը տանելով աջ կամ ձախ, կամ նշանառութիւն կետը դուրս բերելով մի կողմ, չերբ նշանը շարժվում ե հրաձգութիւն լայնակի ուղղութեամբ:

122. Յերբ նշանը շարժվում ե հրաձգութիւն հարթութեամբ (ուղղութեամբ), ապա այդպիսի նշանն ըստ ելութիւն պետք ե գնդակոծել նույն ձևով, ինչպես վոր անշարժ նշանը, սակայն պետք ե հիշել, վոր հրաձգութիւն պատրաստվելու, նշանոցն ու ուղղանը հաստելու և նշանառութիւն ժամանակամիջոցում նշանը կարող ե իր տեղը բաժականաչափ փոխել. նշանն իր տեղը կա-

րող ե փոխել այնքան ավելի մեծ չափով, վորքան ավելի մեծ ե նրա շարժման արագութիւնը, ուստի այդպիսի նշանի վրա պետք ե հրաձգութիւնն սկսել վոչ թե այն նշանոցի հաստումով, վորը համապատասխանում ե հայտարարված նշանի հեռավորութիւնը, այլ այն հեռավորութիւնը համապատասխանող նշանոցով, վորտեղ նշանը կարող ե գտնվել կրակ բանալու մոմենտին:

123. Յեթե հրաձգութիւն հարթութեամբ շարժվող նշանը բաժական ժամանակ մնում ե գնդակոծման տակ, ապա, հետևաբար, մինչև նշանն չեղած հեռավորութիւնն ել անընդհատ և զգալիորեն փոփոխվում ե, ուստի այդպիսի նշանի վրա հրաձգելիս նշանոցի հաստումը հարկավոր ե սխտեմաբար փոփոխել, նայած նշանի շարժման ուղղութիւնը և արագութիւնը. ընդ սմին, նշանոցը պետք ե փոփոխել՝ հետևակ նշանների նկատմամբ մի խազով, հեծլալ նշանների նկատմամբ՝ միանգամից 2—3 խազով:

124. Մինչև 100 մ. սահմաններում հակառակորդի արագ նահանջող հետևակի և մինչև 600 մ. սահմաններում նրա մոտեցող կամ հեռացող հեծելադորի վրա, յեթե ժամանակ չկա նշանոցը փոխելու, ձեռքի գնդացրով կարելի չե կրակել միևնույն նշանոցով, սակայն՝ պետք ե սխտեմատիկաբար տեղափոխել նշանառութիւն կետն ըստ բարձրութիւն (նշանի ստորոտից մինչև գագաթը և ընդհակառակը), նայած նշանի հեռավորութիւնը, շարժման ուղղութիւնն ու արագութիւնը:

125. Յեթե նշանը շարժվում ե հրաձգութիւն լայնակի կամ շեղակի ուղղութեամբ, ապա մինչև գնդակի նշանին հասնելը նշանը կարող ե այնքան տեղափոխվել, վոր բոլորովին դուրս գա նրա վրա ուղղված ձիգերի խճբից, և վորքան ավելի մեծ լինի մինչև նշանը չեղած հեռավորութիւնը և նշանի շարժման արագութիւնը, այնքան ավելի մեծ չափով նշանը դուրս կգա նրա վրա ուղղված ձիգերի խճբից, ուստի այդպիսի նշանները հարկածելու համար գնդակները պետք ե ուղղել վոչ թե նշանին, այլ նշանից այնքան առաջ, վորքան կարող ե նշանը տեղափոխվել գնդակի թոխչքի ընթացքում:

Ձեռքի գնդացրով կրակելիս այդ կանխումը կարելի չե ստանալ կամ ուղղանի համապատասխան տեղաշարժումով նշան բռնելով նշանին, կամ թե նշանառութիւն կետը համապատասխան չափով դուրս տանելով շարժվող նշանի առջևը:

126. Ձեռքի գնդացրով հրաձգելիս հարկավոր կանխումն ստանալու համար կարելի չե զեկավարվել ստորե բերվող կրճատ տղուսակով:

Գնդակի թոխչքի ընթացքով նշանը տեղափոխվում ե (մետրերով և ուղղանի հաղարերորդական բաժանումներով).

Հեռավորությունը	200 մ.	400 մ.	600 մ.	800 մ.	1000 մ.
Հեռակիր քայլով	0,5 մ.—2 ¹ / ₂ հազ.	1 մ.—3 ¹ / ₂ հազ.	1,5 մ.—2 ¹ / ₂ հազ.	2,2 մ.—3 հազ.	3 մ.—3 հազ.
» վազով	0,7 մ.—3 ¹ / ₂ հազ.	1,5 մ.—4 հազ.	2 մ.—3 հազ.	3 մ.—4 հազ.	4 մ.—4 հազ.
Ձիավորը քայլով	0,6 մ.—3 հազ.	1,2 մ.—3 հազ.	2 մ.—3 հազ.	2,5 մ.—3 հազ.	3,5 մ.—3 ¹ / ₂ հազ.
» վառով	1 մ.—5 հազ.	2 մ.—5 հազ.	3,5 մ.—6 հազ.	5 մ.—6 հազ.	7 մ.—7 հազ.
» սրբալավ	2,5 մ.—12 հազ.	5 մ.—12 հազ.	8 մ.—13 հազ.	12 մ.—15 հազ.	16 մ.—16 հազ.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—1. Այնպիսի նշաններ գնդակոծելու դեպքում, վրոնք շարժվում են վոչ թե հրաձգության լայնակի ուղղությամբ, այլ շեղակի ուղղությամբ՝ մի վրոչ անհայտ տակ պետք է վերցնել համապատասխանորեն ավելի փոքր կանխում։
 2. Հեծյալ նշաններ գնդակոծելու դեպքում, իբր հարկավոր կանխումն ստանալու համար ուղղանի բաժանումները չեն բախվաճանցում, կանխումն ավելի հարմար է վրոչել վոչ թե մետրերով, այլ ձիու մարմնով, ձիու մարմինը հարվելով 2 մետր։
 3. Գեղատարբերի գնդացրի ուղղանից ուղղվելու դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ վոչ նրա բաժանումներն արված են յուրաքանչյուր լեքիու հազարեք բողբոջանից չեռու։

127. Հրաձգության հարթության ուղղության (հակառակ կամ ուղեկից) փչող քամին (նույնիսկ ուժեղ) ձեռքի գնդացրով կրակելիս մինչև 1000 մ. հեռավորությունների վրա շատ աննշան ազդեցություն է գործում գնդակի թռիչքի վրա, միջին գնդակի թռիչքի հեռավորությունը փոփոխելով ընդամենը մի քանի տասնյակ մետրի չափ, ուստի կարելի չէ հաշվի չառնել։

128. Կողքի քամին, վորը փչում է հրաձգությանը լայնակի ուղղությամբ և նույնիսկ մի վորոչ անկյան տակ, կարող է գրնդակի թռիչքի վրա այնքան դժալի ազդեցություն գործել, թեքելով գնդակն սկզբնական ուղղությունից մի կողմ, վոր ձիգերի ամբողջ խորձը կարող է անցնել նշանի կողքից։

Այդ դրությունից խուսափելու համար հարկավոր է փողանցքի առանցքը նշանի ուղղությունից թեքել դեպի այն կողմը, վոր կողմից քամին է փչում, յե՛նելով քամու ուժից և հրաձգության հեռավորությունից։

Ձեռքի գնդացրով կրակելիս փողանցքի առանցքը կարելի չէ թեքել կամ համապատասխանորեն տեղաշարժելով ուղղանը, նշան բռնելով հենց նշանին, կամ թե նշանաուղղության կետը դուրս տանելով նշանից մի կողմ։

129. Կողքի քամու ազդեցության վրա հականերգործելու համար պահանջվող անհրաժեշտ ուղղումը (մետրերով և ուղղանի հազարերորդական բաժանումներով) կարելի չէ վորոչել ստորեքերվող կրճատ աղյուսակով։

Կողքի չափավոր քամու ժամանակ	Հեռավորությունը մետրերով				
	200	400	600	800	1000
Գնդակի խտորումը մետրերով	0,1	0,5	1,5	2,5	3,5
Նույնը՝ հազարերորդականներով	¹ / ₂	1	2 ¹ / ₂	3	3 ¹ / ₂

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—1. Ուժեղ քամու ազդեցությունը յեքիու անդամ ավելի մեծ է, իսկ թույլ քամու ազդեցությունը յեքիու անդամ ավելի պակաս է չափավոր քամու ազդեցությունից։

2. Յեթե քամին փչում է վոչ թե հրաձգության լայնակի ուղղությամբ, այլ մի վորոչ անկյան տակ, այլա ուղղումն հարկավոր է համապատասխանորեն նվազեցնել։

130. Ձեռքի գնդացրով կարելի չե հրաձգութուն կատարել նաև այն դեպքում, յերբ նշանառուն ինքը նշանը չի տեսնում, յերբ նա հակառակորդի աչքից ծածկված է վայրի ծալքով կամ, ընդհակառակը, նշանն է նշանառուի աչքից ծածկված մի վորևե ծածկարանով, կամ պարզ չի յերևում և մի պարզ չերևացող բնագիծ էլ չկա, վորը նշանակեր նշանի գտնված տեղը:

Ընդ սմին ձեռքի գնդացրի համար կարող է չերկու դեպք լինել.

1. Գնդացրի յետևում պառկած նշանառուն նշանը չի տեսնում, սակայն, մի փոքր բարձրանալով, նշանը տեսնում է: Այդ դեպքում նշանառուն, բարձրանալով այնքան, վոր կարողանա նշանը տեսնել, նշանի ծածկորդի և նշանին հավասար բարձրության վրա գտնվող ծածկարանի վրա նշում է մի վորևե ոժանգակ կետ, աջուհետև, հաստելով նշանոցը մինչև նշանը չեղած հեռավորության համեմատ, կրակ է բանում, նշան բռնելով ծածկարանի վրա նշված ոժանգակ կետին: Նշանառուի ոգնականը, գտնվելով գնդացրին մոտիկ մի այնպիսի դրության մեջ, վորը նրան թույլ է տալիս տեսնելու ծածկարանի յետևում գտնված նշանը, ճշտում է կրակը գեանաշուփերով (սիկոշեաներով) և կըրակի արդյունքներով:

2. Նշանառուն առհասարակ ծածկարանի պատճառով նշանը չի տեսնում գնդացրի մոտից, իսկ ջոկի հրամանատարը, գտնվելով մի փոքր ավելի բարձր, գնդացրի յետևում կամ փոքր ինչ մի կողմում, տեսնում է նշանը:

Այս դեպքում ջոկի հրամանատարը նշանի ծածկորդի վրա նշում է նշանառության մի ոժանգակ կետ, վորը նշանից ավելի բարձր կամ ցածր է (հետու կամ մոտիկ) գտնվում և պարզ չերևում է նշանառուին, և նշանը ցույց է տալիս նշանառուին, սակայն, նշանոցի հաստումն համապատասխանորեն այնքան է ցածրացնում կամ բարձրացնում, վոր չնայած նշանառության գծի բարձրանալուն կամ ցածրանալուն, այնուամենայնիվ նշանը ծածկվի գնդացրի կրակով:

Վորոշ հմտություն ձեռք բերելու դեպքում նշանոցի պահանջված ուղղումը կարելի չե աչքաչափով վորոշել, պայմանով, վոր ուղղման ճշտությունն ստուգվի, դիտելով առաջին հերթերի արդյունքները, կամ հատուկ փորձնական հրաձգությամբ:

Մեծ վստահությամբ նշանոցը կարելի չե արհեստական (ոժան-

դակ) կետով հաստել, ողտվելով այն հատուկ սանդղակից, վորը դետեղված է, այսպես կոչված, հրաձգային քանոնների վրա: Այդ սանդղակը պետք է ուղղաձիգ դիրքով մեկնած ձեռքում բռնել աջ աչքի դիմաց և մինչև նշանը չեղած իսկական հեռավորությանը համապատասխանող բաժանումն ուղղակի նշանին ուղղել, ապա, առանց քանոնը տեղափոխելու, նկատել, թե սանդղակի վոր բաժանման դիմացն է գալիս նշանառության ոժանգակ կետը: Հենց այդ բաժանումն էլ կլինի նշանոցի պահանջվող հաստումը:

131. Յեթե նշանառության ոժանգակ կետը չի գտնվում նշանի ճիշտ ծածկորդի վրա, այդ նշանից փոքր ինչ ավելի աջ կամ ձախ է գտնվում, այդ դեպքում կողքի ուղղումը կարելի չե հեշտությամբ ստանալ ուղղանի համապատասխան տեղաշարժումով, վորոշելով ոժանգակ կետի և նշանի միջև չեղած անկյունը՝ հազարերորդական բաժանումներով:

ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՎՐԱ

132. Թշնամու ողային աղարատների գնդակոծումը կատարվում է այն դեպքում, յերբ նրանք 500 մ. և ավելի պակաս բարձրության վրա չեն լինում, իսկ հատուկ նշանոցային հարմարանքներ ունենալու դեպքում՝ նաև ավելի մեծ հեռավորություններ վրա:

133. Ձեռքի գնդացրի համար բարձր թռչող նշանի վրա հրաձգություն կատարելիս, իբրև հենարան կարող է ծառայել ամեն մի բարձր հենաքան՝ խրամատի կամ ձորակի կատար, ցանկապառ սայլի կող, ծառի ճյուղ և այլն: Միայն անհրաժեշտ է, վոր այդ դեպքում պահպանվեն ներկա ձեռնարկի 76, 77 և 78 հոդվածներում շարադրված հենարանից կրակելու պայմանները: Ծայրահեղ դեպքում, հակառակորդի աչքից թազնված տեղերում կարելի չե ոգտագործել 3—4 հրացանից կազմված բուրգը՝ վրան դնելով գրատի կողմը կամ իրերի սուպրակը. բուրգի մեջ հրացանների կոթերը պետք է միմյանցից հեռու դրված լինեն:

134. Ողում թռչող նշանների վրա հրաձգությունը պետք է կատարել նորմալ հերթերով, շատ կարճ ընդհատումներով, իսկ հենարանի վրա գնդացրի բախականաչափ կաշուն լինելու դեպքում՝ նաև անընդհատ կրակով, սատիճանաբար տեղափոխելով կրակը նշանի շարժմանը համեմատ:

135. Ողային նշանների վրա հրաձգելու առանձնահատուկ պայմաններն են.

ա) նշանի տեսանելիության մեծ անկյունները՝ գնդացրի հորիզոնի նկատմամբ:

բ) բարձրացման մեծ անհյուսիսները, վոր փոխում են նույնիսկ գնդակի հետադի ձևը և նրա մնացած ձգաբանական հատկությունները.

գ) նշանի շարժման ահագին և բազմապիսի արագությունը (30-ից մինչև 80 մ. մեկ վայրկյանում), վորը պահանջում է մեծ և բազմապիսի կանխումներ.

դ) նշանի վրա դիտողություն ունենալու դժվարությունը.

ե) նշանի անսպասելի հայտնվելը և շարժվելը ցանկացած բարձրություն կամ ուղղություն վրա՝ հրաձգություն ուղղություն նկատմամբ.

զ) մինչև նշանը յեղած հեռավորություն անընդհատ և չափազանց արագ փոփոխվելը և այդ հեռավորությունը վորոշելու դժվարությունը.

է) փորձնական հրաձգություն և կրակի ճշտում կատարելու հնարավորություն լիակատար բացակայությունը և այլն, ուստի այդ նշանների վրա ուղղված հրաձգության տեխնիկան և կրակ վարելը խիստ կերպով տարբերվում են վերերկրյա հրաձգության արվորական չեղանակներից. այստեղ պահանջվում է հատուկ նշանոցային հարմարանքներ և գործիքներ ունենալ:

136. Այդ հատուկ նշանոցային հարմարանքների և գործիքների նկարագրությունը, վորոնք հնարավորություն են տալիս արագ (ավտոմատիկորեն) հաշվի առնելու ողաչին նշանների վրա հրաձգելու բոլոր բազմապիսի պայմանները, նույնպես և հրաձգությունը պարզեցնող այդ հարմարանքների գործադրության չեղանակները, շարադրված են հատուկ ձեռնարկների մեջ:

137. Հրաձգության պարզ չեղանակները, առանց հատուկ գործիքների և հարմարանքների գործադրելու, թեև ողաչին նշանը հարվածելու լիակատար մտահույսով չեն տալիս, այնուամենայնիվ, միջանի դեպքերում հարվածելու հավանականությունից դուրկ չեն և կարող են ոգտակար լինել, մանավանդ չեթե մեկ նշանի վրա կենտրոնացված է միջանի ձեռքի գնդացիների կրակը, թեկուզ և այդ կրակը միացված չլինի տեխնիկական դեկավարություններ:

Ընդ սմին.

ա) հրաձգության լայնակի ուղղությունը անցնող սավառնակի վրա հրաձգությունը պետք է կատարել նշանոցը 3-ով և ուղղանը 0-ով, անկախ սավառնակի հեռավորությունից, բայց 500 մետրից վոչ ավելի հեռու. գնդակի թռիչքի ընթացքում սավառնակի անդափոխման պատճառով հարկավոր (մոտավոր) կանխումն ստանալու համար հարկավոր է գնդացիներն ուղղել այնպես, վոր նշա-

նառություն գիծն անցնի սավառնակի առջևից նրա շարժման ուղղությունը, վերցնելով մի այնպիսի հեռավորություն, վորը միջանի անդամ մեծ լինի սավառնակի տեսանելի չափից. կանխման չափը կանխումն ունի մինչև սավառնակը յեղած հեռավորությունից և մոտավորապես հավասար է հեռավորություն մետրերի հարյուրյակներին թվին. որինակ, 300 մ. հեռավորության վրա թռչող սավառնակի վրա հրաձգելիս վերցրած կանխումը պետք է հավասար լինի սավառնակի 3 տեսանելի յերկարությունը, 500 մ. վրա հրաձգելիս՝ սավառնակի 5 յերկարությունը և այլն.

բ) հրաձգության հարթությունը, դեպի գնդացիներ յեկող սավառնակի վրա հրաձգելիս չի հարկավոր վերցնել կողքի կանխումն, իսկ ըստ բարձրության կանխումը կարելի է ստանալ նշանոցի հասաման համապատասխան բարձրացումով, նշան բռնելով ուղղակի նշանին, դրա համար, չեթե տեսանելիություն անհյուսիս մեծ է, ապա պետք է հաստել ամենաբարձր նշանոցը, այն է 15.

գ) գնդացիները գրոհող սավառնակի վրա հրաձգությունը պետք է վարել նշանոցը 3-ով (քայլերով 4-ով) և ուղղանը 0-ով, նշան բռնելով ուղղակի նշանին:

138. Ողաչին նշանների վրա ձեռքի գնդացիներ ընդհանրապես հրաձգել թույլատրվում է, չեթե այդ հրաձգությունից վոչ մի վտանգ չկա իր գործերի համար, ուստի կարելի է կատարել բացառապես հրամատարի ղեկավարությունը և այն ժամանակ, յերբ հրամատարը ճշտություն կորոշի, վոր հայտնված սավառնակը թշնամու սավառնակն է:

ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆ ԳԻՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ

139. Գիշեր ժամանակ ձեռքի գնդացիները հրաձգությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով, վոր շարադրված են «Հրահանգ հրաձգելիս գործի» յերկրորդ մասի 84—86 հոդվածներում:

140. Յեթե նշանները լուսավորված են արհեստական լույսով, արինակ՝ լուսարձակով, հրդեհով և այլն, ապա նրանց գնդակոծումը կատարվում է նույն կանոններով, ինչ և ցերեկով, հարկ յեղած դեպքում նշանոցն ու հատիկը լուսավորելով դադարալույս լապտերով: Սակայն պետք է նկատի ունենալ, վոր մինչև այդպիսի նշանները յեղած հեռավորությունները չի կարելի նույնչափ ձիշտ վորոշել, ինչպես ցերեկով. այսպես, որինակ, ավելի խիստ լուսավորված առարկաներն ավելի մոտ են թվում, թույլ լուսավորվածներն ավելի հեռու չեն թվում, մութ գույն ունեցողներն ավելի հեռու չեն թվում, ավելի բաց գույն ունեցողներն ավելի մոտիկ են թվում:

141. Լուսատու հրթիռներից և կարճատև լույս տվող արկերից ոգտվելու դեպքում գնդացրորդից մեծ ճարտարութունն և պահանջվում գտնել նշանը և նշան դնել կարճ ժամանակամիջոցում: Իրա համար հրթիռը կամ լուսատու արկն արձակելուց առաջ գնդացրորդը պետք է նայի նշանի լենթադրական դասավորման կողմը, աշխատելով տեսողութունը չլարել, բայց յերբեք չպետք է հետևի լուսավորող արկի կամ հրթիռի թռիչքին, վորպեսզի լույսը նրան չհուշարցնի: Նշանի լուսավորվելու ժամանակ նշանառուն գնդացրորդը նշան է դնում և ապա կրակ է բացում: Յեթե մեկ հրթիռի կամ արկի լուսավորելու ժամանակամիջոցում նա չի հասցնում այդ ամենը կատարելու, ապա նա մնացածը վերջացնում է նշանի հետևյալ լուսավորման ժամանակ:

142. Մթության մեջ ձեռքի գնդացրից կատարած հրաձգութունը կարող է հաջող լինել լոկ այն դեպքում, լերը հրաձգութունը նախապատրաստված է դեռ լույս ժամանակ: Այդ նախապատրաստութունը պետք է կայանա այն միջոցների կիրառման մեջ, վոր մատնանշված են «Հրահանգ հրաձգային գործի» լերկրորդ մասի 85 հոդվածում:

143. Գիշերային հրաձգության համար ձեռքի գնդացրի հաստունն դեռևս լույս ժամանակ կարող է կատարվել հետևյալ կերպ.

ա) գնդացրի նեցուկը հնարավորին չափ ամուր կերպով ամրացվում է գետնին.

բ) գնդացրը նշանոցի և ուղղանի համապատասխան հաստունով նշան են դնում նշված բնագծին կամ կետին և նրա կոթի կամ սակառի տակ՝ վայրիջուց ձգանի առջևում փայտյա խեչակ են դնում (ամուր խրում են գետնի մեջ) այն հաշվով, վոր գնդացրի կոթը խեչակի վրա իջեցրած ժամանակ նշանառութունը պահպանվի և վոր խեչակը նշանառութունն չխանդարի աջ ձեռքով գործելու հրաձգության ժամանակ:

Փայտյա խեչակի փոխարեն կարելի յե ուղտագործել կարճ տախտակ, վորը կողով գրված է գետնին և ամրացված է ցցերով. տախտակի վերին կողի վրա կտրուն են շինում՝ գնդացրի կոթը դետեղելու համար, նշանառության համակատ:

Յեթե պետք է հրաձգության պատրաստվել կրակի տեղափոխումով, ապա նույն ձևով առաջին խեչակի կողքին պետք է այլ խեչակներ ամրացնել կամ տախտակի վերին կողի վրա ամեն մի նոր նշանառությանը համապատասխանող լրացուցիչ կտրուններ պատրաստել և նկատել, թե վոր խեչակը կամ կտրունը վոր նշանառությանն է համապատասխանում:

Նշանառուն և նրա ոգնականը պետք է դեռևս լուսով մարզ-

վեն խեչակներից կամ կտրուններից ոգտվելու մեջ այն չափով, վոր կարողանան շոշափելով գտնել հարկավոր նշանառութունը:

144. Յեթե ձիշտ հրաձգության համար տվյալները չեն նախապատրաստված, ապա մթության մեջ ընդհանրապես չի հանձնարարվում կրակել, բացառությամբ այն դեպքերի, լերը այդ անհրաժեշտ և ընդհուպ մոտեցած թշնամու գրոհն յետ մղելու համար (մինչև 50—100 մ):

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

145. Փամփուշտների ծախքի պաշարը (պահեստարաններում) գնդացրորդները կրում են հատուկ պայուսակների մեջ: Նշանառուի մոտ գտնված պաշարը պետք է համարել անձեռնմխելի:

146. Ըստ կարիքի, ոգնականը նշանառութուն տալիս է լիք պահեստարանները և նրանից ընդունում է դատարկները և փամփշտակիրների միջոցով ուղարկում է թիկունք՝ լցնելու համար:

147. Պահեստարանների լցնելու գործը կազմակերպվում է դասակի փամփշտի կետում, իսկ լեթե հարկավոր է և հնարավոր է, ապա գնդացրին մոտիկ, մի ծածկված տեղում:

148. Մարտում փամփուշտ ծախսելու նկատմամբ պետք է ծալբահեղ խնայող, նույնիսկ ժլատ լինել, վորպեսզի ծանր բոլորներին իրեն ռիսկի չչենթարկել: Առանձնապես հետևել, վոր փամփուշտներ չկորցնեն: Սակայն յերբեք չպետք է կանգ առնել ամենաառատ չափով փամփուշտ ծախսելու առաջ, յերբ հարմար առիթ է հանդիսանում ձեռքի գնդացրի հուժկու կրակով հակառակորդին վճռական հարված տալու, կոտրելու նրա համառ դիմադրութունը կամ յետ մղելու նրա գրոհը:

ԿԱՐՃ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ԳՆԴԱՅՐՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՑՈՄՄՄՆԵՐ

149. Դեկտյարեի ձևերի գնդացրի վրա աշխատող գնդացրորդի սկզբնական պատրաստութիւնը պետք է անցկացնել հրացանաձգի պատրաստութիւն ընդհանուր հիմունքներով, միևնույն մեթոդներով, իսկ հաճախ նաև գործադրելով միևնույն ոժանդակ գործիքներն ու պիտույքները:

150. Գնդացրորդների հետ պարապմունքների կազմակերպման հիմքում պետք է դրված լինեն այն ընդհանուր ցուցումներն, բոլոր մասնագիտութիւնների կարմիր բանակայինների հրաձգային պատրաստութիւն ծրագրերն ու կանոնները, վորոնք շարադրված են «Руководство по подготовке бойца и мелких подразделений кадровых и территориальных стрелковых частей РККА» և «Հրաձգային պատրաստութիւն մեթոդիկա և հրաձգութիւնների կուրսեր. 1932 թ. 2-րդ հրատ.» գրքում:

151. Ձևերի գնդացրի գնդացրորդի հատուկ պատրաստութիւնը պետք է լինի այն վարժական խնդիրների հեռուդական տիրապետումն, վորոնք վորոշվում են «1932 թ. (2-րդ հրատ.)» հրաձգութիւնների կուրսերով և լրացուցիչ վարժութիւններով, վոր նշված են «Руководство по подготовке бойца и мелких подразделений» ձևանարի IV գլխում:

152. Այդպիսով, լուրջ քանչև լուրջ վարժական խնդրի մշակումն իր մեջ պետք է ընդգրկի ուսուցման բոլոր հիմնական բաժիններն, այսինքն.

ա) գնդացրի ուսումնասիրութիւնը, նրա հետ վարվելու և խնամելու կանոնները.

բ) ձգաբանութիւն վերաբերյալ համառոտ տեղեկութիւնների ուսումնասիրութիւնը.

գ) հրաձգային հետախուզութիւն և վայրի ոգաագործման տեխնիկայի ուսումնասիրութիւնը.

դ) գնդացրով կրակելու տեխնիկայի ուսումնասիրութիւնը.

ե) մարտում կրակ վարելու տեխնիկայի ուսումնասիրութիւնը: Բոլոր նշված բաժինները պետք է անցնել խիստ մեթոդական հաջորդականութեամբ և միևնույն ժամանակ սերտ կապ պահպանելով այդ բաժինների միջև և գնդացրորդների տակտիկական պատրաստութիւն հետ:

ՁԵՌՔԻ ԳՆԴԱՅՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

153. Ձևերի գնդացրորդների կողմից իրենց զենքի մասին ամենամանրամասն գիտելիքներ ունենալը խիստ կարևոր նշանակութիւն ունի: Առանց այդպիսի գիտելիքների չի կարող ապահովված լինել գնդացրի հուժկու և անխափան աշխատանքը մարտում: Այս միտքը սովորողներին պետք է ներշնչել հենց գնդացրի հետ ծանոթանալու նրանց առաջին իսկ քայլերից, վորպեսզի նրանց գրգել ամենամեծ ուշադրութեամբ վերաբերվելու այդ բաժնի ուսուցմանը:

154. Գնդացրի ուսումնասիրութիւն վերաբերյալ պարամունքներ անցկացնելու ժամանակ պետք է.

ա) ուսուցումն սկսել վոչ թե՛ գնդացրի առանձին մասերի և մեխանիզմների անշատ ուսումնասիրութիւնից, մտադրութիւն ունենալով լոկ հետագայում բացատրել նրանց փոխնարարութիւնը գնդացրի ընդհանուր աշխատանքի մեջ, այլ, ընդհակառակն, սկսել ամբողջ գնդացրից, վորպեսզի սովորողների համար չեղա լինի ըմբռնել այս կամ այն մասի, նրա կոչման, նմանապես և նրա կատարած աշխատանքի անհրաժեշտութիւնը՝ կապված գնդացրի մյուս մասերի և մեխանիզմների հետ.

բ) անդիր անել տալու փոխորեն պետք է սովորողների մեջ առաջ բերել հմտութիւն և ունակութիւն վորոշ մտավոր լեզրահացութիւններ հանելու, վորպիսի հանգամանքը նրանց հնարավորութիւն կտա ավելի հեշտ և հաստատուն կերպով յուրացնելու գնդացրի ուսումնասիրութիւն բարդ բաժինները:

գ) լուրջ քանչև լուրջ առանձին դասի մեջ պետք է մտցնել այնպիսի ծավալի գիտելիքներ, վոր սովորողներն ամբողջական և ավարտված պատկերացում ստանան գնդացրի աշխատանքի մի վորևէ վորոշակի մասին մասին կամ նրա մեխանիզմներից մեկնումնակի մասին. »

դ) բաց թողնել բոլոր այն մանրամասնութիւնները, վորոնք անմիջականորեն կապված չեն այն հիմնական մտքի հետ, վորի շուրջը կառուցված է ավյալ դասը, այլ մանրամասնութիւնների ուսումնասիրութիւնը պետք է անցնել լոկ այն ժամանակ, չերբ

սովորողները կըմբռնեն զնդացրի, վորպէս մեքենայի, ելութունը ալսինքն, չերբ կըմբռնեն զնդացրի ամբողջութեամբ վերցրած և նրա առանձին մասերի աշխատանքը.

ամեն մի սովորողի պետք է հնարավորութեան տալ տեսնելու, իսկ վորտեղ հարկավոր է, նաև շոշափելու բացատրվածը:

155. Գնդացրի ուսումնասիրութեան վերաբերյալ պարապմունքները, զեկավարվելով նրա նկարագրութեամբ, պետք է տանել ստորև բերված կարգով,

ա) ծանոթացում զնդացրի մարտական հատկութունների և նրա նշանակման հետ.

բ) ընդանուր զաղափար զնդացրի կազմութեան և նրա գըլխավոր մասերի աշխատանքի մասին հրաձգութեան ժամանակ.

գ) ծանոթացում զնդացրի հետ վարվելու տարրական կանոնների, նրա պահպանելու և դրա հետ կապված՝ զնդացրի քանդելու և սարքելու կանոնների հետ.

դ) զնդացրի բոլոր մեխանիզմների աշխատանքի և դրա հետ կապված նրա կազմութեան մանրամասնութեանների ուսումնասիրութեանը, միաժամանակ ցույց տալով այն պատճառները, վորոնք խափանում են առաջացնում զնդացրի աշխատանքի մեջ, և նշելով խափանումները վերացնելու լեղանակները.

ե) զնդացրի լրիվ քանդելու, սարքելու և մաքրելու կանոնների ուսումնասիրութեանը.

զ) զնդացրի զննելու կարգի ուսումնասիրութեանը քանդված և սարքված վիճակում և զնդացրի պատրաստելը հրաձգութեան համար.

է) ունակութեանների մշակում՝ հասկանալու համար զնդացրի կանոնավոր անխափան աշխատանքը խախտող պատճառները (խափանումները) և այդ խափանումները վերացնելու վերաբերյալ.

ը) զնդացրի խնամելու և պահելու մանրամասն կանոնների ուսումնասիրութեանը:

156. Վերևում թվարկված դասերից չուրաքանչյուրի ավանդուժը պետք է կառուցված լինի պրակտիկ հիմքի վրա. ամեն մի դաս պետք է միանգամայն պարզ և հասկանալի լինի և ապահովի պրակտիկ նվազների ըմբռնումն ու չուրացումն և բացառի ամեն մի անմտածված սերտում. չպետք է թույլ տալ, վոր սովորողները թուփակի նման անգիր անեն: Որինակ, զնդացրի մարտական հատկութունների հետ ծանոթացնելը և նրա նշանակումը պետք է անցնել ցուցական հրաձգութեամբ հրաձգարանում կամ հրաձգավայրում:

Գնդացրի խնամելու կանոնները պետք է անցնել հրաձգու-

թյունից հետո՝ զնդացրի փաստական մաքրման ժամանակ և ամենորչա այն հոգատարութեամբ և միջոցառումներով, վորոնց նպատակն է զնդացրը լիակատար մարտական պատրաստութեան մեջ պահել:

Քանդելու և սարքելու վերաբերյալ պահանջվող գիտելիքները չուրացնելու համար պետք է ոգտագործել այն դեպքերը, չերբ ծառայութեան և պարապմունքների պայմաններից յեկնելով, իսկապես վոր պահանջվում է զնդացրը քանդել:

Գնդացրի բոլոր մասերի և մեխանիզմների աշխատանքն ու նրանց փոխադարձ գործակցութեանները պետք է անցնել իրականում գիտել տալով այդ աշխատանքը, սկզբում նրա առանձին-առանձին մոմենտները, և ապա ամբողջութեամբ վերցրած, դրա համար պետք է ոգտվել չերկու զնդացրից՝ մեկը քանդված, մյուսը սարքված վիճակում:

Գնդացրը զննելու և հրաձգութեան համար պատրաստելու կարգը պետք է անցնել իրապես, զնդացրին ու պահեստարանները պատրաստելով զննման և հրաձգութեան համար, սկզբում վարժական փամփուշտներով, և ապա՝ մարտականներով: Սովորողներին վարժեցնելու համար, թե ինչպես պետք է ինքնուրույնաբար վորոշել և վերացնել մեխանիզմների անսարքութեանները կամ զնդացրի սխալ սարքված ու հրաձգութեան համար պատրաստված լինելը, սովորեցնողը յերբեմն առաջուց զնդացրի մեջ դիտավորյալ կերպով պետք է առաջացնի միջանի (ամենից ավելի բնորոշ) անսարքութեաններ և անձտութեաններ զնդացրի և պահեստարանի սարքելու և հրաձգութեան համար պատրաստելու վերաբերյալ:

Պատմանումների պատճառներն իմանալու և դրանց վերացնելու ունակութեաններ պետք է մշակել տալ իրական հրաձգութեան ժամանակ, ոգտագործելով անգնդակ փամփուշտներով հրաձգութեանը կամ անցնելով մարտական փամփուշտներով հրաձգութեան նախապատրաստական վարժութեանները և յերբեմն ելարհեստականորեն խափանումներ առաջացնելով, զնդացրի և պահեստարանի մեջ զննելով այս կամ այն անսարք մասը և փամփուշտը:

ՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԴԱՑՐԻ ԶԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

157. Զեռքի զնդացրի ձգարանական հատկութեանների և տեսական տեղեկութեանների ուսումնասիրութեանը պետք է անցնել վոր թե ինքնուրույն դասերի ձևով, այլ համապատաս-

խան բաժինների դասավանդման, հրաձգութեան և կրակ վարելու տեխնիկային վերաբերող հարցերի սերտ և անքակտելի կապակցութեամբ:

Որինակ, գնդակի հետազոծի և հետազոծի ձևի մասին գաղափար տալը պետք է կապակցել նշանոցի ընտրութեան և հաստման հարցերի ուսումնասիրութեան հետ:

Ձիգերի ցրման մասին գաղափար տալը պետք է ընդհանրապես կապակցել հերթերով հրաձգութուն կատարելու ուսումնասիրութեան վերաբերյալ դասերի հետ, իսկ տարբեր հեռավորութեանների վրա ցրման միջուկի չափերի մասին ծանոթացում տալը պետք է կապել միայնակ, խմբակային, լալն և խոր նպատակների, նմանապես և ընդգծների քողարկների գնդակոծման տեխնիկայի ուսումնասիրման հետ:

Գնդակի ծակել—անցնելու հարցը պետք է կապակցել ծածկված, քողարկված և զրահապատ նպատակների վրա կրակ վարելու տեխնիկայի հետ: Տարբեր հեռավորութեանների վրա նետման և անկման անկյունների և հետազոծի բարձրացման մասին գաղափար պետք է տալ ծածկված դիրքից և ծածկված նշանի վրա հրաձգութուն կատարելու դասերի ուսուցման ժամանակ:

Գնդակի թռչքի ժամանակի հարցը պետք է շաղկապել շարժվող նշանների վրա հրաձգութուն կատարելու ուսուցման հետ և այլն:

158. Վոչ մի զեպըում չպետք է պահանջել, վոր անգիր անեն այս կամ այն աղյուսակային տվյալները: Բավական է, յեթե սովորողներն աստիճանաբար, պրակտիկ պարապմունքների կարգով կուրացնեն այնպիսի կլոր թվեր, վորոնք անհրաժեշտ են զանազան նշանների վրա՝ բազմապիսի պայմաններում գնդացրից կրակ վարելու համար:

ՀՐԱՉԳԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ, ՄՍՐՏԱԴԱՇՏԻ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԵՆՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

159. Ուսուցման հիշյալ բաժինները պետք է անցնել ընդհանուր հիմունքներով, վոր վերաբերում են հրացանաձիգի պատրաստութեանը: Այդ բաժինների պրակտիկան պետք է շաղկապված անցնել հրաձգութեան տեխնիկան և կրակ վարելու տեխնիկան ուսումնասիրելու ժամանակ. այս հարցերը պետք է անցնեն գնդացրորդի ուսուցման վողջ դասընթացի միջով, ինչպես այդ նախագծված է «1932 թ. (2-րդ հրատ.) Հրաձգութեանների կուրսով»: Հարկավոր է հատուկ ուղադրութուն գարձնել մշակելու

համար հատուկ ունակութեանը՝ դիտելու գնդակների անկումն ու ճշտելու կրակը:

ՁԵՌՔԻ ԳՆԴԱՅՐՈՎ ԿՐԱԿԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

160. Այս բաժնի անցնելու ընդհանուր մեթոդը նույնն է, ինչ և հրացանաձիգի պատրաստութեան համապատասխան բաժնի անցնելու մեթոդը: Ամենից առաջ՝ հրաձգութեան տեխնիկայի լուրջ բաքանչյուր գործողութուն պետք է դատարար ուսումնասիրել, պահանջելով, վոր կարողանան կատարել առանց շտապելու, սակայն միանգամայն գիտակցորեն, ճիշտ և հստակ: Աստիճանաբար առանձինն վազները յուրացնելուց հետո անցնել նույն գործողութեանների շաղկապված կատարելու պրակտիկային, աստիճանաբար բարձրացնել պահանջները ճարպիկորեն և արագ կատարելու վերաբերյալ, վերջիվերջո հասնելով ավտոմատիզմի: Մատնանը շված հաջորդականութեան անհրաժեշտ է, վորպեսզի սովորողները չկարողանան այնպիսի ֆլասակար ունակութեաններ ձեռք բերել, վոր հետադարձում դժվար լինի արմատախիլ անել:

161. Ամեն մի գործողութուն ուսումնասիրելու ժամանակ պետք է պահպանել հետևյալ ընդհանուր կարգը.

ա) սովորողների ամբողջ խմբակին հայտնելով առաջիկա դասի նպատակը, ցույց տալով ուսումնասիրվող գործողութունն ամբողջութեամբ վերցրած, կատարելով այն միանգամայն ճիշտ, ճարպիկորեն և պատշաճ արագութեամբ, վորպեսզի նրանք հասկանան, թե ինչի պետք է ձգտել և վերջիվերջո նրանցից ինչ է պահանջվելու:

բ) կրկնել նույն գործողութունները դանդաղ, պարզ, բաժանելով մի շարք հաջորդական գործողութունների. միաժամանակ բացատրելով, թե ամեն մի գործողութուն ինչու համար է ծառայում և թե ինչու այսպես, և վոչ թե մի այլ կերպ պիտի կատարել:

գ) կանչել գնդացրի մոտ սովորողներից մեկին, իսկ յեթե հարկ կա, յերկուսին և առաջարկել նրանց կատարելու ցույց տված գործողութունը նախ մաս-մաս, և ապա, աստիճանաբար յուրացնելուց հետո, նաև վողջ գործողութունն ամբողջութեամբ վերցրած:

դ) հասնելով հերթական սովորողի բավարար կատարմանը, կանչել հետևյալին և այլն, մինչև վոր վողջ խմբակը կանցնի սովորեցնողի ձեռք տակից:

162. Ամեն մի սխալ և անճշտութուն անհրաժեշտ է համար-

բառաբանութիւնք պարզել, պահանջելով, վոր սովորողն իր սխալն ինքն ուղղի: Ոգտակար ե սխալներն պարզաբանման և ուղղելու աշխատանքին մասնակից դարձնել նաև հերթի սպասողներին:

163. Հրաձգութեան տեխնիկայի ուսուցման նախապատրաստական պարապմունքներն անպայմանորեն անցկացնել վարժական փամփուռներով:

164. Հրացանաձգի ուսուցման ժամանակ, հրաձգութեան նախապատրաստական պարապմունքներում գործադրվող համարյա բոլոր ոժանդակ գործիքները (նշանառութեան հաստոցներ, հայելներ և անդրադարձնող ապակիներ, որոտակողներ, ցուցաններ և այլն) պիտանի չեն նաև ձեռքի գնդացրով տարվող պարապմունքների համար, պայմանով, վոր դրանց չափերն ու կառուցվածքը հարմար լինեն գնդացրի համար:

ՄԱՐՏՈՒՄ ԿՐԱԿ ՎԱՐԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

165. Այս բաժինը նպատակ ունի գնդացրորդներին մարզել հրաձգութեան բոլոր տեխնիկական գործողութունների շղկապված կատարման մեջ՝ կապակցված վոչ բարդ կրակային խնդիրները լուծելու հետ՝ տարբեր տակտիկական պայմաններում:

166. Այս բաժնի անցնելը գնդացրորդներին պետք է բավականաչափ պատրաստութուն և պրակտիկա տա կրակ վարելու տեխնիկայի մեջ.

- ա) միայնակ և խմբակային նշանների վրա.
- բ) լայն և խոր նշանների վրա.
- գ) բնագծերի և քողարկների վրա.
- դ) անակնկալ հայտնվող և արագ թափնվող նշանների վրա.
- ե) շարժվող նշանների վրա.
- զ) ծածկված դիրքերից և ծածկված նշանների վրա.

ողային նշանների վրա.

է) քամու ժամանակ.

ը) գիշերով, մթնոթյան մեջ և արհեստական լուսավորութեան ժամանակ, նույնպես և մառախուղի մեջ և ձխածածկութի միջոցով:

թ) գազային գրոհը գիմավորելիս (հակագազիրը հագած).

ժ) հարձակման և ընդհանրապես պաշտպանութեան պայմաններում:

167. Կրակ վարելու տեխնիկայի ուսուցման վերաբերյալ պարապմունքները պետք է անցկացնել վոչ զբաղմունքի ընթացքում. դրանք զխավորապես պետք է ընթանան տարրական հրա-

ձգտ-տակտիկական խնդիրները լուծելու ուղղութեամբ, գնդակոծելով թիթե տեղափոխվող թիրախներով կամ կենդանի մարդկանցով արտահայտված նշաններ իրական հեռավորութուններ վրա և տարբեր պարագաներում:

168. Այս բաժնի սկզբնական դասերը, վորոնք կապված են անհրաժեշտ տեսական բացատրութունների, հրաձգութեան աղյուսակներին ծանոթացնելու և նշանառութեան ձևերը ստուգման հետ, կարելի չէ անցնել շենքում կամ բակում կրճատ հեռավորութունների և համապատասխան չափով փոքրացրած թիրախների վրա: Սակայն հետագա պրակտիկան պետք է անպայմանորեն ձեռք բերվի դաշտում և կապակցվի գնդացրորդների ընդհանուր տակտիկական պատրաստութեան հետ:

169. Իբրև այս բաժնի ավարտում և ամրապնդում ծառայում է վարժա-մարտական և մարտական հրաձգութունների կուրսի ա՛ցնումը մարտական բնույթ կրող նշանների վրա և մարտական պայմաններին մոտ դտնվող պայմաններում:

ՌԺԱՆԻԱԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿՆԴԱՑՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԱՆՔԻ ՄԻԱՏԵՂ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՁ

170. Այս բաժնի անցնելը գնդացրորդներին, նախ, պետք է պրակտիկա տա ձեռքի գնդացրի մոտ ոժանդակ գործողութուններ կատարելու մեջ. ինչպես, որինակ՝ պահեստարանների լցնելը, տեղի պատրաստելն ու հարմարեցնելը հրաձգութեան համար, փամփուռների և պահեստարանների բերելը գնդացրի մոտ մարտի ժամանակ, գնդացրի քողարկումը, նրա տեղը փոխելը և ընդհանրապես գնդացրով մարտադաշտում տեղադրվածներ կատարելը և այլն, յերկրորդ, պետք է պրակտիկա տա համարների՝ սկզբում նշանառուի և ոչնականի, և այլա ամբողջ գնդացրային համարանքի միատեղ աշխատանքի մեջ:

171. Պարապմունքները պետք է ընթանան սերտ կապ ունենալով նախորդ բաժինների հետ և պետք է ավարտվեն գնդացրային համարանքի պրակտիկայով՝ ձեռքի գնդացրի մարտական պայմաններին մոտեցող զանազան պայմաններում սպասարկելու և ոգտագործելու մեջ, գնդացրորդների տակտիկական պատրաստութեան և մարտական հրաձգութուններին անցկացնելու կապակցութեամբ:

172. Դասերի ժամանակ լայն չափով պետք է կիրառել համարների փոխադարձ փոխաբերումը. համարներից չուրաքան-

չյուրը պետք է բաժանանաչափ սրակտիկա ստանա գնդացրի մոտ կատարելու բոլոր պարտականութիւններն, անկախ նրա ապագա կոչումից:

173 Պետք է հատուկ ուշադրութիւն դարձնել մարտում գնդացրային համրանքի բոլոր գործողութիւնները քողարկման և թագնովածութեան վրա, ձգտելով, վեր գնդացրային համրանքը բոլոր տեղաշարժումների ժամանակ, զիրքում տեղափոխելիս և հենց կրակային մարտ մղելու ժամանակ, ըստ հնարավորութեան, արտաքուստ վոչնչով չտարբերվի սովորական հրաձիգ շակից:

ՀԱՎԵԼՎԱՆ 1

Ա.Ղ.ՅՈՒՍԱԿ 1

Պիտոյարեղի մեքի գնդացրից արձանի գնդակի նետման յետ անկումները

Նշանակման համարը	Նշանոցային հասողութիւնը		Նետման անկույնը		Անկման անկույնը	
	Մետրերով	Քայլերով	Առաջնանիւթով, չաղարի-րողներով և բորդա-վայրիկայաններով, կաններով	Երկրորդանիւթով	Առաջնանիւթով և բոյակներով	Չաղարի-րողա-կաններով
1	100	140	4'	1,1	5'	1,3
2	200	280	6'30"	1,7	8'	2,2
3	300	420	9'30"	2,5	12'	3,3
4	400	560	13'	3,5	17'	4,7
5	500	700	17'30"	4,8	24'	6,6
6	600	840	23'	6,3	33'	9
7	700	980	29'30"	8,1	44'	12
8	800	1120	37'30"	10,3	58'	16
9	900	1260	47'	12,9	1°16'	21
10	1000	1400	58'	16,0	1°40'	27,5
11	1100	1540	1°11'	19,6	2°10'	36
12	1200	1680	1°26'	23,8	2°48'	46,5
13	1300	1820	1°43'	28,5	3°35'	59,5
14	1400	1960	2°2'	33,8	4°33'	76
15	1500	2100	2°23'30"	39,8	0°44'	96

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Բոլոր թվերը արված են կլորացրած ձևով: Արտա-թողիչի անկույնը = 5'30" (1,6 հազ): Նշանառութեան անկույնը վորոշելու համար նետման անկույնին դու-մարել արտաթուրիչի անկույնը:

ԱՂՅՈՒՒՍԱԿ 2
Գնկալարևի ձևով գնացրի միջին հեռագծի բարձրամալը (իջևիլը)

Մլջիջն հեռագծի բարձրամալը (իջևիլը) ասղից հեռավորությունների վրա՝ մետրերով

Հեռավորություն	100	200	300	400	500	600	700	800	900	1000	1100	1200	1300	1400	1500
1	0	-0,12	-0,42	-0,96											
2	0,96	0	-0,24	-0,72	-1,55										
3	0,14	0,16	0	-0,40	-1,15	-2,28									
4	0,24	0,36	0,30	0	-0,65	-1,68	-3,22								
5	0,37	0,62	0,69	0,52	0	-0,90	-2,31	-4,40							
6	0,52	0,92	1,14	1,12	0,75	0	-1,26	-3,20	-5,94						
7	0,70	1,25	1,68	1,84	1,65	1,09	0	-1,76	-4,32	-7,90					
8	0,92	1,72	2,34	2,72	2,75	2,40	1,54	0	-2,34	-5,70	-10,23				
9	1,18	2,24	3,12	3,76	4,05	3,96	3,36	2,05	0	-3,10	-7,37	-13,08			
10	1,50	2,84	4,05	5,00	5,60	5,82	5,53	4,56	2,79	0	-3,95	-9,36	-16,25		
11	1,85	3,58	5,13	6,44	7,40	7,98	8,05	7,44	6,03	3,60	0	-5,04	-11,63	-19,88	
12	2,27	4,42	6,39	8,12	9,50	10,50	11,0	10,80	9,80	7,80	4,62	0	-6,11	-14,00	-24,00
13	2,74	5,36	7,80	10,00	11,85	13,32	14,28	14,56	14,04	12,50	9,80	5,64	0	-7,42	-16,95
14	3,27	6,42	9,39	12,12	14,50	16,50	18,00	18,80	18,81	17,80	15,62	12,00	6,90	0	-9,00
15	3,88	7,62	11,19	14,52	17,50	20,10	22,20	23,60	24,20	23,80	22,22	19,20	14,70	8,40	0

ԱՂՅՈՒՒՍԱԿ 3

Գնկալարևի ձևով գնացրի միջին ցրտով գնացրանց նշանառուի կալից

Մլջիջն հեռագծի շիբանի չափերը (գնդակների 70° ց-ը) մետրերով

Հեռավորություն	Հատահատ ձևերը			Կալի չափերը			Նորմալ չափերը			Ծանոթություն
	բ	լ	հ	բ	լ	հ	բ	լ	հ	
100	0,10	0,09	90	0,13	0,13	117	0,17	0,17	154	Հավ նշանառուի կողմից հրաձգության մասնակցումը մոտավորապես 1,5 անգամ ավելանում է
200	0,20	0,18	95	0,26	0,25	124	0,34	0,34	162	
300	0,30	0,8	83	0,39	0,38	114	0,50	0,49	147	
400	0,40	0,38	80	0,52	0,51	101	0,67	0,66	134	
500	0,50	0,45	72	0,65	0,65	94	0,85	0,85	121	
600	0,65	0,62	66	0,84	0,80	86	1,09	1,04	113	
700	0,80	0,76	61	1,03	0,95	78	1,33	1,24	106	
800	0,95	0,90	56	1,22	1,10	71	1,58	1,48	93	
900	—	—	—	1,42	1,25	64	1,84	1,68	84	
1000	—	—	—	1,62	1,40	57	2,10	1,82	72	
1100	—	—	—	1,90	1,55	50	2,47	2,02	65	
1200	—	—	—	2,20	1,70	45	2,86	2,21	58	
1300	—	—	—	2,50	1,90	40	3,25	2,47	51	
1400	—	—	—	2,80	2,10	35	3,64	2,73	46	
1500	—	—	—	3,10	2,30	30	4,03	3,00	40	

ՉԵՌՔԻ ԳՆԴԱՅՐԻ ՄԱՐՏԻ ԱՏՈՒԳՈՒՄԸ *

Ըստ հրահանգ. հրձգային զործի 1933 թ. նախագծի

Չեռքի գնդացրերի մարտի ստուգումը կատարվում է միևնույն հիմունքներով, միևնույն դեպքերում, նախապես նույնքան խնամքով գննելով գնդացրին ու ընտրելով փամփուշտներն, ինչպես և հրացանի մարտի ստուգման ժամանակ (տես «Боевая подготовка» 1933 թ. № 10 և 11):

Գնդացրերի մարտի ստուգողների ընտրությունը (2-3 հոգի մեկ վաշտի համար) կատարում է վաշտի (եսկադրոնի) հրամատարը, վորի համար.

ա) լավագույն նշանառուների հետ կոնսորլ հրաձգություն են անցկացնում միևնույն որը և ըտրրի համար, հրաձգության միևնույն գրությունը (պակած նեցուկից):

բ) հրաձգությունը կատարում են վաշտի (եսկադրոնի) լեհու լավագույն ճշոված գնդացրերից.

գ) կրակողներից չուրաքանչյուրը հաջորդաբար ամեն մի գնդացրից իր թիրախին արձակում է 4-աղան հատ-հատ ձիգ, և ապա 2-3 կարճ հերթ (8 փամփուշտ):

Թիրախի գննումը կատարվում է 4 հատ-հատ ձիգերից և ապա կարճ հերթերի սերիալից հետո: Այն նշանառուները, վորոնք հատ-հատ ձիգերով կրակելիս յերեք գնդակից պակաս են դիպրել 15 սմ. արամագիծ ունեցող շրջանին (գաբարիտին), իսկ ավտոմատիկ հրաձգության ժամանակ 6 գնդակից պակաս են դիպրել միևնույն գաբարիտին, զրկվում են գնդացրի մարտի ստուգման պարտականությունները կատարելուց:

Ստուգելուց առաջ գնդացրերը պետք է գննվեն վաշտի (եսկադրոնի) հրամատարի և զինտեխնիկի կողմից մարտական մատակարարման պետի պատասխանատվությամբ, ընդ ամին գնդացրերն անպայման պետք է ստուգված լինեն № 1, 2, 3, 4 կալիբրաչափերով (լեկալներով):

Նկատված բոլոր անսարքությունները պետք է վերացվեն և սարքվեն զինարհետանոցում մինչև գնդացրերի մարտի ստուգման սկիզբը:

Անմիջորեն հրաձգությունից առաջ գնդացրի փողանցքը պետք է մաքրել—չորացնել:

Ստուգումը կատարվում է ձգարանում (տիր) կամ հրաձգա-

* թարգմանվում է «Боевая подготовка» թերթում 1933 թ. հուլիսին լույս տեսած հոդվածը: Ծանոթ. թարգմանչի:

րանում՝ վաշտի (եսկադրոնի) հրամատարի ղեկավարությամբ, ավյալ գեղացրի նեամառուի յեկ ջոկի նեամառարի նեհկայությամբ:


Հրաձգարանում գնդացրի մարտի ստուգումը պետք է կատարել անհոգմ և ըստ նարավորին պարզ յեղանակին:

Թիրախը մի սպիտակ վահան է, վորի բարձրությունը առնվազն 1 մ, իսկ լայնությունը 1/2 մ. է:

Նեամառուրյան կեսք սեկ մի քառակյունի յե, վորի բարձրությունը 30 սմ., իսկ լայնությունը՝ 20 սմ. է, կամ մի սեկ կիսա-տրչան է՝ 30 սմ. տրամագծով, վորն ամրացվում է վահանի մեջտեղում, իրառ ուղղաձիգ զրությամբ:

Հեռակայությունը՝ 100 մետր: Նշանոցը՝ 3. Նշանառության կետի կամ վահանի վրա գունավոր մատիտով կամ կավձով նշվում է կոնտրլ կեսք:

Կոնտրոլ կետի նորմալ բարձրությունը նշանառության կետից նշանոցը 3-ով 100 մետրի վրա կրակելիս, յերք ջերմատիճանը +15° է ըստ Ցեյսիուսի, մթնոլորտի ճնշումը 750 մմ է և գնդակի սկզբնական արագությունն էլ 840 մ/վ. է, հավասար է +16 սմ.:



Նկ. ա. Նշանառության կետի

Որի նորմալ ջերմությունից (+15°) յուրաքանչյուր 10°-ով ջերմության բարձրանալու կամ իջնելու գեպքում կոնտրոլ կետը պետք է համապատասխանորեն բարձրացնել կամ իջեցնել մոտ 2 սանտիմետրով:

Կոնտրոլ կետի նորմալ զրությունը կողքի ուղղությամբ պետք է լինի նշանառության կետի կենտրոնով անցնող ուղղաձիգ զծի վրա: Դրությունը հրաձգության համար՝ պառկած նեցուկից, նեցուկը պետք է հաստատված լինի խնամքով և հուսալի կերպով (առանց թեքված լինելու թիրախի ուղղությամբ): Հրաձգության ժամանակ թուշատրվում է նույնպես ոգտվել փոկից:

Գնդացրի մարտն սկզբում ստուգվում է հատ-հատ ձիգերով (4 փամփուշտ), ապա՝ ավտոմատիկ կրակի կարճ հերթերով (8 փամփուշտ՝ 2-3 հերթով):

Հատ-հատ ձիգերով հրաձգության նպատակն է նախապես ստուգել գնդացրի մարտն այն տեսակետից, թե վորչափով դեպ-

ման միջին կետը համատեղվում է կոնսորդ կետի հետ, հասցնելով դիպման միջին կետը մինչև սահմանված նորման:

Իրա համար նշանառու խնամքով միտրինակ նշան է բըռնում նշանառութիան կետի ներքևի չեզրին, իրար յետևից 4 անգամ կրակում է:

Վաշտի (եսկադրոնի) հրամատարը ծակատները դասավորմամբ վորոշում է զնդացրի մարտի նետի քանակը և հատիկի գազաթի դրութիան մեջ անհրաժեշտ փոփոխություններ է մտցնում:

Ծակատների դասավորմամբ ամենից առաջ վորոշում են զնդացրի մարտի կուսակառույցները: Մարտի կուսակառույցները համարվում են բավարար, յեթե բոլոր 4 ծակատները (ծայրահեղ դեպքում 3-ը) զետեղվում են 15 սմ. տրամագիծ ունեցող շրջանի մեջ:

Յեթե ծակատների դասավորումն այս պահանջին չի բավարարում, ապա զնդացրը նորից պետք է զննվի, նրա հաստումը պետք է ստուգվի, վորից հետո հրաձգությունը կրկնվում է:

Յեթե կրկնված հրաձգությունն անբավարար արդյունք է տալիս, ապա զնդացրը պետք է զինարհեստանոց ուղարկել:

Յեթե ծակատների դասավորումը տալիս է անհրաժեշտ կուսակառույցները, ապա հրամատարը վորոշում է դիպման միջին կետը և նրա դրությունը կոնսորդ կետի նկատմամբ:

Իրպման միջին կետը վորոշվում է այն չեղանակներով, վոր նշված են հրացանի մարտի ստուգման կանոններում:

Իրպման միջին կետը պետք է համատեղվի կոնսորդ կետի հետ կամ կարող է աննշան չափով շեղվել նրանից: Իրպման միջին կետի շեղումը կոնսորդ կետից աջ կամ ձախ, վերև կամ ներքև թույլատրվում է մոտ 2 սմ.:

Յեթե զնդման միջին կետի շեղումը կոնսորդ կետից դեպի այս կամ այն կողմը 2 սմ. ից ավելի չէ, ապա համապատասխանորեն պետք է փոփոխել հատիկի դրությունը:

Հատիկի դրությունը փոփոխելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր նրա գազաթի անցափոխումը 0,5 մմ-ի չափ, 100 մետրի վրա հրաձգություն կատարելիս զնդման միջին կետը տեղափոխում է մոտ 8 սմ.:

Փոփոխելով հատիկի դրությունը և կրկնելով ստուգման հրաձգությունը հատ-հատ ձիգերով, գտնում են հատիկի այն դրությունը, յերբ զնդման միջին կետն ամենից ավելի մոտ է համատեղվում կոնսորդ կետի հետ, կամ առնվազն նրանից շեղվում է մոտ 2 սմ-ով:


Հատ-հատ ձիգերով զնդացրի մարտի ճշտությունն ստուգելուց հետո կատարվում է զնդացրի մարտի վերջնական ստուգումն ավտոմատիկ կրակով և այդ ստուգման հիման վրա տալիս են զնդացրի մարտի պատրաստ լինելու զնահատականը:

Ստուգում կատարելու համար նշանառու առանց շտապելու միևնույն թիրախի վրա կատարում է ավտոմատիկ կրակի 3—4 կարճ հերթ (8 փամփուշտ), խնամքով նշան բռնելով նշանառութիան կետի ներքևի չեզրին և ուղղելով նշանառութիանը յուրաքանչյուր հերթից հետո:

Ծակատների դասավորմամբ թիրախի վրա վերջնականապես վորոշում և զնահատում են զնդացրի մարտը:

Ըստ կուսակառույցի զնդացրի մարտը համարվում է՝ զերտզանց, յեթե առնվազն 6 ծակատ զետեղվում են 12 սմ. տրամագիծ ունեցող շրջանի (գաբարիտի) մեջ, լավ, յեթե առնվազն 6 ծակատ զետեղվում է 15 սմ. տրամագիծ ունեցող շրջանի մեջ. բավարար, յեթե առնվազն 6 ծակատ զետեղվում է 20 սմ. տրամագիծ ունեցող շրջանի մեջ: Ընդ սմին զնդման միջին կետը պետք է համատեղվի կոնսորդ կետի հետ կամ նրանից պետք է հեռու գտնվի մոտ 3 սմ.:

Ավտոմատիկ կրակով ստուգելու դեպքում զնդման միջին կետը վորոշում են հետևյալ կերպ: Բոլոր ծակատներից մի կողմ են թողնում ամենից հեռու ընկածները, բայց մոտ ավելի քան 2 ծակատ: Ներքևից կամ վերևից համրում են մնացած ծակատների կետը և անջատում են հորիզոնական խազով: Նույն ձևով համրում են ծակատների կետն աջից կամ ձախից և անջատում են ուղղաձիգ խազով: Հորիզոնական և ուղղաձիգ գծերի հատման կետը կվորոշի հենց զնդման միջին կետի դրությունը (նկ. բ):



Նկ. Իրպման միջին կետի վորոշելն ավտոմատիկ հրաձգություն ժամանակ
Յեթե ավտոմատիկ հրաձգության ժամանակ զնդման միջին կետը կոնսորդ կետից շեղվել է ավելի քան 3 սմ-ով, ապա զնդացրին ու նրա հաստումը զննելուց հետո (անհրաժեշտութիան դեպքում սարքերուց հետո) պետք է հրաձգությունը կրկնել:

Յեթե հրաձգությունը կրկնելուց և հատիկի դրության կամ գնդացրի հաստման մեջ համապատասխան փոփոխություններ մտցնելուց հետո գնդացրի մարտը չի հաջողվում հասցնել սահմանված նորմային թե կուտակության և թե դիպման միջին կետը կոնտրոլ կետին համատեղելու տեսակետից, այս գնդացրը պետք է ուղարկել զինարհեստանոց՝ զննելու և սարքելու համար:

Յերբ մարտի ստուգումը կհամարվի ավարտված, հատիկի դրությունը նշվում է խաղով՝ հատիկի հիմքի առջևի կտրվածքի և պատյանի վերածուլի վրա, իսկ մարտի ստուգման վերջնական արդյունքը մուծվում է գնդացրի ծառայության գրքույկի հաշվետու քարտի մեջ:

Վաշտերում (եսկադրոններում) պետք է ճիշտ հաշվառում տարվի գնդացրի մարտի վորակի վերաբերյալ՝ գերազանց, լավ, բավարար:


Ամեն մի գնդացր, վոր հասցված է գերազանց մարտի, սեսչական սուգումների ժամանակ ընդունվում է իբրեւ 1¹/₂ միավոր:

Բ Ա Ռ Ա Ց ՈՒ Ց Ա Կ

- Антабка— փոկող
- Баллистика— ձգարանություն.
- Выбрасыватель— նետիչ.
- Выем,— ка— փոս, փորվածք, փորոք.
- Выколотка— հանիչ, փորիչ
- Вырез — կտրուն
- Газовая камора — գազախցիկ
- Газовое отверстие — գազածակ
- Газовый поршень— գազամխոց
- Гайка— մանեկ
- Досылатель (затвора)— մղիչ (փակաղակի)
- Заводная пружина— լարովի զսպանակ
- Загиб — կոովածք
- Зазор — բացակ
- Замыкатель— փակիչ
- Зарез— ճղատ, ճղակ.
- Застежка— ողլակ.
- Зацеп (выбрасывателя)— կեռիք (նետիչի)
- Зашелка— մղլակ.
- Зубец,— цы — առամ,— ներ.
- Извлекатель (гильзы)— հանիչ (սլարկուճի).
- Капсюль— պատիճ.
- Кирка — քլունդ
- Колодка (прицела)— կոճղակ (նշանոցի)
- Колпак— թասակ
- Крючок— կեռ
- Лоток— տաշտակ
- Магазин — պահեստարան
- Маска— քողարկ, դիմակ
- Мишень — թիրախ
- Муфта — պատյան, մուֆտա.
- Мушка— հատիկ
- Нагар— ալյուք
- накладка— վերադրվածք

Нарезка—*փորակ*
Недолет—*չհաս, (ուժ)*
Обод—*շրջանակ*
Оборот (винта)—*պտույտ (պտուտակի)*
Обрез—*կտրվածք, շուրթ*
Обруч—*ողակապ*
Ограничитель—*սահմանափակիչ*
Отражатель—*անդրադարձիկ*
Паз—*փորատ*
Пакля—*խճուժ*
Перекоз (патрона)—*թեքվելը (փամփուշտի)*
Перелет—*անդրանցում, անցում*
Перестрелка—*կրկնահրաձգություն, հրացանահրաձգություն*
Петля—*մերք*
Пирамида—*բուրգ*
Пламегаситель—*բոցամարիչ*
Пластика—*թիթեղնիկ*
Плоскость (стрельбы)—*հարթություն (հրաձգության)*
Подаватель—*ավիչ*
Подъемник—*վերամբարձիկ*
Предохранитель—*ապահովիչ, պահպանիչ*
Прерывчатые кольцевые выступы—*ընդհատու ողածի լեյուններ*
Приемник—*ընդունիչ*
Приклад—*կոթ*
Прилив—*վերածուլիկ*
Пристрелка—*փորձնական հրաձգություն, փորձահրաձգություն*
Прожектор—*լուսարձակ*
Прорезь—*կտրուկ, ձեղք, դիտոց*
Прорыв газов—*գազերի պոռթկում*
Пулеметный расчет—*գնդացրային համրանք*
Пятка—*կրունկ*
Ракета—*հրթիռ*
Рама (спусковая)—*շրջանակ (վայրիջուց)*
Раструб—*լայնարեերան խողովակ*
Регулятор—*կանոնավորիչ*
Резьба—*քանդակ*
Ремень—*փոկ*
Рикошет—*գետնաշուփ, ուկոշետ*
Риска—*խազ, հիմնախազ*
Рогулька—*խեչակ*
Рубеж—*բնագիծ*

рукоятка—*բռնակ*
Рычаг (спусковой)—*լծակ (վայրիջուց, ձգանի)*
Скатка (шинели)—*կոլոլ (զրատի)*
Скоба (спусковая)—*կամրջակ (վայրիջուց ձգանի)*
Скос—*թեքատ*
Сосок—*պտուկ*
Сошка—*նեցուկ*
Смазка—*քսուք*
Снаряд—*արկ*
Спусковой крючок—*վայրիջուց ձգան*
Срез—*կտրվածք*
Стойка—*մութակ*
Стрельба на поражение—*հարվածման հրաձգություն*
Стрельбище—*հրաձգարան, հրաձգավայր*
Траектория—*հետագիծ*
Труба—*խողովակ, փողակ*
Тряпка—*լաթ*
Указка—*ցուցան*
Уступ—*չեղքաշ*
Утыкание патрона—*դեմ ընկնելը փամփուշտի*
Фонарь потайной—*գաղտալույս լապտեր*
Ходовой винт—*շարժուն պտուտակ*
Хомут—*իկ—անուր, ըիկ*
Шейка (приклада)—*ճիտ (կոթի)*
Шептало—*ատամ*
Шпилька—*կամիկ*
Шплинт—*շպլինտ*
Целик—*ուղղան*
Цель—*նշան*
Чашка—*թառ*
Чехол—*շապիկ*
Щит—*իկ—վահան, իկ*



Յ Ա Ն Կ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Է

	62
Գնդացրի մարտական հասկություններ	3
Գնդացրի կազմությունը	
Ընդհանուր հասկացողություններ	4
Գնդացրի մասերի նկարագրությունը	5
Գնդացրի մասերի փոխադրեցությունը	
Մասերի դրությունը մինչև լցնելը	17
Մասերի աշխատանքը լցնելու ժամանակ	18
Մասերի աշխատանքը ձեռք կատարելիս	19
Գնդացրի քանակն ու ստրեյլը	
Գնդացրի քանակը	21
Գնդացրի ստրեյլը	24
Պահեստարանի քանակը	25
Պահեստարանի ստրեյլը	25
Գնդացրի զննությունը յնվ հրաձգության համար պատրաստելը	
Ընդհանուր դրություններ	26
Կանոնավորելի գազաձակերի հաստումը	27
Պահեստարանի լցնելը փամփուշտներով	28
Պահեստարանի դատարկելը	28
Գնդացրը պոստելու յնվ խնամելու կանոնները	28
Պահեստարանի քանակը	30
Խափանումներ հրաձգության ժամանակ յնվ նրանց վերացնելու	
միջոցները	32
Ամենից բնորոշ խափանումները	32
Խափանումների վերացնելը հրաձգության ժամանակ	3
Խափանումների կանխման միջոցներ՝ հրաձգության ժամանակ	38
Մ Ա Ս Ն Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ	
Ձեռքի զնդացրով հրաձգելու կանոնները	
Ընդհանուր ցուցումներ	39
Գնդացրորդների պարտականությունները	39

Տեղի ընտրությունը հրաձգության համար	41
Հրաձգության տեխնիկան	
Հրաձգության պատրաստվելը	42
Պահեստարանի միացնելը և գնդացրի լցնելը	45
Նշանի ընտրությունը	46
Կրակի տեսակի և կրակ բանալու մոմենտի ընտրությունը	46
Նշանոցի և ուղղանի ընտրությունն ու հաստումը.	48
Նշանառություն	49
Հրաձգություն կատարելը	50
Կրակի դադարեցնելը	52
Կրակ վարելու տեխնիկան մարտում	53
Փորձնական հրաձգություն	54
Հարվածող հրաձգություն	54
Միայնակ և խմբակային նշանների, քնագծերի և քողարկիները գնդակոծումը	54
Անակնկալ հայտնվող, արագ թագնվող և շարժվող նշանների գնդակոծումը	56
Հրաձգություն քամու ժամանակ	59
Հրաձգություն կիսամածի դիրքերից և ծածկված նշանների վրա	60
Հրաձգություն ողակին նշանների վրա	61
Հրաձգություն գիշեր ժամանակ	63
Փամփուշտների մատակարարումը	65

Մ Ա Ս Ն Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Կարճ մեքուպական ցուցումներ զնդացրորդի պատրաստության վերաբերյալ	
Ընդհանուր ցուցումներ	66
Ձեռքի գնդացրի ուսումնասիրությունը	67
Տեսական տեղեկությունների ուսումնասիրություն՝	
Գնդացրի ձգաբանության վերաբերյալ	69
Հրաձգային հետախուզություն, մարտադաշտի դիտողության և հեռավորություններ վորոշելու ուսուցումը	70
Ձեռքի գնդացրով կրակելու տեխնիկայի ուսուցումը	71
Մարտում կրակ վարելու տեխնիկայի ուսումնասիրությունը	72
Ռեզուլտատի պարտականությունների ուսումնասիրություն և պրակտիկա գնդացրային համրանքի միատեղ աշխատանքի մեջ	73

Հավելվածներ
 1. Հրաձգության ազդուսակներ 1, 2, 2
 2. Ձեռքի գնդացրի մարտի ստուգումը

30

ՀՀ Ազգային գրադարան



NL0937623

ԳԻՆԸ 1 Ռ.

1934p. - 645

II
27922



Временное руководство по подготовке
пулеметчика при ручном пулемете Дегтярева

Гиз ССР Армения, Эриawan, 1984